

24023

Պ. ԿՈՒԼԱԿՈՎ

86

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
Ս Ո Ց Ի Ա Լ Ի Ս Տ Ա Կ Ա Ն
Վ Ե Ր Ա Կ Ա Ռ ՈՒ Ց ՈՒ Մ Ը

6



331.87

4-91



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1932

115 JAN 2010

Պ. ԿՈՒԼԱԿՈՎ

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ

Ս Ո Ց Ի Ա Լ Ի Ս Տ Ա Կ Ա Ն

Վ Ե Ր Ա Կ Ա Ռ Ո Ւ Ց Ո Ւ Մ Ը

Թարգմ. Հ. Մազմ.

86

10572

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՇՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ»
1932

ՌՈՍՏՐԿ-ԴՈՆ

29 MAY 2013

24023

ԾԻԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ — 2. ԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՃՅՈՒՂ

«Հիմա մեզանում շինարարու-
թյան նոր ժամանակաշրջանն է, սոցիա-
լիզմի հիմունքով ամբողջ ժողովրդական
անտեսությունը վերակառուցելու ժա-
մանակաշրջանը» (Ստալին):

Հյուսիսային Կովկասը, գյուղատնտեսության սոցիա-
լիստական վերակառուցման առաջավոր յերկրամասը, վորը
հիմնականում ավարտել է համատարած կոլեկտիվացումն ու
նրա հիմունքով կուլակության վերացումն իբրև դասակար-
դի, Համկոմկուսի (բ) Կենտկոմի ու Յերկրկոմի բողոքիչան
հաստատուն ղեկավարությամբ—վճռական հաջողություն-
ների ձեռք բերեց սոցիալիզմի հաղթանակի համար մղվող
պայքարում: Ազրաբային—ինդուստրիալ յերկրամասը դա-
նում է ինդուստրիալ-ազրաբային: Հնգամյակի յերրորդ,
վճռական տարում մեր յերկրամասի կոլտնտեսությունները,
1930 թվականի համեմատությամբ, յերկու անգամ ավելա-
ցրին իրենց անտեսության ընդհանուր յեկամուտը: Մեկ և
կես անգամ ավելացել է կոլտնտեսականի յեկամուտը: Կոլ-
տնտեսությունները մեկ և կես անգամ ավելացրել են ի-
րենց հիմնական ֆոնդերը (շենքերով, ինվենտարով և այլն):

Հյուսիսային Կովկասում գյուղատնտեսության սոցիա-
լիստական վերակառուցումը սերտորեն կապված է նրա
մասնագիտացման հետ՝ բարձր-ապրանքային, արդյունաբե-
րական-տեխնիկական կուլտուրաների զարգացման հիմուն-
քով: Գյուղատնտեսության այնպիսի ճյուղերն, ինչպիսին
են՝ ձխախոտագործությունը, բամբակագործությունը, այ-
գեգործությունը և այլն, հսկայական ճշանակություն ունեն
յերկրամասի գյուղատնտեսության զարգացման գործում:



3660
41



КНИГОИЗДАТЕЛЬСТВО
«СЕВЕРНЫЙ КАВКАЗ»

Այս մասնաճյուղերի ցանքերի տարածութեան և ընդհանուր արտադրանքի տեսակարար կշիռը բավական նշանակալից է յերկրամասի ու ԽՍՀՄ-ի թեթև արդյունաբերութեան ընդհանուր զարգացում:

Ծխախոտագործութեան զարգացման վերաբերմամբ Հյուսիսային Կովկասին առաջին տեղն է պատկանում Խորհրդային Միութեան մեջ: 1930 թվականին Հյուսիսային Կովկասին բնկնում էր ԽՍՀՄ-ում ծխախոտերի ամբողջ ցանկատարածության 53 տոկոսը:

ԽՍՀՄ ծխախոտագործական խորհրդանտեսութեաններին արտադրած ամբողջ ծխախոտային հումուլթի 60 տոկոսը տալիս են Հյուսիսային Կովկասի խորհրդանտեսութեանները: Մեր յերկրամասը սեփական ծխախոտագործական արդյունաբերութեանը տալիս է 80 տոկոս հումուլթ, վորը վերարտադրվում է Խորհրդային Միութեան ծխախոտագործարաններում: Բավական մեծ է ծխախոտագործութեան տեսակարար կշիռը նաև յերկրամասի ժողովրդական տնտեսութեան մեջ: Ծխախոտը կազմում է բոլոր հատուկ տեխնիկական կուլտուրաների բերքահավաքի 50 տոկոսը և յերկրամասի ամբողջ դաշտագործական արտադրանքի մոտ 10 տոկ:

Լինելով տեխնիկական կուլտուրա, ծխախոտը հսկայական նշանակութեան ունի ԽՍՀՄ ժողովրդական տնտեսութեան աճման համար, վորպես արդյունաբերական և միևնույն ժամանակ արտաձվող կուլտուրա: Սակայն վերջին տարիներս ԽՍՀՄ ծխախոտագործական արդյունաբերութեանը աշխատում է վոչ լրիվ բեռնվածութեամբ, շնորհիվ ծխախոտի հումուլթի պակասութեան: Սա առանձնապես կարևոր նշանակութեան է տալիս յերկրամասի գյուղատնտեսութեան ծխախոտագործական մասնաճյուղին:

Մեր արտածած ապրանքների մեջ ծխախոտը քիչ տեղ չի բռնում: Այս կուլտուրան ոժտնդակում և մեր յերկրի ինդուստրացման, քանի վոր նրա փոխարեն մենք ներմուծում ենք մեքենաներ և սարքավորանք՝ սոցիալիստական արդյունաբերութեան համար:

Ծխախոտագործութեանը, վորպես գյուղատնտեսութեան հատուկ մասնաճյուղ, յերկրամասի առանձին ծխախոտագործական ռայոնների համար հանդիսանում է հիմնական, վնասողական: Գրեթե բացառապես ծխախոտագործութեամբ զբաղվող ռայոնների թվին են պատկանում Մայկոպի, Ապշերոնի, Մոչու, Գեղենջիկի, Հայկական, Հունական, Գարայի Կլուչի, Աբխյան, Սեվերյան և այլն ռայոնները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՆԱԶԱՆ ՄԱՍՆԱՃՑՈՒՂԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԾՆԱՆՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ*

ՆՆԵՐ		Միջին տարածութեանը, վոր ընկնում է առն և մի տնտես. և վորտեղ ցանվում է՝					
		Ծխախոտ		Ուրիշ դաշտային կուլտուրաներ		Այգիներ և խաղողաբուծարաններ	
		Գեա.	Փանի տոկոս	Գեա.	Փանի տոկոս	Գեա.	Փանի տոկոս
Սաչու	1923 թ.	0,57	25,4	1,63	72,8	0,04	1,8
	1924 թ.	1,10	32,5	1,35	66,5	0,04	1,0
	1925 թ.	1,95	50,0	1,9	28,5	0,05	1,3
Տուսիսկյի	1924 թ.	1,66	66,9	0,75	30,2	0,1	2,9
	1925 թ.	2,08	54,4	1,5	39,2	0,25	6,4
Գեղենջիկի	1924 թ.	0,27	11,2	2,18	85,9	0,7	2,9
	1925 թ.	0,31	12,9	1,7	71,4	0,38	15,7
Նախի. Կուրանի շրջ. ռայոն	1923 թ.	1,4	31,8	2,96	68,2	—	—
	1924 թ.	1,6	31,8	3,5	68,1	0,005	0,1
	1925 թ.	2,4	42,9	3,2	57,0	0,005	0,1

Այս աղուսյակից յերևում է, վոր հիշյալ ռայոններում ծխախոտի ցանքերով զբաղված է յեղի գյուղացիա-

* Ծխախոտագործութեանը Հյուսիսային Կովկասում Հրատարակութեան Լ. Կ. Յեկր. ԲՊՏ, 1926 թ. Խոստով-Դոն:

կան տնտեսութիւնները մշակած հողերը 25-ից մինչև 75 տոկոսը:

Յերկրամասում ծխախոտի ցանքերը տարածութիւնն ամեն տարի փոփոխվել է, նայած այն հանգամանքին, թե այս կամ այն տարում անհատականի համար վոր կուլտուրայի ցանքն է ձեռնտու լիզել:

Համատարած կոլեկտիվացումը և նրա հիմունքով կուլակութեան, վորպես դասակարգի, վերացումն յերկրամասում արմատապես փոխեցին ծխախոտագործութեան գրութիւնը: Կոլտնտեսութիւնները և խորհրդանտեսութիւնների ցանքերի տարածութիւնը դարձավ կայուն և իր չափով բավական խոշոր: Ծխախոտագործական կոլտնտեսութիւններն իրենց գոյութեան միայն առաջին յերկու տարում ապահովեցին յերկրամասում ծխախոտերի ցանքերի աճն ավելի քան յերկու անգամ, իսկ ընդհանուր արտադրանքի աճը—մեկ ու կես անգամ ավելի—համեմատած 1913 թվականի հետ, յերբ առավել մեծ չափով եր զարգացած ծխախոտագործութիւնը:

Այժմ վճռականապես ձեռնարկված է ծխախոտագործութեան վերածումը կոլտնտեսութիւնների հատուկ մասնաճյուղի՝ ծխախոտագործական ապրանքային, կոլտնտեսային ֆերմաներ կազմակերպելու հիմունքով: Այսպիսով ճշխարտագործութիւնը դառնում է կոլտնտեսային սոցիալիստական յերկրագործութեան բարձր-ապրանքային և ձեռնտու մի մասնաճյուղը:

Անցյալում ծխախոտը դուրդատնտեսութեան ամենաշատ աշխատանք պահանջող կուլտուրաներից մեկն էր: Մեկ հեկտար ծխախոտի տունկի և մշակման համար տարեկան պահանջվում եր վոչ պակաս, քան 450—500 մարդ-որ: Կապիտալիստական իրավակարգի ժամանակ որինական դարձած այս ճաշատանքի պահանջը պատմականորեն առաջ յեկավ այն պատճառով, վոր ծխախոտի պլանտացիայում բատրակի կատարած աշխատանքը վոչինչ չարժեք այդ պլանտացիայի տիրոջ համար: 14—16 ժամյա բանվորական որ և որական 30—40 կոպեկ վաստակ—ահա բատրակի

ազինը մինչ հեղափոխական ծխախոտային պլանտացիաներում: Բանվոր ձեռքերի եծանութիւնն ու մշտական աւելցումն էյին այն գլխավոր պատճառը, վորով ծխախոտային պլանտացիաների տերերը հրաժարվում էյին ծխախոտագործութեան մեջ կիրառել մեքենայացումն ու սոցիալնալացումը:

Ծխախոտի տունկի և մշակման տեխնիկան անփոփոխ եր քնում ամբողջ տասնյակ տարիների ընթացքում, սկսած այն ժամանակից, յերբ յերկրամասում սկիզբ առավ ծխախոտագործութիւնը, այսինքն 1864 թվականից:

Մորհոտնտեսութիւններն ու կոլտնտեսութիւնները, արդեն իրենց զարգացման ավյալ ետապում, ապացուցեցին վերը հիշված ճաշատանքի պահանջի՝ վոզջ անհեթեթութիւնը և անհատական տնտեսութիւնների համեմատութեամբ, զգալի չափով իջեցրին բանվորական ուժի գործադրութիւնը:

Յեթե անհատական տնտեսութիւններում 1 հեկտար ծխախոտի տունկի և մշակման համար բանվորական ուժի ծախսումը 1930 թվականին ընդունենը 100 տոկոս, ապա կոլտնտեսութիւններն այդ 1930 թվականին բանուժ զործադրել են միայն 82 տոկոսով, իսկ 1931 թվ.—60 տոկոսով: Սրանով մի ավելորդ անգամ հաստատվում է խոշոր, կոլեկտիվ տնտեսութեան և կազմակերպված հասարակական աշխատանքի առավելութիւնն անհատականի հանդեպ:

ՄՍՀՄ-ում չկան գործազուրկներ, ինչպես և չկա վարձու ձորտութիւն: Կառուցվող սոցիալիզմի յերկրում ամեն մի աշխատանք պետք է լինի արտադրողական և այս արտադրողական աշխատանքի յուրաքանչյուր ժամը պետք և ոգտագործել յերկրի արտադրական ուժիերի առավելագույն զարգացման համար:

Ահա թե ինչու ծխախոտագործութեան մեջ, վորպես դուրդատնտեսութեան ամենից շատ աշխատանք պահանջող մասնաճյուղի մեջ, առանձնահատուկ կարեւորութիւն են ստանում այդ մասնաճյուղի ամենաարագ սոցիալիստական

վերակառուցման հարցերը (իսկ այդ վերակառուցումը տեղի
յի ունենում կողմնատեսությունների կազմակերպչական-տն-
տեսական ամրապնդման, կողմնատեսային խոշոր ապրանքա-
յին ծխախոտագործական Ֆերմաներ ստեղծելու հիմունքով,
ծխախոտագործության տեխնիկայի վճռական մեքենայաց-
ման ու ռացիոնալացման և բերքատվության բարձրացման
հիմունքով):

Համկոմկուսի (բ) Յերկրկոմը, Յերկրգործկոմը և Յերկր-
կողմնամիությունը իրենց՝ 1932 թվականի հունվարի 12-ի
միացյալ վորոշումը, — վորը հավանություն գտավ 7-րդ յեր-
կրկուսկոնֆերենցիայի կողմից, — այս բնագավառում վորպես
մեկը հիմնական խնդիրներից, առաջադրեցին կողմնատես-
ությունների աշխատանքների մեքենայացման խնդիրը:

Մինչև 1932 թվականի բերքահավաքման կամպանիան
պիտի կազմակերպվեն մեքենա-տրակտորային կայաններ
յերկրամասի բոլոր խոշոր գյուղերում, վորոնք ունեն 15-20
հազար հեկտար ցանքային տարածություն: 1933 թվականին
նախկին Կուբանի շրջանի ռայոնների բոլոր կողմնատե-
սություններում պետք է ավարտվի վարի, ցանքի ու բերքա-
հավաքի մեքենայացումը: 1934 թվականին կավարտվի նաև
գյուղատնտեսական պրոցեսների մեքենայացումը յերկրա-
մասի բոլոր ազգային մարզերում և ննացած ռայոններում,
ուրեմն նաև ծխախոտագործության ռայոններում:

Սոցիալիստական ծխախոտագործության մեքենայաց-
ման ու ռացիոնալացման խնդիրն ամենահրատապ խնդիրնե-
րից մեկն է: Մեզանում կան այդ խնդիրները առաջիկա
2—3 տարում լուծելու բոլոր հնարավորությունները: Հյու-
սիսային Կովկասի բոլշևիկներն այդ հնարավորությունը
պիտի դարձնեն իրականություն: Յերկրամասի սոցիալիս-
տական ծխախոտագործությունը պետք է դառնա սոցիա-
լիստական յերկրագործության ինդուստրիալ-արդյունաբերա-
կան մասնաճյուղը, իսկ նրանում զբաղված կողմնատեսակա-
նների աշխատանքը — ինդուստրիալ աշխատանքի տեսակ-
ներից մեկը:

Հանձինս խորհրդատեսական ու կողմնատեսական ծխախո-
տագործություն, յերկրամասի և Սորհրդային Միություն
ծխախոտի արդյունաբերությունը պետք է ունենա և կունե-
նա բարձրորակ ծխախոտային հումքի մի կայուն բազա:

«ԺԱՆԱՆԳՈՒԹՅՈՒՆ», ՎՈՐԻՑ ՄԵՆԷ ԿՐԱԺԱՐՎԵՑԻՆԷ

Հյուսիսային Կովկասում մինչև համատարած կոլեկտի-
վացումը ծխախոտագործության սպառման զարգացումը
բաժանվում է յերկու ժամանակաշրջանների — մինչև հեղա-
փոխական և հետ հեղափոխական:

Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռու-
սաստանում» աշխատության մեջ Ռուսաստանի մինչհեղափո-
խական ծխախոտագործությունը բնորոշում էր վորպես
«առեւտրական հողագործության զարգացման ձեւերից մե-
կը, վորը առանձնապես ռեալ կերպով ցույց է տալիս յերկրա-
գործության վերածումը իրենվ կապիտալիստական հաստ-
բակություն արդյունաբերության ճյուղերից մեկը»:

Մինչև հեղափոխությունը ծխախոտագործության զար-
գացումը համարյա թի ամբողջովին հիմնվում էր վարձու
աշխատանքի վրա: Գործազրկում եյին գյուղատնտեսական
բանվորների և մանր ծխախոտագործների շահագործման
ստրկական պայմանները:

Հին գյուղի բնակչության կապիտալիստական դիֆֆե-
րենցիացիան (շերտավորումը) ամենացայտուն կերպով տե-
ղի յեր ունենում ծխախոտագործական ռայոններում: Առաջ
եր դալիս միանգամայն պարզորոշ կապիտալիստական վեր-
նախավը, վորն իր ձեռքում կենտրոնացնում էր բոլոր ծը-
խախոտացանքերի՝ մասը: Այս ծխախոտացանքերը մը-
շակում եյին վարձու բանվորները:

Մինչհեղափոխական ծխախոտագործության մեջ յե-
զամ ստրկական շահագործման հարցի մասին Լենինը գրում
եր հետեւյալը.

«Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր այստեղ (ծը-
խախոտագործության մեջ. — Գ. Կ.) արտագրության կապի-

տալիստական կազմակերպումը հարակցվում էր առևտրական կապիտալիզմի ամենաուժեղ զարգացմամբ և ամեն տեսակի շահագործմամբ՝ արտադրության շրջանից դուրս: Մանր ծըխախտագործները չունեն ծխախոտի չորանոցներ, հնարավորություն չունեն ֆերմենտացիայի յինթարկել ծխախոտը և ծախել այն (3—6 շաբաթ հետո) պատրաստի դրությունը: Նրանք ծխախոտը անպատրաստի, կես գնով վաճառում են գնումներ կատարողներին, վորոնք հաճախ իրենք էլ են ծխախոտ ցանում կապարով վերցրած հողերի վրա» (Լենին, հատ. III, հրատ. 1. էջ 240):

Ռուսաստանի մինչ հեղափոխական ծխախոտագործության լենինյան բնորոշումը ամբողջովին վերաբերվում է նաև Հյուսիսային Կովկասի այն ժամանակվա ծխախոտագործության:

Հողի սարկական կապալավարձը, բանվոր-բանտակներին և չքավոր ու սակավազոր միջակ մանր ծխախոտագործներին ամենադաժան շահագործումը Հյուսիսային Կովկասի պայմաններում գործադրվում էլին ավելի ևս լայն ծավալով:

Հոկտեմբերյան հեղափոխությունն արմատապես փոխեց ծխախոտագործության զարգացման ուղղությունը խորհրդային իշխանության պայմաններում:

Վոչնչացվեց հողի սարկական կապալատվությունը, խստորեն սահմանափակվեց կապիտալիստական խոշոր տնտեսությունների աճը:

Հետհեղափոխական շրջանում մեր յերկրամասի ծըխախոտագործական ուսյոնների գյուղը հիմնականում «միջակացավ»:

Հետհեղափոխական շրջանում, մինչև համատարած կոլեկտիվացումը, ծխախոտագործությունը յերկրամասում զարգանում էր մանր և մանրադույն դյուղացիական անհատական տնտեսության հիմունքով: 11-րդ էջի աղյուսակով տալիս ենք խորհրդային ծխախոտագործության «յերեկվան որվա» բնույթադիժը Հյուսիսային Կովկասում.—

Այդ աղյուսակը ցույց է տալիս, վոր մինչև համատար-

Տարի	Տունի տարածությունը		Միախոտագործ տնտեսությունների թիվը		1 տնտեսության տունի միջին տարածությունը	1 հեկտարի վրա միջին արտադրություն	Բերքահայելի ընդհանուր շաիր (տոններով)	
	Քմադից	%	Քմադից	%			Քմադից	%
	1921	895	5.4	2,983			52.4	0.3
1922	9000	54.5	11,250	197.0	0.8	9.0	8,100	42.6
1923	10,000	60.6	11,100	196.8	0.9	10.0	10,000	52.6
1924	22,880	138.2	21,000	369.2	1.09	11.4	26,083	142.6
1925	15,400	93.3	19,756	847.3	0.78	10.6	16,324	86.5
1926	20,350	123.3	22,610	397.2	0.9	10.0	20,350	107.2
1927	20,971	127.1	26,885	172.3	0.78	8.6	18,035	95.0
1928	19,275	110.8	31,208	548.4	0.6	10.0	18,474	97.3
1929	17,000	103.0	31,000	544.8	0.55	9.76	6,600	37.5

րած կոլեկտիվացումը ծխախոտագործական արդյունաբերության հումույթային բազան անվորոշ էր: Արդյունաբերությունը վոչ միայն մնում էր լրիվ չմանրաբեռնված, այլ և մերթ կանդ էր առնում հումույթի պակասության պատճառով: Յուրաքանչյուր դյուղացիական տնտեսություն միջին թվով հանձնում էր արդյունաբերության և արտածման (եքսպորտի) համար վոչ ավելի, քան 0,5 տոնն ծխախոտ: 1929 թվին Հյուսիսային Կովկասում կային ավելի քան 30 հազար «սպրանք արտադրողներ»:

Յերկրամասի ծխախոտագործության պատմության միջ առանձնապես ծանր և 1921 թվականը, յերբ պարզ յերեվում են քաղաքացիական պատերազմի հետեվանքները Հյուսիսային Կովկասում, հետեվանքներ, վորոնք, ծխախոտագործությունը հասցրին կատարյալ անկման:

Յերկրամասում ծխախոտագործությունը 1921 թվին կարելի յե ասել, համարյա վոչնչացված էր: Նախապատեսակման—1913 թվի համեմատությունում 5,4 տոկոս ծխախո-

տացանք, 1,65 տոկոս ընդհանուր բերք — ահա այն ամենը, ինչ վոր մենք ունեցանք 1921 թվին:

Միայն կուսակցութեան ու կառավարութեան վճարահան միջոցառումների հետեւանքով ձխախտագործութեանը զուրս բերվեց այն փակուղուց, վորի մեջ նա մտել էր իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմի հետեւանքով:

Յերկրամասում ձխախտագործութեան վերելքին ու վերականգման նպատակներն իրամական ու նյութական ուժաշնորհակութեանները (արդյունաբերական ապրանքներ, պարեն), վոր խորհրդային կառավարութեանը հասցնում էր ձխախտագործական ուսյունների գյուղացիութեանը:

Սակայն այդ ոգնութեանը, վոր հասցվում էր սասնյակ հաղարավոր գյուղացիական տնտեսութեաններին, տնտեսութեանների կոտորակվածութեան շնորհիվ չէր կարող ձխախտագործութեանը հասցնել պատշաճ բարձրութեան:

Բանն ավելի վատ էր ձխախտագործական արտադրանքի վորակի վերաբերմամբ: Զորս տարվա ընթացքում 1926—29 թ. ձխախտի վորակն և ձխախտային արտադրանքի վաճառման արժեքը բնորոշվում է հետեւյալ տրվյալներով.—

1926-29 թ. թ. ԵՆԱՆՈՏԻ ԲԵՐԻԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՆԵՐԸ

Ռայոններ	Ձխախտի տեսակները % 9' -ով					1 տոնն ձխախտի արժեքը ուրլ.				
	Ընդհանուր արտադրանքը % -ով					Սոսան	Աւեժողի մի գնելը	Փաստորեն վճարված է	% %	
	№ 50 բ. տ.	№ 40 I-ին տ.	№ 30 II տ.	№ 20 III տ.	№ 10 IV տ.					
Կուբան	100	0,14	1,18	5,54	23,82	42,16	27,16	689,3	560,2	82,7
Մալոսոլ	100	0,31	2,24	6,46	30,82	36,48	23,69	805,2	632,1	78,5
Սև ծով շ. (վորս)	100	—	0,56	5,08	22,76	66,43	5,22	689,3	543,8	77,8
Սև ծով շ. (մեծ տի)	100	—	5,33	19,78	24,53	48,29	3,07	1024,0	954,8	93,0

Այս տվյալները ցույց են տալիս, վոր ձխախտի խտանը և IV տեսակը կաղմում են նրա ընդհանուր քանակի 50-70 տոկոսը: 1929 թվականին կուբանի առանձին գյուղացիական տնտեսութեանները 1 հեկտարից միայն 400 ուրլը ձխախտ էլին հանձնել: Մինչդեռ նորմալ բերքի ու վորակի դեպքում արժեքը հասնում է 800—1000 ու.:

Ձխախտի ցածր վորակը պակասեցնում էր մեր արտածումը սասնյակ միլիոնավոր ուրլիներով:

Վորսնք էլին ձխախտի ցածր վորակի պատճառները: Ամենից առաջ նրա վատ մշակումը, վատ բերքը, վոր արդյունք էր անհատական տնտեսավարման: Սակավազոր տնտեսութեաններում հաճախ ու հաճախ բացակայում էլին նույնիսկ ամենահասարակ տեխնիկական կառուցումները՝ ձխախտը մշակելու և սահպանելու համար: Այդպիսի տնտեսութեաններում ձխախտը չորացվում էր ցանկապատերի, տան պատերի վրա և այլն: Ձխախտն անձրևի տակ էր մնում, կամ նրան քամին էր տանում: Պակասում էր նրա վոշ միայն վորակը, այլ և քանակը:

Ահա թե կոլտնտեսութեաններն ինչձառանգութեամբ բանեցին ձխախտագործութեան սոցիալիստական վերակառուցման ճանապարհը, այդ ֆրոնտում տանելով մի շարք խոշորագույն և վճարական հաղթանակներ:

ԿՈՆՏՆՏԻ ՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅԲԱՐԸ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԾԻԱՆՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

Յերկրամասի ձխախտագործական ուսյունների առաջ համատարած կոլեկտիվացման և նրա հիմունքով կուլակութեան իբր դասակարգի վերացման հարցերը իրենց ամբողջ մեծութեամբ ծառայան հենց 1930 թվին, առաջին բուլշևիկյան դարնանը:

1930 թվականի դարունը ձխախտագործական ուսյուններում նոր ելքեր բացեց այն վիթխարի հաղթանակների պատմութեան մեջ, վորոնք ձեռք էլին բերվում սոցիալիստական ձխախտագործութեան համար մղվող պայքարում:

Արդեն 1930 թվականին կոլտնտեսությունները վոչ միայն կարողացան ցանել լիկվիդացիայի յենթարկված կուլակային տնտեսությունների ցանքատարածությունները, այլ և զգալի չափով ավելացնել ծխախոտի ցանքատարածություններն՝ անցյալ տարիների հանդեպ:

1930 թվականին կոլտնտեսությունները յերկրամասում մեկ տնտեսության հանդեպ միջին թվով 2 և կես անգամ ավելի ծխախոտ տնկեցին, քան 1929 թվականի մեկ տնտեսության ընկնող միջին տունկը: Յեթե 1929 թվականին անհատական տնտեսություններում ծխախոտատունկի միջին տարածությունը հավասար էր 0,55 հեկտարի (մի տնտեսության), ապա կոլտնտեսություններում համախմբված քատրակները, չքավորներն ու միջակները ապահովեցին կոլտնտեսության մեջ յեղած ամեն մի տնտեսության ծխախոտատունկը 1,3 հեկտարի չափով: Կոլտնտեսություններում ծխախոտը ցանվում էր վոչ թե 0,5 հեկտար և զրանից էլ պակաս, չնչին տարածությունների վրա, այլ 200—300 հեկտար համատարած տնկարաններում:

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈՒԵԿՏԻՎԱՅՄԱՆ ՅԵՎ ԿՈՒՆՏԵՍԱՅԻՆ ԾՐ-ԽԱՆՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՅԵՐԿԻՐԱՄԱՍԻ ԾԽԱՆՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

Տարիներ	Գյուղատնտեսության մեջ կուլակային տնտեսությունների տարածությունը % -ով, յերկրածխախոտագործության ներքում	Ամբողջ յերկրամասի ծխախոտացանքի տարածությունը		Ծխախոտի ցանքատարածությունները ամբողջ ցանքատարածության հանդեպ	Ընդհանուր բերքահավաքը տոններով		Կոլտնտեսություններում ծխախոտի ընդհանուր արտադրանքը տոններով և անգրանի հանդեպ
		Քանի հեկտար	Քանի տոկոս		Քանի հեկտար	Քանի տոկոս	
1913	—	16,500	100,0	—	18,975	100,0	—
1929	7%	17,000	103,0	10%	16,600	87,5	13%
1930	50%	25,000	151,5	71%	26,770	140,0	72%
1931	80%	35,000	212,1	91%	31,500	165,7	93%

Յերկրամասի ծխախոտագործական ուսյոններում, համատարած կուլեկտիվացման պրոցեսում, առաջին յերկու տարում (1930-31 թ. թ.) կոլտնտեսային ծխախոտագործությունն աճման դինամիկան մենք բերինք նախորդ (14-րդ) եջում:

Յերկրամասի ծխախոտագործության զարգացման մեջ, համատարած կուլեկտիվացման և կուլակուլության վորպես դասակարգի վերացման հիմունքով տեղի ունեցավ արմատական փոփոխություն: Վերջինս կայանում է հետեվյալում:—

Նախ՝ վոչնչացվել է գոյություն ունեցած ինքնահոսը և անկայունությունը ծխախոտացանքերի տարածության աճման և ծխախոտային արտադրանքի ասպարեզում: Սկսած 1930 թվականից, ծխախոտագործությունը մեծ թուխք է կատարում դեպի ցանքերի տարածությունը և ծխախոտային արտադրանքի տճումը:

Յերկրագ, ծխախոտագործությունն սկսեց զարգանալ վոչ թե առանձին, փոքրիկ հողամասերի, այլ խոշոր, համատարած հողամասերի վրա:

Յերկրագ, լիկվիդացիայի յեն յենթարկվել կուլակային շահագործող տնտեսությունները և ուրեմն զրա հետ միասին — ղյուղացիության բատրակ-չքավորական մասսաների շահագործումը:

Համատարած կուլեկտիվացումը, աշխատանքի նոր ձևերն ու նրա սոցիալիստական բովանդակությունը հենց առաջին տարիներում ապահովեցին ծխախոտագործական կոլտնտեսություններում ցանքսերի տարածության և ընդհանուր արտադրանքի աճը:

1929 թվին ծխախոտացանքերի տարածությունը հավասար էր նախապատերազմյան—1913 թվականի մակարդակին, իսկ ընդհանուր արտադրանքը այդ թվականի համեմատությամբ պակաս էր յերկրամասի ծխախոտագործության մեջ: 1930—31 թվականներին արդեն կոլտնտեսություններն այդ մակարդակը դերազանցեցին—ցանեքի օտրածուրյունը ավելի քան յերկու անգամ, իսկ ընդհանուր արտադրանքը— մեկ ու կես անգամ:

Արդեն 1931 թվին ծխախոտացանճերի 91 տոկոսը պատկանում էր սոցիալիստական սեկտորին—խորհրդային սոցիալիստական կուլտուրան ու կուլտուրային կյանքին: Հյուսիսային կովկասում ծխախոտագործությունը և նրա հետագա զարգացումը կուսակցությունների քաղաքականությունը հաստատուն հողի վրային դրված:

Սակայն հաղթությունը հեշտությունը չի ձեռք բերվել: Կուլտուրային գյուղացիությունը, բարակությունն և չքավոր—միջակ մասսաները այդ հաղթանակի յուրաքանչյուր քայլը գրավել են կուլով, կուլակության դեմ մղված կատաղի դասակարգային պայքարով: 1930 թվականի դարնանը զլխովին ջարդված կուլակությունը փորձելով վիժեցնել համատարած կոլեկտիվացումը, դիմում էր ամեն տեսակի միջոցների ու յեղությունների:

Յեւ պարտություն կրելով, ջարդված, բայց դեռ վոչ բոլորովին վոչնչացված կուլակությունը փոխում էր իր պայքարի տակտիկան, նայած իրերի ավյալ դրություն:

Կուլտուրային շինարարության ճակատում, կուսակցության և խորհրդային իշխանության դեմ պայքարելուց հետո չեն կանգնել և չեն կանգնում «սրբազան», «ուղղափառ» յեկեղեցին և նրա «սուրբ հայրերը»:

«Կուլտուրային կյանքը—դրանք սատանայի հայտնությունն են. դրանից հետո լինելու յե Բրիտոսոսի յերկրորդ գալուստը»—ահա թե ինչ ազիտացիա էլին մղում գյուղացիության հետամնաց խավերի մեջ փարաջավոր հակահեղափոխականներն ու աղանդավորները:

Այ և «ձախ» ուղորտունիստներն իրենց հակակուսակցական աշխատանքով որեկտիվորեն ոգնում էլին և ոգնում են դասակարգային թշնամուն, դառնալով սոցիալիզմի կառուցման ամենաչատաղի թշնամիներ զործակալություն:

Կուլտուրային գյուղացիության լայն մասսաները բավականաչափ պարզ հասկացան, թե ինչ ճանապարհով պիտի գնան: Լենինի ուղին, կուսակցության ուղին—դա կուլակային սարկուլթյունից, կրոնական սարկուլթյունից

և անկուլտուրականությունից ազատելու ուղին է: Լենինի ուղին, դա ուղղակի դեպի սոցիալիզմը տանող ուղին է: Կուլակություն ուղին, այ և «ձախ» ուղորտունիստների ուղին—դա վերադարձի ճանապարհն է դեպի հին, հազարամյա սարկուլթյունը՝ դեպի կեղեցումը, աղքատությունն և իրավադրությունը:

Հյուսիսային կովկասում և ԽՍՀՄ-ի մի շարք ուրիշ հիմնական հացահատիկային ուսյուններում համատարած կոլեկտիվացման ավարտումը հիմնականում—դա ամենահամոզիչ առաջույցն է լենինյան ուղու ճշտություն, մի ուղի, վոր բունց կուլտուրային գյուղացիությունը՝ կուսակցության և բանվոր դասակարգի ղեկավարությունը:

Կուլակությունն առանձնապես ուժեղ ազիտացիա յեր մղում կուլտուրային ծխախոտացանճերից հրաժարվելու համար: «Ծխախոտի դինը ցածր է, ծխախոտը ձեռնտու բան չէ, նա ձեր տունը կքանդի, առանց մեզ դուք յուր չեք գընա, ծխախոտի մասնագետները մենք ենք, վոր կանք: Դուք ինքնեք (այսինքն բարակները, չքավորներն ու միջակները) չեք կարող գլուխ բերել եզ գործը» և այլն և այլն:

Բայց վոչ աղանդավորները, վոչ կուլակությունը, վոչ յեկեղեցին չեյին և չեն կարող կանգնեցնել բոլշևիկյան հարձակումը, քանի վոր վերջինս նախապատրաստված, կազմակերպված և հաղթանակով ապահովված: Կուսակցությունը հաղթից: Հաղթեցին բանվոր դասակարգը և բարակչքավոր—միջակ լայն մասսաները, վորոնք մտան կուլտուրային կյանքի մեջ:

Գյուղի կուսակցական ու կոմյունիստական կազմակերպությունները կուլտուրային կյանքի և սոցիալիստական ծխախոտագործության համար մղած պայքարում ցույց տվին բոլշևիկյան հաստատակամության, վճռականության ու համառության որինակ: Բոլշևիկյան ծավալուն հարձակումով, համատարած կոլեկտիվացման լոգունդի շուրջը զորահավաքելով լայն մասսաներին, նրանք փշրեցին կուլակային ճակատը և խոշորագույն հաղթանակներ տարան

209

սոցիալիստական ծխախոտագործության համար մղված պայքարում:

Ահա կուսակցության դիրեկտիվները կատարելու համար բոլշևիկյան պայքարի մի որդևակ: Սեվերյան ռալոնի Սմոլենսկայա գյուղում հարկավոր էր 1930 թվականի դարնանը տնկել 800 հեկտար ծխախոտ, ի դիմաց 1929 թվականի 400 հեկտարի, յերբ գլուղը դեռ չեր կոլեկտիվացված: Ամբողջ քանքատարածությունը ծխախոտի տունկով ապահովելու համար, հարկավոր էր կազմակերպել սածիլների տնտեսություն 7-8 հեկտար տարածության վրա և այդ բոլորը պետք էր կատարել յերկու ամսում:

Դյուզդի պայմաններում այդ հսկայական խնդիրը Սլեմոլենսկու կոմունիստները կատարեցին պատվով, հաղթահարելով բոլոր դժվարությունները թե արտադրության հիմնական միջոցների հասանյապման և թե կոլտնտեսություններում նոր անհատականների մուտքն ամրապնդելու գծով: Դժվարություններն ավելանում էին նաև նրանով, վոր առանձին ղեկավարների կողմից թույլ տրված «ձախ» խոտորումների հետևանքով, կոլտնտեսության 1200 տնտեսություններից 325-ը դուրս յեկան դաշտային աշխատանքների յեռուն ժամանակը: Դյուզդի բոլշևիկները հաղթահարեցին այդ բոլոր դժվարությունները. ջերմոցային տնտեսությունը կազմակերպվեց իր ժամանակին, ծխախոտատունկի պլանը նույնպես կատարվեց:

Քաղաքական հսկայական ակտիվություն ցուցաբերեց բարակությունը: Անցյալի փորձերը, ամենադաժան շահագործումը նախկին կուլակ-տերերի կողմից այս բոլորը գինեց բարակությանը դասակարգային թշնամու գեմ: Ջերմոցային տնտեսության կազմակերպման, ծխախոտը խնամելու և նրա մշակման աշխատանքներում չբավորները, բարակներն ու միջակ կոլտնտեսականները ցույց տվին դասակարգային համառության որինակ, պայքարելով սոցիալիստական խոշոր ծխախոտային արտադրության կազմակերպման համար:

Յեթե կուլակային տնտեսությունը կարողանում էր կազմակերպել 3—5 հեկտարանոց ծխախոտի պլանտացիա, ապա արդեն 1930 թվականի դարնանը կոլտնտեսության առանձին դաշտը կազմում էր 200—300 հեկտար, իսկ ծխատատունկի ընդհանուր տարածությունն առանձին կոլտնտեսություններում հասնում էր 1000 և ավելի հեկտարի: Ահա որինակներ.— Սեվերյան ռալոնի Սմոլենսկայա գյուղում ծխախոտացանքերի տարածությունը 800 հեկտար է, Բլակայալում—1200 հեկտար, Պ. Աֆինսկայալում—1200 հեկտար, Արինյան ռալոնի Արինյան գյուղում—1200 հեկտար և այլն:

Սոցիալիստական ծխախոտագործության և համատարած կոլեկտիվացման համար մղված պայքարում հսկայական դեր խաղացին տրակտորն ու մասսայական աշխատանքը: Նույն Սմոլենսկայա գյուղում, կուլակության ուժեղ ագիտացիայի հետևանքով—իսկ կուլակությունն ոգտրվեց «ձախ» խոտորիչների սխալներից—տատանվող անվճռական կոլտնտեսականները 1930 թվականի դարնան դաշտային աշխատանքների յեռուն ժամանակը կազմում էին բավական զգալի մի թիվ—բոլոր կոլտնտեսականների 50—60 տոկոսը:

Այդ ժամանակ դաշտում աշխատում էին յեղած 200 դուլթաններից 30—40-ը միայն: Ցանքի կամպանիան վիժման սպառնալիքի տակ էր: Սակայն այստեղ ողնության հոսով «Պլավստրոյի» տրակտորաշարքը: Սմոլենսկու բոլշևիկները, ներդաշնակելով մասսայական աշխատանքը տրակտորի արտադրական դերի հետ, փշրեցին կուլակային դեմադրությունն և ուղիղ ճանապարհի բերին անվճռականներն ու տատանվողներին:

Ահա սմոլենցիների հաղթանակի մասին մի պատմական հեռագիր, վորը տպվել էր Կրասնոդարի «Красное ЗНАМЯ» լրագրի 30 թվի մարտի 27-ի համարում:

«Սմոլենսկայա գյուղը կազմակերպված, մասսայորեն դաշտ դուրս դալով, վերացնում է ճեղքվածքը գարնանա-

ցանի կամայանիքայի ճակատում: Մարտի 24-ի որը դարձավ ցանքի տոն: Կազմակերպվեց հսկայական ցույց, մասնակցութեամբ դաշտ յեղնողների և դաշտերը վարելու համար յեկած՝ «Պլավատրոյի» տրակտորաշարքի, վորը կազմված և 10 տրակտորներից: Յուրյին մասնակցում էյին՝ կոլտնտեսային աշխատանքային գունդը, կուսակցական ու կոմյերիտական կազմակերպութիւնը, կոլտնտեսական-հողագործները, կոլտնտեսուհի-կանայք և ղըպրոցականները: Յուցարարների շքերթը լողունգներով, դրոշակներով դնաց զեպի դաշտ: Յուցարարների կոլտնտան ձգված եր մեկ ու կես կիլոմետրի վրա: Իաշտ դուրս յեկածները յերեք անգամ ավելի էյին, քան ցանքի նախորդ որերում: Տրակտորաշարքի ոգնութեամբ ցանքի տեմպը 10 անգամ բարձրացավ: Մարտի 24-ին և 25-ին դաշտում աշխատում եր 200 զույգ ձի և 10 տրակտոր: Հասկավոր կուլտուրաների ցանքը կավարտենք առաջիկա յերկու որում: Կազմակերպել ենք ծխախոտի սածիլների տնտեսութիւն, վորն ապահովում և 800 հեկտար ծխախոտի տունկը: Գյուղացիները շնորհակալութիւն են հայտնում տրակտորներ ուղարկած կազմակերպութիւններին: Կոլտնտեսականների մասսայական ժողովներում վորոշվել և անպայման կատարել ցանքի պլանը: Առանձին չքավորների ու միջակների հայտարարութիւնները, վորոնք տրված էյին կուլակային ագիտացիայի ազդեցութեան տակ, կոլտնտեսութիւնից դուրս գալու մասին,—յետ են առնվում: Սմոլենսկայա գյուղը ցանքային կամպանիայի առաջադրութիւնը կկատարի ամբողջովին և իր ժամանակին»:

Յեկ իսկապես, սմոլենցիներն առաջադրութիւնը կատարեցին ամբողջովին և իր ժամանակին: Նրանց աշխատանքը ցույց և տալիս, թե ինչպես պետք և պայքարել ընդհանրորեն, ինչպես հաղթահարել դժվարութիւնները:

ՄԻԱՍՏՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՍՈՅՒՍԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԻԱՍՏՈՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԶՎՈՂ ԴԱՅՔԱՐՈՒՄ

Ծխախոտագործական ուսյոնների համատարած կոլեկտիվացման, սոցիալիստական խոշոր ծխախոտագործութեան համար մղվող պայքարում, Հյուսիսային Կովկասում հսկայական դեր ունեցան Ռոստով-Իոնի՝ Ռոզա Լյուքսենբուրգի անվան պետական ծխախոտագործարանի բազմահազար բանվորական կոլեկտիվը ու կուսակցական կազմակերպութիւնը:

Սկսած առաջին որերից, յերբ լայնորեն ծավալվեց կոլեկտիվացումը (1930 թվականի դարունը) յերկրամասի ծխախոտագործական ուսյոններում, ԳՊԾԳ բանվորները սխտեմատիկորեն ուղարկում են 5-ից մինչև 10 բրիգադներ զեպի ծխախոտագործական ուսյոնները—2-ից մինչև 5 ամիս ժամանակով:

Սոցիալիստական խոշոր ծխախոտագործութիւն կազմակերպելու ճակատում խոշորագույն հաղթանակներ են ձեռք բերել ծխախոտագործական կոլտնտեսութիւնները Յեկ աչք—շնորհիվ այն մեծ, զեկավարական, կազմակերպչ-ողնութեան, վոր յերկրամասի ծխախոտագործական արդյունաբերութեան բանվորութիւնը հասցրել և կոլտնտեսութիւններին:

Ծխախոտագործ բանվորներն իրենց արտադրական կազմակերպչական փորձը գործնականում կիրառում էյին գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի կոնկրետ պայմաններում:

1930 թվականին, հունիս ամսին գործարանի ամբողջ բանվորական կոլեկտիվից 700 հոգի աշխատում եր գյուղում:

1931 թվականի դարնանը գործարանը դարնանացան կամպանիայի և համատարած կոլեկտիվացման ավարտման համար ուղարկեց 45 բանվորական բրիգադ, հաշվեգրական աշխատողներ և 2 բրիգադ ել—գ. ս. ինվենտարի վերանորոգման համար:

Քաղհանի կամպանիային զործարանն ուղարկեց 250 բանվոր և, վերջապես, ձխախոտի բերքահավաքման ու մր-թեքման համար—175 բանվոր:

Ծխախոտագործական կոլտնտեսություններին մեծ ոգ-նութուն է հասցրել և հասցնում է ձխախոտագործարանի «Մլովո ոտ ստանկա» լրագիրը: Համարյա թե չի լինում վոչ մի համար, վորտեղ չլուսաբանվի բանվորական բրի-գադների աշխատանքը գյուղում, կոլտնտեսությունների զնահատականը նրանց աշխատանքի մասին և կոլտնտեսու-թյունների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման հարցերը:

Լրագիրը շրջիկ խմբագրություն էր կազմակերպում կոլտնտեսություններում, այնտեղ բաց էր թողնում բազ-մատիրաժ թերթեր, մարտական աշխատանք էր կատարում աշխատանքի կազմակերպման, կոլտնտեսականների մեջ սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը ծավալի-լու գործում:

«Մլովո ոտ ստանկա» լրագիրը, ինչպես և զործարանի ամբողջ կոլեկտիվը, այժմ էլ այդպիսի աշխատանք է կա-տարում, առանձնապես ջանք թափելով կոլտնտեսություն-ների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման համար:

Ծխախոտագործարանից 15—20 բանվոր են ուղարկ-ված գյուղը, մշտական աշխատանքի համար: Նրանք աշ-խատում են վորպես կոլտնտեսությունների վարչություն-ների, գյուղխորհրդների նախագահներ, կուսընկերների և կոմյերիտընիկների քարտուղարներ:

ԴՊԾԳ բանվորների շեֆական աշխատանքի թերու-թյուններից մեկն այն է, վոր բանվորները թույլ մասնակ-ցություն ունեն ձխախոտագործության մեքենայացման ու լացիոնարացման ասպարիզում գյուղատարարական աշխատան-քին: ԴՊԾԳ բանվորական կոլեկտիվը պարտավոր է զորա-ւավաքել իր ուժը, պրակտիկան, բանվորական հնարա-ւտությունը (ամեկալիան) այս կարևորագույն ճակատում,

ուր մենք պայքարում ենք ձխախոտագործական կոլտնտե-սությունների կազմակերպչական—տնտեսական ամրապնդ-ման, ձխախոտագործությունը մեքենայացնելու և ոացիո-նալիզացիայի յեթարկելու հիմունքով ձխախոտի կուլտու-րայի աշխատանքի պահանջն իջեցնելու համար:

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄՅԿ-ՆԵՐԻ ԳԵՐԸ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱ-ՎԱՌՈՒՑՄԱՆ ՄԵՋ

Ծխախոտագործական խորհրդային տնտեսությունները հումուլթի ֆարրիկաներ են ձխախոտի արդյունաբերություն համար: Հյուսիսային Կովկասում այդպիսի խորհանտեսու-թյուններ կազմակերպվել են միայն 1930 թվականին: Նը-րանք ընդամենը հինգ են.—Մայկոպի ուայոնում—5488 հեկ-տար տերրիտորիայով, Գարյաչի Կլյուչի ուայոնում—7560 հեկտար, Ապշերոնյան—11,100 հեկտար, Կուրջիպի (նախ-կին Մայկոպի շրջան)—2999 հեկտար և, վերջապես, Աբխի ռայոնում—2500 հեկտար տերրիտորիայով: Նրանք ընդա-մենն ունեն 29647 հեկտար տերրիտորիա: Այն հողատարա-ծությունը, վոր առաջիկա տարիներում պիտի յուրացնեն խորհանտեսությունները, մոտավորապես հավասար է կոլտն-տեսությունների 1931 թվականի ցանքերի տարածության: Յերկրամասի ձխախոտագործական կոլտնտեսություններն Յեվ այդ առայժմ չեն յուրացրել այդ տարածությունը: Յեվ այդ հասկանալի յե Մեկ տարում հնարավոր չի յուրացնել ձը-խախոտատունկի համար այդքան մեծ տարածություն, յերբ բացակայել և մեքենայացման մասսայական զործադրու-թյունը և յերբ ձխախոտն առայժմ հանդիսանում է ամենա-շատ աշխատանք պահանջող փխնիկական կուլտուրանե-րից մեկը:

1931 թվականին խորհանտեսությունները տնկեցին—2422 հեկտար, կամ ամբողջ ձխախոտատունկի 7—8 տոկոսը: Դրանից 260 հեկտարի վրա տունկը փոխարինվեց ցանով:

Յերկրամասի խորհանտեսություններում 1931 թվականին հիմնական ներդրումները կազմում ելին 4 միլիոն 763 հազար ութըլի, կամ ԽՍՀՄ ծխախոտագործական խորհանտեսությունների բոլոր հիմնական ներդրումների 50 տոկոսը:

Սակայն խորհանտեսությունները, չնայած իրենց նոր կազմակերպված լինելուն, սակավաթիվ լինելուն, իրենց չնչին տեսակարար կշիռն յերկրամասի ապրանքային ծխախոտի արտադրանքի մեջ, Հյուսիսային Կովկասում նրանց համար լուծեցին սոցիալիստական խոճոք ծխախոտագործություն կազմակերպելու հարցերը: Նրանց փորձի հիման վրա կուսակցությունն ու բանվոր դասակարգը զլխովին փշրեցին այն սպորտունիստական «թեորիան», վոր իբր թե անկարելի յե կազմակերպել գյուղատնտեսության ծխախոտագործական խոշոր մասնաձյուղ, քանի վոր վերջինս շատ աշխատանք կլանող կուլտուրա յե:

«Ուշժերը չեն բավականանա 100 և ավելի հեկտար ծխախոտագաշար մշակելու համար» — այս ելին հայտարարում ծխախոտագործության բուրժուական «մասնադեռաները»: «Իե, իհարկե անկարելի յե մշակել այդքան տարածութուն» — ձայնակցում ելին այդ «դիտնականներին» աջ սպորտունիստական թուխակները:

Պրակտիկան ցույց տվեց, վոր կուսակցությունն ու բանվոր դասակարգը բավականաչափ ուշժ ունեյին վոչ միայն 100, այլ և 600 և ավելի հեկտար ծխախոտ մշակելու համար:

Հետևյալ (25-րդ) և՛ղում առլիս ենք Հյուսիսային Կովկասում գոյություն ունեցող ամեն մի ծխախոտագործական խորհանտեսության 1931 թվի ծխախոտագործության և 1932 թվականին նրա զարգացման հեռանկարների բնույթը. —

Թե յերկրամասի ծխախոտագործական խորհանտեսություններն ինչպես են կատարում կուսակցության ու բանվոր դասակարգի կողմից իրենց վրա զրված պարտականությունները, կարելի յե դատել Գարյաչի-Կլյուչի և Աբինի խորհանտեսությունների որինակից:

խորհանտեսություններ	1931 թվի ծխախոտատունի տարածությունը		Ծխախոտատունի տարածությունը 1932 թ. պլանով	
	Բանի հեկտար	Բանի տոկոս	Բանի հեկտար	Բանի % 1931 թ. հանդեպ
Չերնիկովի խորհ. № 1	720	100,0	950	132,0
Գարյաչի-Կլյուչի № 2	720	10,0	950	132,0
Ապրեյնի № 3	640	100,0	1000	156,2
Կուրջինի	207	100,0	450	217,0
Աբինի № 6	135	100,0	450	333,0
Հունական (1931 թ. նոր կազմակերպված)	—	—	300	—
Ընդամենը՝	2422	100,0	4100	169,2

Գարյաչի-Կլյուչի ծխախոտագործական խորհանտեսությունը պատկանում և «ամենահին» խորհանտեսությունների թվին: Նա կազմակերպվել և 1929 թվի հոկտեմբերին Այս խորհանտեսության մեջ ծխախոտացանքերի զարգացման պատկերը հետևյալն և. — 1930 թվականին — 406 հեկտար, 1931 թվ. — 720 հեկտար, իսկ 1932 թվականի պլանի համաձայն, խորհանտեսությունը պետք և տնկե 950 հեկտար, վորով ծխախոտացանքի տարածությունը յերկու տարում ավելանում և ավելի քան յերկու անգամ:

Առաջին տարին — 1930 թվականը խորհանտեսության համար կազմակերպչական-տնտեսական ձևավորման տարի յեր, — տերրիտորիայի յուրացում, պլանաացրիոն կառուցումների շինարարություն, լծկանի և արտադրության միջոցների հավաքում: Թեև 1930 թվականին խորհանտեսությունը կատարեց ծխախոտատունի պլանը 102 տոկոսով, այնուամենայնիվ, քանի վոր նրա ղեկավարները չունեյին խոշոր ծխախոտագործության կազմակերպման փորձ, նա խոշոր ծխախոտագործության կազմակերպման փորձ, նա ավեց արտադրանքի շատ բարձր ինքնարժեք, 27 տոկոս ավեց արտադրանքի շատ բարձր ծխախոտը մշակելիս: Իր բանվորական ուշժ դերաձայնեց ծխախոտը մշակելիս: Իր մազրկությունը, գործավարձի բացակայությունը, հավա-

սարանքը,—այս բոլորը բավական զգալի տեղ եր բռնում
խորհանտեսության մեջ 1930 թվականին: Սակայն այդ
խորհանտեսության «մանկական հիվանդություններին» շրջ-
ջանն եր, վորոնց խորհանտեսությունը կարողացավ 1931
թվականին վոչ միայն հիմնականում վերջ տալ, այլ և փայ-
լուն որինակներ ցույց տվեց մյուս խորհանտեսություննե-
րին ու կոլտնտեսություններին, թե ինչպես բուժելիորին
պիտի պայքարել սոցիալիստական խոշոր տնտեսություն
կազմակերպելու համար:

1931 թվականին, ծխախոտատունկի կամպանիայի
ժամանակ, աշխատանքի բուժելիկյան կազմակերպման որի-
նակ ցույց տվին Չերնիգովի № 1 ծխախոտագործական
խորհանտեսության առանձին բրիգադները: Մանր-խմբա-
կային գործավարձ մտցնելիս (միջին թվով 22 մարդ) այս
բրիգադները ծխախոտատունկի ժամանակ հետեյալ ցուցիչ-
ները տվին.—

ԲՐԻԳԱԴ № 1: Բրիգադիրը—ընկ. Միշչենկո: Բրիգա-
դում—22 մարդ: Հունիսի 16-ին, 10 ժամյա բանվորական
որում տնկեցին 1,54 հեկտար, հունիսի 17-ին—1,47 հեկ-
տար, 18-ին—1,64 հեկտ. և 19-ին—1,31 հ.:

ԲՐԻԳԱԴ № 2: Բրիգադիրը—ընկ. Պոտապենկո: Բրի-
գադում—22 մարդ: Հունիսի 16-ին 10 ժամյա բանվորական
որում տնկեցին 1,41 հեկտ., 17-ին—1,14 հ., 18-ին—1,37
հեկտ., 19-ին—1,28 հեկտար:

ԲՐԻԳԱԴ № 3: Բրիգադիրը—ընկ. Խվոստիկով: Բրիգա-
դում—22 մարդ: Հունիսի 16-ին, 10 ժամյա բանվորական
որում բրիգադը տնկեց 1,43 հեկտ., 17-ին—1,33 հ., 18-ին
—1,32 հ., 19-ին—1,3 հ.:

Վերջապես, № 4 ԲՐԻԳԱԴԸ հունիսի 16-ին տնկեց
1,31 հեկտ., 17-ին—1,04 հ., 18-ին—1,2 հ., 19-ին—1,18 հ.:

Բոլոր չորս բրիգադներն էլ գործնականում ցույց տը-
վին, թե ինչ արդյունք կստացվի աշխատանքի արտադրո-
ղականության բարձրացման գործում, յերբ այդ աշխատան-
քը ճիշտ և կազմակերպված: Այդ բրիգադներից յուրա-

քանչյուրը մեկ հեկտար ծխախոտ տնկելու համար միջին
թվով ծախսեց 15—16 մարդ-որ, ի դիմաց պլանով սահման-
ված 42—45 մարդ-որվա:

Այս բրիգադները պլանային նորմաները միջին քվեզ
բակասարել են 3 անգամ ավելի:

Բայց տնտեսության ու արտադրության կազմակերպ-
ման ավելի ևս եֆեկտավոր ցուցիչներ տվեց Աբինի ծխա-
խոտագործական № 6 խորհանտեսությունը, վորը կազմա-
կերպվել է 1930 թվականի վերջին:

Ունենալով 150 դրուխ լծկան անասուն և 2 արակտոր,
խորհանտեսությունը ծխախոտատունկի պլանը կատարեց 140
տոկոսով, աշնանավարի պլանը—110 տոկ., վարելով դարնան
համար և աշնանացան ցորենի ցանքի համար 798 հեկտար,
միաժամանակ աշնանավարը ավարտելով նշված ժամկետից
16 որ առաջ: Խորհանտեսությունները 1932 թվի դարնան
համար, ջերմոցային տնտեսության պարարտացման նպա-
տակով, պատրաստել են 600 խորանարդ մետր աղբ և տորֆ,
ի դիմաց պլանով նախատեսված 400 խորանարդ մետրի:

1931 թվականի ընթացքում այս խորհանտեսությունը
արտադրական մեծ ոգնություն հասցրեց շրջակա կոլտնտե-
սություններին և Գայրաչի կյուլչի ծխախոտագործական
խորհանտեսության:

Այս և յերկրամասի ծխախոտագործական խորհանտե-
սությունների նվաճումները դեռ վոչ լրել ցանկը, նվաճում-
ներ, վոր նրանք ձեռք բերին իրենց աշխատանքի կարճ
ժամանակամիջոցում, կոլտնտեսություններին ցույց տալով
սոցիալիստական ծխախոտագործության համար բուժելիկո-
րեն պայքարելու որինակներ:

Առանձնապես կարեվոր են խորհանտեսությունների
նվաճումները տեխնիկային տիրապետելու, ծխախոտագոր-
ծությունը մեքենայացնելու և ռացիոնալացնելու ասպարի-
զում: Այդ նվաճումները նրանք ձեռք են բերել ծխախոտա-
գործության Համաժողովենական ինստիտուտի և դյուզա-

տնտեսութեան մեքենայացման Համաժողովներակաւ ինտոի-
տուտի ոգնութեամբ:

Արդեն 1932 թվականին համարյա բոլոր խորհանտե-
սութեանները պիտի գործադրեն ծխախոտի մեքենայացման
տունկը՝ հատուկ մեքենայով: Գործնակաչորեն ապացուցված
է այն հնարավորութեանը: Բացի այդ, ծխախոտը քաղհան-
վելու յի կուտիվատորներով, պիտի մեքենայացվեն ջեր-
մոցային տնտեսութեան աշխատանքները, ծխախոտի թի-
լումը մեքենաների ոգնութեամբ և այլն: Դեռևս չի կարելի
մեքենայացնել միայն ծաղկահատը, յերկրորդական ճյուղերի
կտրատումը և տերեհատը:

Մենք գտնվում ենք ծխախոտային արտադրութեան
տեխնիկական մեծ հեղաշրջման նախորդակին, յերբ այս
առաջիմ ամենաշատ աշխատանք պահանջող կուլտուրայի
մշակման գործում տասնյակ և հարյուր հազարավոր մարդ-
կանց ձեռքի աշխատանքը կփոխարինվի մեքենայով:

Ներթի յի գրված ծխախոտագործութեան ելեկտրոֆի-
կացիայի հսկայական խնդիրը, վորի լուծմանն արդեն ան-
ցել են դիտական հիմնարկներն ու ծխախոտագործական
խորհանտեսութեանները:

Բուսահողի ելեկտրոքովումը, ծխախոտի ելեկտրոչորա-
ցումն ու ֆերմենտացիան, ծխախոտատունկը դիշեր ժա-
մանակ, ելեկտրո-պրոթեկտորի լույսի տակ, չորանոցային
տնտեսութեան ելեկտրոֆիկացիան և այլն:

Ծխախոտագործական խորհանտեսություններն իրենցից
ներկայացնում են վոչ միայն ծխախոտային հումքի քաբրիկա-
ներ, այլ յեվ նոր տեխնիկա-արտադրական հիմունքներով ձը-
խախոտագործությունը մեքենայացնելու յեվ սոցիալիստերեն
վերակառուցելու հիմնական յեվ վնական նահատուներ:
Այստեղ նրանց առաջնորդող դերը կուտնտեսութեաններ
վերաբերմամբ առանձնապես մեծ եւձիշտ այնպես, ինչպես
և հացահատիկային խորհանտեսութեանները, ծխախոտա-
գործական խորհանտեսութեանները իրոք հանդիսանում են

«դուրի հին կառուցվածքը վերակառուցող գլխավոր վոդ-
նաշարերը» (Սալիկ):

Դրա հետ միասին չի կարելի մի կողմ թողնել այն
մի շարք խոշորագույն պակասութեանները, վոր դեռևս ու-
նեն յերկրամասի ծխախոտագործական խորհանտեսութեան-
ները: Այդ պակասութեաններից են՝ ծխախոտացանքերի մեծ
տարածութեանները փչացումը շնորհիվ վոչ իր ժամանակին
մշակման (քաղհան, բերքահավաք), կաղմակերպչական-արն-
տեսական մեծ ծախսերը, վորոնք անդրադառնում են ձը-
խախոտի ինքնարժեքի բարձրացման վրա, վոչ միշտ ճշգը-
րիտ աշխատանքը՝ վերջինիս կաղմակերպման ասպարիզում,
բիտ աշխատանքը՝ վերջինիս կաղմակերպման ասպարիզում,
վոչ բավականաչափ համառ պայքար Ստալինյան 6 պայ-
մանները կիրառելու համար, հաղթանակները այդ հիմնական
պայմանները սկզբունքային բարձրութեան վրա դնելու
համար:

Այս պակասութեանների վերացումն ավելի ևս կամ-
բաւնդի ծխախոտագործական խորհանտեսութեանները և
կրարձրացնի նրանց առաջատար դերն ու ղեկավարութեանը
կուտնտեսութեանների հանդեպ:

Խոշոր, սոցիալիստական, կուտնտեսային ծխախոտա-
գործութեան կաղմակերպման գործում առանձնապես կարե-
վոր դեր է վերապահված հատուկ, ծխախոտագործական
ուսուցիչների պայմաններում աշխատանքի նշանակված մե-
քենա-տրակտորային կայաններ, վորոնք մինչև այժմ դեռ
գործնականորեն չեն կաղմակերպված: Այն ՄՏԿ-ները, վո-
րոնք մենք ունենք յերկրամասի սակավ-կուլտուրական—
Սեվերյան և Աբինյան ուսուցիչներում—եյապես առաջիմ
հանդիսանում են հացահատիկային, և վոչ թե ծխախոտա-
գործական:

Մրանց տրակտորային պարկը մեծ մասամբ չի հար-
մարեցված Հյուսիսային կովկասի լեռնային ու նախալեռ-
նային գոտու պայմաններում աշխատելու համար: Այդ գո-
տում գտնվում են ծխախոտագործական ուսուցիչները: Սե-
վերյան ուսուցիչ ՄՏԿ-ն ըստ կյութեան կատարում է հողա-
վերյան ուսուցիչ ՄՏԿ-ն ըստ կյութեան կատարում է հողա-

մասերը վարելու տեխնիկական աշխատանք, առաջին հերթին վոչ թե ծխախոտի, այլ հացահատիկային կուլտուրաների համար: Ծխախոտի կոնտրակտացիայի, ծխախոտի արտադրութեան կազմակերպման, ծխախոտը ժամանակին հանձնելու պլանների կատարման համար այդ ՄՏԿ առայժմ պատասխանատու չէ: Այս աշխատանքն առանց նրան և անցնում: Նույնը կարելի չէ ասել նաև Արինյան ուսյոնի մեքենա-արակտորային կայանի մասին:

Անհրաժեշտ է մեծ աշխատանք կաարել՝ ծխախոտագործական ուսյոնների պայմաններում գոյութուն ունեցող ՄՏԿ-ները վերակառուցելու համար և կազմակերպել նոր մեքենա-արակտորային կայաններ սակալ կուլտուրական ծխախոտագործական ուսյոններում: Ծխախոտագործական ուսյոնների ՄՏԿ-ների արակտորային պարկի կազմը պետք է լինի մի փոքր ուրիշ կերպ, քան հացահատիկային ՄՏԿ-ների արակտորային պարկի կազմը: Ծխախոտագործական ՄՏԿ-ների արակտորների հիմնական մասան պետք է բաղկացած լինի զորեղ արակտորներից, քանի վոր լեռնային ու նախալեռնային հողերի վրա աշխատեցնելու համար սովորական, անիվավոր արակտորները ձեռքնատու չեն, կամ բոլորովին անպետք են: Միևնույն ժամանակ պետք է փոխել նաև կցվող ինվենտարի ու գութանների կազմը:

Ծխախոտին հարմար հողերի մշակման համար ամենից համապատասխան է գյուղատնտեսական գործիքների մի խումբ, վոր կազմված լինի «Ներհարգ» տիպի գութանից, սկավառակավոր (դիսկավոր) տափանից՝ ձեղքավոր սկավառակների առաջին շարքով և «Դեյնե» գործիքից (Շրեպեր) — հողը հարթելու համար:

Ծխախոտագործական խորհրդատեսություններին սպասարկող ՄՏԿ-ներին պետք է նաև մատարակարել «Բրյուեբրա» տիպի տնկող մեքենաներ և ծխախոտի քաղհանման կուլտիվատորներ: Ծխախոտագործական ՄՏԿ-ները պետք է դառնան կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսա-

կան ամբապնդման պայքարի շտաբներ, ծխախոտի արտադրութեան զլխավոր եներգետիկ կենտրոններ:

ՄՏԿ-ների միջոցով մենք պետք է իրացնենք Համկոմկուսի (Բ) Ցերկրկոմի վորոշումները՝ մինչև 1934 թվականը տեխնիկական կուլտուրաների ցանքի և բերքահավաքի լիակատար մեքենայացման մասին:

Սոցիալիստական ծխախոտագործությունը զարգացնելու համար մենք պետք է ավարտենք սոցիալիստական վերակառուցումը, այնպես, վոր մեքենա-տրակտորային կայաններն ընդգրկեն բոլոր կոլտնտեսություններն յեվ հիմնականում ավարտեն գյուղատնտեսական արտադրության մեքենայացումը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԾԽԱԽՈՒՍԱԿՈՐԾԱԿԱՆ ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշխատանքի կազմակերպման և նրա արտադրողականութեան բարձրացման հարցերին մեր կուսակցութունն ու նրա առաջնորդները տալիս են հսկայական քաղաքական նշանակություն՝ սոցիալիստական շինարարութեան բոլոր ետապներում:

Լինինը դեռ 1920 թվականին գրում էր այն մասին, վոր «Աշխատանքի արտադրողականությունը—այլ վիտչին հաշվով ամենակարեվորն է, ամենագլխավորը՝ նոր հասարակարգի հաղթանակի համար» և վոր «կապիտալիզմը կտրոզ է վիտչցնականապես պարսվի յեվ կպարսվի նրանով, վոր սոցիալիզմը կսեղծի նոր, ԵԱՏ ավելի բարձր աշխատանքի արտադրողականություն»:

Աշխատանքի կազմակերպման և նրա արտադրողականութեան բարձրացման բնագավառում, սոցիալիստական շինարարութեան կոնկրետ պայմաններում, յերբ մեր յերկիրը մտել է սոցիալիզմի շրջանը, իր առաջ խնդիր դնելով կառուցել այն յերկրորդ հնգամյակում.— հաղթանակի վեց

պայմանները, ընկ.Ստալինի պատմական վեց պայմանները հանճարեղ զարգացումն են Լենինյան մաքրի:

Նաք ձեվով աշխատել, նաք ձեվով ղեկավարել—ահա Ստալինյան լոզունգի կոնկրետ բովանդակութունը, վորը պիտի արվի յուրաքանչյուր ձեռնարկության, յուրաքանչյուր խորհրդատեսության և կոլտնտեսության աշխատանքին: Այս լոզունգի բովանդակութունն է, վոր նրանք պետք է ընդգրկեն, կիրառեն, վորպեսզի բոլշևիկներն կազմակերպեն տնտեսութունը, կազմակերպեն աշխատանքը, բարձրացնեն աշխատանքի արտադրողականութունը:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իր 31 թվի հուլիսի 2-ի պատմական վորոշմամբ առաջադրեց կոլտնտեսութունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրը, վորպես տվյալ հտապում կոլտնտեսային շինարարության հիմնական և վճռական խնդիր: Կենտկոմն իր այս վորոշումը մի անգամ ևս հաստատեց 1932 թվի փետրվարի 4-ի վորոշմամբ՝ «կոլտնտեսութունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հերթական մեջոցառումները մասին»:

Արտադրական բրիգադների, վորպես կոլտնտեսութուններում աշխատանքի կազմակերպման հիմնական ողակների ստեղծումը, հաշվառքը, գործավարձը, պայքարը վորակի, բարձր-ապրանքային կոլտնտեսային Ֆերմաների կազմակերպման, կադրերի պատրաստման, կոլտնտեսական ակտիվի ընդլայնման համար—ահա այն կոնկրետ լծակները, վորոնք պիտի գործի դնեն կոլտնտեսութունները, վորպեսզի կատարեն կոլտնտեսութունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման վերաբերյալ կուսակցության վորոշումները:

Համկոմկուսի (բ) Հյուս. Կովկասի Յերկրկոմի, Յերկր-գործկոմի և Յերկրկոլտնտնության 1932 թվականի հունվարի 12-ի վորոշումը, —վորը հավանութուն գտավ յերկրային 7-րդ Կուսկոնֆերանսի կողմից, —Հյուսիսային Կովկասի համար ճշգրիտ կերպով վորոշում է կոլտնտեսու-

թյունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրները: Այս վորոշմամբ առաջադրված հարցերը—աշխատանքների մեքենայացումը կոլտնտեսութուններում, աշխատանքի կազմակերպումն և այս կապակցությամբ խոշոր կոլտնտեսութունների մանրացումը, բրիգադների վերակառուցումը արտադրական սկզբունքով, բերքի բարձրացման, 1932 թվականի ցանքի պատրաստման, նրա պլանների կատարման հարցերը, կոլտնտեսային կադրերի պատրաստման ու վերապատրաստման հարցերը—այս ամենը կոլտնտեսային շինարարության շղթայի առանձին ողակներն են տվյալ հտապում, ողակներ, վորոնք միանում են այդ շղթայի մեկ գլխավոր և հիմնական ողակին,—կոլտնտեսութունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման:

Ահա թե ինչու աշխատանքի կազմակերպման յեվ նրա արագորոշականության բարձրացման հարցերը հանդիսանում են գլխավոր յեվ հիմնական՝ արագորության մեքենայացման ռացիոնալացման հիմունքով սոցիալիստական ծխախոտագործույունը կազմակերպելու յեվ ամրապնդելու ասպարիզում:

Աշխատանքի կազմակերպման մեջ վճռական նշանակութուն ունի կոլտնտեսության մեջ բոլոր աշխատունակ-կութուն ունի կոլտնտեսության մեջ բոլոր աշխատունակ-ներին դասավորելն և ռացիոնալ ոգտագործումը՝ համապատասխան յուրաքանչյուր կոլտնտեսականի արտադրական առանձնահատկութունների հաշվառման և նրանց ունեցած վարժութունների ու կլավիֆիկացիայի, վորոնք անհրաժեշտ են կոլտնտեսության մեջ այս կամ այն աշխատանքը կատարելու համար:

Այս կապակցությամբ ել պետք է կազմակերպվեն մասնագիտացված, մասնաճյուղային արտադրական բրիգադներ՝ աշխատունակ կոլտնտեսականներից: Բրիգադը—դա հիմնական արտադրական միավորն է կոլտնտեսության մեջ և ծխախոտագործական կոլտնտեսային ապրանքային Ֆեր-և ծխախոտագործական կոլտնտեսային ապրանքային Ֆեր-մայում, նա հանդիսանում է «ամենակարելի ողակը կոլտնտեսութուններում աշխատանքի կազմակերպման մեջ»:

(ՀԿ(բ)Կ Կենտրոնի 32 թվի փետրվարի 4-ի վորոշումից): Աշխատանքի արտադրողականութունն ու գործավարձի հսկայական առավելութունը մեծ շահով կախված են կոլտնտեսային արտադրական բրիգադներ կազմից, նրանց իր ժամանակին կազմակերպելուց և արտադրական բեռնվածութունից— թե ամբողջ բրիգադի և թե նրա յուրաքանչյուր անդամի բեռնվածութունից:

Երեսուցյան կոլտնտեսություններում արտադրական բրիգադները պետք է լինեն մեծահասակ: Նրանցից ամեն մեկին պետք է ամրացված լինի վորոշ արտադրական հողամաս, վորի վրա բրիգադները կատարում են այն բոլոր աշխատանքները, վորոնք կապված են ծխախոտի ցանկի, ֆադիանի, բերքահավաքի յեղ մեակման հետ: Համկոմկոսի (բ) Յերկրկոմբր ցուցմունք է տվել բրիգադները կազմակերպել այնպես, վոր նրանց մեջ միջին թվով լինի մինչև 60 մարդ:

1931 թվականի վորձը ցույց տվեց, վոր այնտեղ, վորտեղ բրիգադները մեծաթիվ էին, նրանց աշխատանքի արտադրողականութունը շատ ցածր էր: Շատ կոլտնտեսութուններում բրիգադները նույնիսկ եյապես արտադրական չէին, այլ կազմակերպվել էին բրիգադ-բակերի տերբրիտորյալ սկզբունքով: Այսպիսի բրիգադների միջև մեխանիկորեն բաշխվում էին լծկանը, արտադրողական միջոցներն և ցանքի տարածութունը:

Բրիգադների այդպիսի սխալ կազմակերպման որինակ կարող է ծառայել Սեվերյան ուսյոնի Կրեպտատնայա գյուղի «Նոր աշխարհ» ծխախոտադորձական կոլտնտեսութունի բրիգադների կազմը:

Հետևյալ (35) եջի աղյուսակը ցույց կտալիս, թե ինչպես էին կազմվել այս կոլտնտեսութունի «արտադրական բրիգադները»:

Տվյալ կոլտնտեսութունի մեջ այսպիսի մեքենայական, վոր-արտադրական մոտեցումը դեպի բրիգադների կազմակերպումն՝ առաջ բերեց զիմազրկութուն, անպատասխանատվութուն բրիգադների ու նրանց անդամների կողմից՝

իրենց հանձնած աշխատանքի հանդեպ: Աշխատունակ կոլտնտեսականների միայն 60-65 տոկոսով աշխատանքի դնալը, բրիգադներում քարշող ույթի (լծկանի) վատ դրութունը, տնկված ծխախոտի 50 տոկոսի փչացումը— անհ «Նոր աշխարհ» կոլտնտեսութունի աշխատանքի և արտադրական բրիգադների այդպիսի սխալ կազմակերպման արդյունքը: Ծխախոտի տունկի ժամանակ մեկ բրիգադի արտադրողութը միջին թվով վորոշվում էր որական 2—2,2 հեկտար (միջին թվով մեկ հեկտարին 45—50 մարդ—որ):

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ» ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԸ. ԼՃԿԱՆԻ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՑԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Բրիգադները	Յուրաքանչյուր անդամի վրա ընկած հողի մեծությունը (հեկտար)	Միջին արտադրողականությունը (տոննա)	Ցանքատարածության բաշխումը բրիգադներում		
			Աշխատանքային (հեկտար)	Գարնան ցանքային (հեկտար)	Միջին արտադրողականությունը (տոննա)
Բրիգադ Ա 1	134	55	72,5	19,0	51,0
» 2	141	60	92,5	23,0	63,0
» 3	109	42	76,75	20,3	52,0
» 4	73	32	53,5	12,7	37,0
» 5	33	16	33,8	8,5	22,0
» 6	31	14	31,6	8,8	20,0

Աշխատանքի արտադրողականութունի վերաբերմամբ բոլորովին այլ արդյունքներ ստացավ Աբինյան ուսյոնի կոլտնտեսութունը: 1931 թվականի գարնանային տունկի կամպանիային այս կոլտնտեսութունը կազմակերպեց 4 հատուկ արտադրական բրիգադներ: Սրանցից մեկը—տունկի սրկելու և տեղ հասցնելու և 3-ը—հատկապես ծխախոտը տնկելու համար: Իրենց հեր-թին բրիգադները բաժանվել էին արտադրական խմբակների, իսկ սրանցից ամեն մեկը—արտադրական ողակներին: Ցուրաքանչյուր բրիգադում կար 56 մարդ, խմբակում—14

և ողակում 7 մարդ (ողակը բազկացած էր 1 փորոզից, 1 փոս բացողից, 3 տնկող կանանցից և 2 ջրկիրներից, Բրիգադներին կազմակերպման այս յեղանակով «Նոր ուղի» կոլտնտեսութունը կարողացավ 10 տոկոսով գերակատարել ծխախոտատունկը, 1931 թվականին տնկելով 165 հեկտար ծխախոտ:

Յուրաքանչյուր արտադրական ողակ որական 10 փամաշխատելով, միջին թվով տնկեց 0,5—0,6 հեկտար, իսկ նորման 0,2 հեկտար էր: Յերկու այդպիսի ողակներից բազկացած արտադրական խմբակը (14 մարդ) որական տնկում էր 1—1,2 հեկտար: Այդպիսի բրիգադները մշակույթի նորմաները գերակատարում էին 2 և կես անգամ:

«Նոր ուղի» կոլտնտեսութունը նույնպես մի քիչ մեծաթիվ, բայց հիմնականում ճիշտ էր կազմել իր բրիգադները: Ահա թե ինչու նրա բրիգադներն յերեք անգամից ավելի արդյունավետ էին աշխատում, քան թե «Նոր աշխարհ» կոլտնտեսության բրիգադները:

Կոլտնտեսային արտադրության կազմակերպման մեջ հսկայական նշանակություն ունի բրիգադների ղեկավար դերը: Ահա թե ինչու «կոլտնտեսութունների վարչութունների ամենագլխավոր պարտականությունն է բրիգադիրներ ընտրել լավագույն կոլտնտեսականներից, մանավանդ հարվածայիններից, արտադրութունն իմացողներից, վորոնք կարողանում են կոլտնտեսականներին կազմակերպել արտադրական պլանների կատարման շուրջը» (ԽՍՀՄ կոլտնտեսի տրոսի վորոշումից): Հարկավոր է վերացնել բրիգադիրների հոսունությունը, նրանց իրական ոգնություն ցույց տալ իրենց անտեսահան ու քաղաքական վորակը բարձրացնելու համար: Յեվ ինչպես մատնանշում է Համկոմկուսի (բ) կենտկոմն իր 1932 թվականի փետրվարի 4-ի վորոշման մեջ, այդ պետք է դառնա կուսակցական կազմակերպությունների կարեվորագույն խնդիրը:

Սեխասանին բս Բանակի և վորակի վարձատրելու հարցը, գործավարձն ընդերելու (վնեդրենիյե), աշխատանքային

տեղի նարցը առաջվա նման մնում է վորպես կոլտնտեսային օրնարարության կազմակերպման հիմնական հարց»—այսպես հայտարարեց ընկ. Շերոլաևը 7-րդ կուսկոնֆերենցիայում: Հենց սրա համար էլ մենք աշխատում ենք խոշոր կոլտնտեսությունները վերակազմել բրիգադ—բակերի:

Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման հիմնական, միակ ուղիղ ձևը գործավարձն է, վորովհետև նրա շնորհիվ յուրաքանչյուր կոլտնտեսական շահագործված է լինում աշխատանքի արդյունքներով:

Գործավարձը հանդիսանում է դիմադրկությունն և հավասարանքը վոչնչացնելու հիմնական պայմաններից մեկը: Գործավարձը—յեթե նա կիրառվում է վոչ թե խոսքերով, այլ գործնականապես,—մի հզոր խթան է հանդիսանում աշխատանքի արտադրողականությունն ավելի բարձր աստիճանի հասցնելու, վորն անմատչելի յե անհատական տրնտեսության համար, բայց միանգամայն մատչելի և իրագործելի յե խոշոր, սոցիալիստական տնտեսության մեջ:

Ահա գործավարձի առավելությունները.— «Դրիմի կոլտնտեսություններում մեկ հեկտար ծխախոտ տնկելու համար, որավարձով աշխատելիս, ծախսում էին 180 մարդ-որ. անցան գործավարձի և սկսեցին ծախսել 40—60 մարդ-որ» (խորհուրդների VI համագումարում ընկ. Յակովլևի ղեկուցումից):

Կիրառելով գործավարձը, Աբինյան ռայոնի կոլտնտեսությունները 1931 թվականի գարնանը կարողացան 2.3 սությունները 1931 թվականի գարնանը, իսկ Գարանգամ գերակատարել մշակույթի նորմաները, իսկ Գարայի Կլյուչի ծխախոտագործական խորհունտեսությունը՝ նույնիսկ 4—4 և կես անգամ:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում գործավարձը վճռական նշանակություն ունի, պայմանով, յեթե նրա կիրառման հետ միասին մեքենայացվի ու ռացիոնալացվի ծխախոտի արտադրությունը, ինչպես և ուրախության վորակով ու պատրաստվի ծխախոտագործական կոլտնտեսություններում: Ծխախոտի կուլտուրան մի-

յուս անխնայիկական կուլտուրաներից տարբերվում ե վոչ միայն զգալիաչափ աշխատանք պահանջելով, այլ և նրանով, վոր ծխախոտի տունկի և մշակման համար պահանջվում է այս գործում աշխատողների անհրաժեշտ վարժանք (նավիկ) և կլավիֆիկացիա:

Պարզվել է, վոր ծխախոտագործական անտեսության մեջ բանվորական վորակյալ ուժ լինելու գեպքում ամենաշատ աշխատանք պահանջող գործողությունների (տունկ, տերեհատը, թելումը, փնջելը և տեսակավորումը) վրա թափվող աշխատանքը կրճատվում է 37 տոկոսով—նույնիսկ առանց մեքենայացում և ռացիոնալիզատորական միջոցառումներ գործադրելու: Փորձված թելողը յերկու անգամ ավելի ծխախոտ կթելի. փորձված փունջ կապողներն ու տեսակավորողները 2—2 և կես անգամ ավելի կմշակեն, քան անփորձները և այլն:

Սա հայտնե յե յուրաքանչյուր բրիգադիբի, յուրաքանչյուր կոլտնտեսականի, վորոնք ծանոթ են ծխախոտի արտադրության և նրա մեջ տեղի ունեցող աշխատանքային պրոցեսներին: Անհրաժեշտ է 1932 թվականին գործավարձի անցկացնել կոլտնտեսությունների բոլոր աշխատանքներն և գործավարձը կիրառել այնպես, վորպեսզի բարելավվի աշխատանքի վորակը, բարձրացվի աշխատանքի արտադրողականությունն և կոլտնտեսային արտադրության ապրանքայնությունը:

Ծխախոտի արտադրության մեջ զգալի քանակությամբ աշխատանքներ—թելումը, չորացումը, փնջելն ու տեսակավորումը—կարող են կատարվել յերկու և նույնիսկ յերեք հերթով: Տունկը, մեքենայացման գեպքում, կարող է կատարվել նաև գիշերը:

Բազմաներթ աշխատանքների կիրառումը գործավարձի հետ միասին—ահա հիմնական պայմաններից մեկը՝ ծխախոտի արտադրանքի քանակի ու վորակի, ծխախոտատունկի, ծխախոտային հումուլթի մշակման պայքարում:

Գործավարձն անպայման պետք է կազմակերպել այնպես, վոր աշխատանքը գնահատվի աշխորերով, ըստ կատարած աշխատանքի քանակի և վորակի:

«Աշխորը—գա գլխից հանած բան է: Աշխորն առաջադրել է ինքը, կյանքը, մշակվել է հենց իրենց, կուրընտեսականների կողմից: Աշխորը հանդիսանում է յուրատեսականների կողմնակալների թափած աշխատանքի քանչյուր առանձին կոլտնտեսականի թափած աշխատանքի վում են կոլտնտեսություններում, կոլտնտեսականների միջև, կանոնավորվում են հենց այդ աշխորով» (Յուրկին, կից-գեկուցում խորհուրդների վեցերորդ համագումարում):

Կոլտնտեսության մեջ ծուլը քիչ է ստանում, կամ վոչինչ չի ստանում: Այսուպես ծուլերի դեմ է: Ահա յեկամուտների որինակելի բաշխման բնույթը Սեվերյան ռայոնի կրեպոստնայա գյուղի «Նոր աշխարհ» ծխախոտագործական կոլտնտեսության մեջ: Ահա ինչպես են բաշխվել յեկամուտները 1931 թվականին լավ ու վատ աշխատած կոլտնտեսականների միջև.—

Կոլտնտեսականների անուն—ազգանունները	Ընտանիքի անդամների թիվը		Վատաբան աշխատանքի թիվը	Ինչքան յե կամուտ է ստացել 1931 թվին
	Ընդամենը	Արանցից աշխատանակներ		
Սամոյլենկո Գ.	1	1	348,35	348 »
Կիկո	2	2	504	504 »
Չեքոբրովից Գ.	4	4	706,39	706 »
Իվանով Գալի	4	2	391,57	391 »
Սամարսկի Վ.	6	3	613,61	613 »
Լոզովից Գ.	5	2	513,5	513 »
Երեմենկո Իվան	5	2	32,78	32 »
Յերեմենկո Իվան	5	2	57,6	57 »
Գորկովի Իվան	4	2	119,52	119 »
Շեկցով Ա.	2	1	23,8	23 »
Ուպան Իվան	4	2		

Այս կոլտնտեսության մեջ միջին թվով մեկ աշխատանքային որվան ընկնում է մեկ ուսուրի: Յեվ, վորովհետև

Վրոյանները, Յերմեյակիները և ուրիշ անձինք, ծուլություն անելով, աշխատանքի չեյին դուրս գալիս (կոլտնտեսութեան մեջ տարեկան միջին թվով աշխատանքի յեն դուրս յեկել 60—65 մարդ), կոլտնտեսութեան մեջ առաջացավ հսկայական արտադրական ձեղքվածք: Անժամանակ քաղհանի պատճառով այստեղ փչացավ մինչև 100 հեկտար բարձր տեսակ ծխախոտ, իսկ կոլտնտեսութեանը 80—100 հազար ուրբլու փաս ունեցավ:

Յեթե 100 տոկոսով աշխատանքի դուրս գային, յեթե անփաս մնար տնկված ծխախոտի տարածութեանը, կոլտնտեսութեանը մտաւորապես յերկու անգամ ավելի յեկածուտ կստանար: Աշխտրվա արժեքն էլ այս դեպքում կբարձրանար վոչ պակաս, քան կիսով չափ:

Մեր բերած աղյուսակը, վորը բնորոշում է յեկածուտների բաշխումը Վեր Աշխարհ՝ կոլտնտեսութեան մեջ, ճիշտ ու պարզորոշ կերպով շեշտում է աշխտրվա նշանակութեանը կոլտնտեսութեան մեջ: Աօխասանֆայիմ որվա համար մղվող պայքարը միյեվնույն ժամանակ պայքար է ցնեծարլայան ասրապնդման, ցրա յեկամսի բարձրացման, նյութական դրուլայան բարելավման նամար:

Կավ աշխատող կոլտնտեսականներին խրախուսելու համար պետք է տալ պարգև (պրեմիա)—ավելի լավ մատակարարել նրանց արդյունաբերական ապրանքներ:

Իր 32 թ. փետրվարի 4-ի վորոշմամբ Վենետկոմը նախագրուչացնում է գործավարձի ձևերը չափից դուրս բարգացնելուց, հառաջատվական գործավարձ մտցնելուց, գործավարձի անհատական ձևերով տարվելուց—այնտեղ, վորտեղ դրա կարիքը վերացվում է արտադրութեան պայմաններով (որինակ, վարելիս, կալսելիս), կոլտնտեսականների աշխատանքի վարձատրութեանը զբամական աշխատավարձի վերածելու փորձերից, կուսակցական ու խորհրդային կազմակերպութեանների կողմից կոլտնտեսութեանների վարչութեանների աշխատանքը չոր ու ցամաք վարչարարութեամբ փոխարինելուց, գյուղատնտեսական արտելի վե-

րաբերյալ կանոնադրութեամբ զանազան ֆոնդերի համար ընդունված հատկացումները բարձրացնելուց: Կոլտնտեսութեան մեջ, կամ ծխախոտագործական կոլտնտեսային ֆերմայում գործավարձի հիմունքով աշխատանքը կազմակերպելիս, կուսակցական կազմակերպութեանները և կոլտնտեսութեանների ղեկավարները պետք է ի նկատի ունենան այս ցուցմունքները և ղեկավարվին նրանցով:

Գործավարձի ճշգրիտ սահմանման, բերքի բարձրացման համար, գործավարձը վերջինիս հետ ներդաշնակելու համար մղվող պայքարում հսկայական նշանակութեան ունի իՍՆՄ կոլտնտեկեստրոնի մի վորոշման հետևյալ կետը.—

Յեթե փորձնական կալսի և ստուգման միջոցով սահմանված բերքի չափի հանդեպ պակասել է արտադրանքը, համապատասխան չափով պակասեցվում է նաև բրիգադի կոլտնտեսականների աշխատանքի գնահատումը: Արտադրանքի ավելացման դեպքում աշխտրվա գնահատումը համապատասխան չափով բարձրացվում է:

Վորպես հաստատուն կանոն՝ սահմանել աշխտրերով գնահատումների իջեցումը աշխատանքները ժամկետում չկատարելու համար (մանավանդ ցանքի, քաղհանի ու բերքնհավաքի ժամանակ) և այդ գնահատումների բարձրացում՝ ժամանակին կատարելու համար, յերբ պահպանվում է աշխատանքի վորակը: Այդ իջեցումների և բարձրացումների խատանքի վորակը: Այդ իջեցումների և վարձրացումների վարչութեանը: Մեծ չափը սահմանում է կոլտնտեսութեան վարչութեանը: Մեծ նշանակութեան ունի աշխատանքի կազմակերպումն իրեն, նշանակութեան ունի աշխատանքի կազմակերպումն իրեն, արտադրական բրիգադի ներսում սոցմրցութեան, հարվածայնութեան և բրիգադի յուրաքանչյուր անդամի նյութական շահագրգռվածութեան հիմունքով:

Ահա թե ինչու, հսկայական նշանակութեան տալով կոլտնտեսականներին նյութական շահագրգռվածութեան և աշխատանքային ղեցկալինայի կամրապնդման, Համկոմ-կուտի (բ) Յերկրկոմը, Յերկրգործկոմը և Յերկրկոլտնտմիու-թեանն իրենց՝ 1932 թվականի հունվարի 12-ի վորոշմամբ, թեյունն իրենց՝ 1932 թվականի հունվարի 12-ի վորոշմամբ, վորպես այս հարցերի իրացման միջոցառումներ, առաջար-

կում են կոլտնտեսութեաններում աշխատանքային՝ բոլոր պրոցեսները կազմակերպել մանր-խմբակային և անհատական գործավարձի հիմունքներով, յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքը պնասատելով աշխատանքային որերով:

Այդ բրիգադներում աշխատող կոլտնտեսականները ստանում են և պետք է ստանան իրենց աշխատանքային որերի համապատասխան՝ դրամական և մթերքային ավանսներ—սիստեմատիկաբար և վոչ պակաս այն գումարները 50 տոկոսից, վորոնք ստացվում են կոլտնտեսութեան իրացրած մթերքներից կամ կոնտրակտացիայից:

Այն ամբողջ խնայողութեանը, վոր բրիգադն ստանում է արտադրական պլանի կատարումից, նյութեղենից, կերից և այլն, ամբողջովին դրվում է հենց իրեն, բրիգադի տրամադրութեան տակ: Ծխախոտագործութեան մեջ բրիգադների լիակատար տրամադրութեան տակ պիտի դրվեն այն միջոցները, վոր բրիգադները կստանան շուր բանեցնելու, սածիլների տնտեսութեան նյութեղենի, թուղի (շագագատ) բանեցնելու խնայողութեան անելով: Ինարկե այս բոլորը բրիգադին պետք է տրվի այն պայմանով, յետե բրիգադի աշխատանքը լալորակ ճանաչվի (ընդունելու ժամանակ):

Կոլտնտեսութեան մեջ ծուլերի և կորզիչների դեմ պետք է խիստ և անհաշտ պայքար մղել: Սակայն այս պայքարի հաջողութեաններն ամենից տոաջ կախված են աշխատանքի ճիշտ կազմակերպումից, այդ աշխատանքի ճիշտ հաշվառելից և յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի վրա յեղած հսկողութեանից: Հարկավոր է ամենից տոաջ թույլ չտալ, վոր յեկամուտները բաժանելիս, կամ այդ յեկամուտների հաշվին ավանս նալու ժամանակ կիրառվի կուլակային հավասարանքը, այսինքն յեկամուտն ըստ շնչերի բաժանելը, վորը ձեռնտու յե ծուլերին և վորը շուր և ցնում կոլտնտեսութեան դասակարգային թշնամու—կուլակի ջրաղացին:

Յեւ անա թե ինչու յուրաքանչյուր բրիգադի, յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի բաժանի յեւ վորակի հաշվառն ու վերահսկուարյունը հիմնական ու գլխավոր պայմաններ են հանդիսանում կոլտնտեսութեան մեջ կուլակային հավասարանքը վոչնչացնելու համար մղված պայքարում:

Առանց հաշվառելի ու վերահսկողութեան անկարելի յե պայքարել հավասարանքի դեմ, չի կարելի կարգավորել ու անցկացնել աշխատանքի ճիշտ կազմակերպումը—առավել և սոցիալիստական խոշոր տնտեսութեան մեջ: Առանց հաշվառելի ու վերահսկողութեան սոցիալիզմ չես կառուցի: Սոցիալիստական տնտեսութեան սկզբունքը հիմնվում է ամենից տոաջ հաշվառելի ու վերահսկողութեան վրա, վորոնք պետք է գործնականապես կիրառվեն բոլոր կոլտնտեսականների կողմից:

«Հաշվառն ու վերահսկողութեանը»—գրում եր Լենինը 1918 թվականին—«վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմին անցնելու համար, կարող են լինել միայն մասսայական: Միայն բանվորների ու գյուղացիների մասսաների կամավոր ու բարեխիղճ, հեղափոխական ենտուկիազմով կիրառվոր ու բարեխիղճ, հեղափոխական ենտուկիազմով կիրառվոր աշխատակցութեանը հաշվառում և վերահսկողութեանը հարուսների, խաբեբաների, մակարայծների, արիկաների վրա՝ կարող է հաղթահարել անիծված կապիտալիստական հասարակութեան այդ մնացորդները, յարդկութեան այդ տականքը, այդ ժանդախտը, պալարը, վոր կապիտալիզմից ժառանգութեան է մնացել սոցիալիզմին» (Լենին—«Ինչպես կազմակերպել մրցակցութեանը»):

Ծուլերը, կորզիչներն ու սիմուլյանտները սոցիալիզմի և կոլտնտեսային շինարարութեան թշնամիներն են: Նրանց դեմ մինք պետք է մղենք անհաշտ պայքար, վորից և կախված է մեր հաղթանակը: Անա թե ինչու, գործավարձը մտցնելու հետ միասին, մեր կուլակցութեանն ամենուրեք և ամեն ժամանակ հսկայական ուշադրութեան է նվիրում կոլտնտեսութեաններում հաշվառելի ու վերահսկողութեանը դրվածքի խնդիրներին:

Կոլտնտեսութեան մեջ աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու և աշխատանքային դիսցիպլինան ամրապնդելու գործում մեծ նշանակութիւն ունի կոլտնտեսականների աշխատանքի նորմալութեամբ, հաշի առնելով աշխատանքի բնույթն ըստ նրա կատարման բարդութեան և ըստ մարդկային ենթակայի ծախսման:

Մենք պետք է աշխատանքների բնույթը հաշի առնենք մշակույթի նորմաները սահմանելիս, այդ աշխատանքները բաժանելով ծանր, միջին ու թեթեւ տեսակների, ինչպես նաև վորակյալ և վոչ վորակյալ աշխատանքի: Ծանր և վորակավորում պահանջող աշխատանքները պետք է դնահատվեն ավելի թանկ աշխորբերով, քան մնացած աշխատանքները:

Սոցիալիստական խոշոր տնտեսութեան մեջ մի առանձին նշանակութիւն ունի մշակույթի բարձր նորմաների սահմանումը, վորոնց նպատակն է պայքարել աշխատանքի արտադրողականութեան բարձրացման և արտադրական ույժերի զարգացման համար: Արտադրանքի նորմաներն ընդհանրապես պետք է սահմանվեն կոլտնտեսութեան հարվածային բրիգադի սված նորմաների սահմաններում:

Կոլտնտեսութեան մեջ աշխատանքները ճիշտ նորմավորելու և արտադրանքի ու գնահատումների նորմաներ սահմանելու համար պետք է որինակ ծառայել կոլտնտեսութեան լավագույն արտադրական բրիգադի և լավագույն հարվածայինների աշխատանքը և վոչ թե «միջին» մեծութեան, ինչպես այդ կատարվում էր առաջ, այստեղ ու այնտեղ:

Ծխախոտագործութեան պետական ինստիտուտը միանգամայն ճիշտ է մտտեցել այն հարցերի լուծմանը, վորոնք վերաբերում են նորմավորման՝ ծխախոտագործական խոշոր տնտեսութեան մեջ: Աշխատանքի տեխնիկական նորմավորման վերաբերյալ իր գիտական—հետազոտական աշխատանքներում ինստիտուտը կուրս է վերցրել դեպի լավագույն կոլտնտեսական—հարվածայինը: Նա նույնպես ճիշտ է մտտե-

ցել նորմավորման մեթոդաբանական հարցերի լուծման, նորմաներ սահմանելով վոչ թե առանձին ուայոնների, այլ յերկրամասի բոլոր ծխախոտագործական կոլտնտեսութիւնների համար, ծխախոտի մշակման բոլոր ծախքերը բաժանելով յերկու կատեգորիայի. 1) ծախքեր խոշորատերև ծխախոտի համար և 2) ծախքեր մանրատերև ծխախոտի համար: Դեպի նորմավորման հարցերն այդպիսի մտտեցումը հիմնականում վորոշում է աշխատանքի գործադրութիւնը (ծախք) 2. կովկասի թե լեռնային և թե նախալեռնային գոտում, վորտեղ գտնվում է 2. կով. ծխախոտագործութեան ամբողջ բազան: Ի հարկե սա չի նշանակում, թե իրենք, կոլտնտեսութիւնները չպիտի գբաղվեն այդ նորմաների ճշտացմամբ, նայած տեղական պայմաններին:

Յերկրամասի ծխախոտագործական կոլտնտեսութիւններում, ըստ Ծխախոտագործութեան պետական ինստիտուտի սահմանած նորմաների, 1932 թվականին աշխատելու համար, մեկ հեկտար ծխախոտի տունկի և մշակման աշխատանքի մոտավոր ծախսը վորոշվում է 270 մարդ-որ՝ խոշորատերև ծխախոտի և 293—295 մարդ-որ՝ մանրատերև ծխախոտի վերաբերմամբ:

Յեթե Ծխախոտագործութեան պետական ինստիտուտի 1932 թվականի համար առաջարկած՝ բանուժի գործադրութեան նորմաները համեմատենք այն նորմաների հետ, վորոնք նա սահմանել էր 1931 թվականին, ապա կստացվեն հետևյալ (46) եջի ազդեցակում բերված տվյալները:

Այս բոլորից յերեվում է, վոր Ծխախոտագործութեան պետական ինստիտուտը 1932 թվի արտադրանքի նորմապետական հարցերի ուսումնասիրութեան գործում առաջին վորման հարցերի ուսումնասիրութեան հարանում է նրանում, վոր նշանակալից քայլն արավ, վոր կայանում է նրանում, վոր նա այդ նորմաները սահմանեց 2. կովկասի խորհանտեսութիւնների և կոլտնտեսութիւնների փորձի հիման վրա, ինչպես և Սեվերյան. Սոչու յիվ Մայկոպի ուայոնների տունկին կոլտնտեսային բրիգադների աշխատանքն ուսումնասիրելիս բռնումբարած սվայաների հիման վրա:

Մշակատանքի տեսակները

	Բանուժի ծախսը խոշորատերև ձխա- խոտերի 1 հեկտարի մշակման համար (մարդ-որերով)		Բանուժի ծախսը մանրատերև ձխա- խոտի 1 հեկտարի մշակման համար (մարդ-որերով)	
	1931 թ.	1932 թ.	1931 թ.	1932 թ.
1) Սածիլի տնտեսութ.	31	25	26,0	25
2) վար	4	2	6,0	2
3) Նշան փակցնելը	1	1	1,0	1
4) Սածիլի տեղափոխում	52,0	24,0	49,0	2
5) Տնկում	58,0	29,5	69,0	29,6
6) Քաղհան				
7) Ծաղկանատ	41,0	29,2	48,0	35,8
8) Յերկրորդական ճյուղիկտրատում				
9) Տերեվահատ	67,0	15,0	92,0	16,0
10) Մխախտահունձ				
11) Թելում	—	45,0	—	50,0
12) Թեկերի կախելը	—	4,7	—	4,5
13) Չորացածի դարսիլն ու դատարկելը	—	4,0	—	4,0
14) Թուկերից հանելը	36,0	4,0	35,0	4,0
15) Թուկերից իջեցնելը	—	8,5	—	8,3
16) Տեսակալորում	—	77,1	—	7,0
17) Փունջ կապելը	90,0	56,0	126,0	55,0
18) Հակ կապելը	9	3,0	12	3,0
19) Յիլիչների և դազիլների հավաքումը	21	10,0	26	10
Ընդամենը	380	270	480	293
Տոկոսներով	100,0	71,0	100	61,0

Բանվորական ուժի ծախսումը, վորը ինստիտուտը վորոշել է 1932 թվին խոշորատերև ձխախոտի 1 հեկտարի մշակման համար—270 մարդ-որը և մանրատերև ձխախոտի համար—293 մարդ-որը, համեմատած 1930 թվականին կուտնտեսությունների ծախսած ընդհանուր բանուժի հետ, կտա 30 տոկոս իջեցում, ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման:

Նորմաների վերջնական մշակման և ընդունման ժամանակ հարկավոր է ղեկավարվել Յերկրկիրտնտեսության

այն ցուցմունքներով, վոր «արտադրանքի նորմաները մշակվում են կուտնտեսություն վարչություն կողմից և այդ աշխատանքին ներգրավվում են լավագույն կուտնտեսականները, մանավանդ հարվածայինները, մրցակցողները և ագրո-անասնաբուժական պերսոնալը:

Մշակված նորմաներն ամպլյաման քննվում են արտադրական խորհրդակցություններում (բրիգադներին) և հաստատվում են կուտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից»:

Մխախտագործության մեքենայացման ու ռացիոնալացման աշխատանքները կատարելիս, մասնավորապես յիթե մենք անցնենք ձխախոտատունկի մեքենայացված ձևին, վին և ամբողջ բույսերով հավաքելու պարզացրած ձևին, բանուժի ծախսը, ըստ Մխախտագործության պետական ինստիտուտի սվյաչների, կլինի մոտավորապես 200 մարդ-որ՝ խոշորատերև ձխախոտի համար և 227 մարդ-որ—մանրատերև ձխախոտի համար: Այսպիսով ձխախոտի մեկ հեկտարի մշակման համար, համեմատած նախկին անհատական տնտեսությունների հետ, աշխատանքի քանակը կկրճատվի 55-60 տոկոսով:

Կասկածից դուրս է, վոր ձխախոտի տունկի յեվ մեակման աշխատանքի մեխենայացման շնորհիվ, նրա պահանջած աշխատանք կկրճատվի վոչ պակաս, քան 75 տոկոս յեվ 120-130 մարդ-որ միանգամայն բավական կլինի մեկ հեկտար ձխախոտ մեակելու համար, մինչդեռ առաջ ծախսվում էր 450-500 մարդ-որ:

Մխախտագործական կուտնտեսություններում և խորհատնտեսություններում աշխատանքի կազմակերպման մեջ արտադրական մեծ դեր պիտի խաղան արտադրական խորհրդակցությունները, մասնավորապես կանանց արտադրական խորհրդակցությունները, քանի վոր ձխախոտի տնտեսություն մեջ կնոջ աշխատանքի տեսակարար կշիռը բավական մեծ է և կազմում է ձխախոտագործության մեջ գործադրվող ամբողջ աշխատանքի 60-70 տոկոսը:

Բրիգադներում, ձխախոտագործական կոլտնտեսային ֆերմաներում և հենց կոլտնտեսութուններում արտադրական խորհրդակցութունները հսկայական կազմակերպիչ գործոն են հանդիսանում: Արտադրական խորհրդակցութունները կոլտնտեսային մասսաների ստեղծագործական նախաձեռնության և ակտիվության կենտրոնն են հանդիսանում, վորոնք (կոլտնտեսային մասսաները) մասնակից են դառնում սոցիալիստական խոշոր տնտեսության հսկայական մեխանիզմի շինարարությանն ու կառավարմանը:

Կոլտնտեսութուններում և բրիգադներում արտադրական խորհրդակցութուններին պատկանում է կազմակերպիչ ու ղեկավար դեր՝ սոցիոլոգիայի ու հարվածայնության ղեկավարման գործում:

Արտադրական խորհրդակցութունների ամբողջ գործնական աշխատանքը կոլտնտեսութուններում՝ նրանումն է կայանում, վոր նրանք կոլտնտեսային լայն մասսաների մասնակցությամբ մշակում ու լուծում են խոշոր տնտեսության բոլոր տնտեսական ու արտադրական հարցերը, նըպատակ ունենալով զբաղվորել կոլտնտեսության բոլոր արտադրական հնարավորութուններն և վերացնել յեղած թեթութունները:

«Արտադրական խորհրդակցութուններն անպայման պիտի քննեն հետեվյալը.—

1) Կոլտնտեսության արտադրական—ֆինանսական պլանը:

2) Թե ամբողջ կոլտնտեսության և թե մասնճյուղերի ու բրիգադների սեզոնային աշխատանքների բանվորական պլանները:

3) Արտադրանքի նորմաները:

4) Գործավարձային գնահատումներ:

5) Սոցիոլոգիայի և հարվածայնության պայմանագրերը:

6) Աշխատանքների վորակը:

7) Կարգադրերի կատարման ընթացքը:

8) Աշխատանքային ղիսցիպլինան:

9) Աշխատանքի հաշվառումը:

10) Ծուլերի և աշխիսցիպլինան խախտողների հարցը:

Արտադրական խորհրդակցութունների վորոշումները պետք է հաստատվեն կոլտնտեսության վարչության կողմից: (Կոլտնտեսութունների աշխատանքներին նվիրված համամիութենական կոլտնտեսային խորհրդակցության վորոշումից):

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅՈՑՄԱՆ ՅԵՎ ՈՒՑԻՈՆԱԼԱՅՄԱՆ ԽՆԳԻՐՆԵՐՆ ՅԵՎ ՍՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կազմակերպելով կոլտնտեսային ու խորհրտնտեսային խոշոր ձխախոտագործություն, մենք զրանով լուծում ենք գյուղատնտեսական արտադրության ամենագլխավոր խնդիրներից մեկը և այդպիսով պայմաններ ենք ստեղծում նրա կենտրոնացման և մեքենայացման համար: «Կոլտնտեսութունների մեծ նշանակութունը հենց նրանումն է կայանում, վոր նրանք իբրեւ բազա յեն հանդիսանում յերկրագործության մեջ մեքենաներ և տրակտորներ գործադրելու համար» (Ի. Ստալին)

Ծխախոտի տունկը կենտրոնացնելով միասնական հողային տարածության վրա, մենք հնարավորություն ունենք կենտրոնացնել նաև աշխատանքային պրոցեսները՝ ձխախոտը տնկելու և մշակելու ժամանակ:

Կենտրոնացումը նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, յեթե նույնիսկ ոգտագործվում են արտադրության այն միջոցները, վորոնք գոյություն ունեն կոլտնտեսութուններում և խորհրտնտեսութուններում: Կենտրոնացումը կրճատում է սածիլների տնտեսության կազմակերպման ծախքերը, ինչպես և տեխնիկական կառուցումների (չորանոցների, սրահների և այլն) կազմակերպմանը:

ծախքերը և դրա հետ միասին իջեցնում են ծխախոտայի արտադրանքի ինքնարժեքը:

Կոլտնտեսային ու խորհրտնտեսային ծխախոտագործութեան սոցիալիստական բնույթը, նրա կենտրոնացումն ու համախմբումը հնարավորութիւն է տալիս ավելի լայն շափով և մասսայական մասշտաբով ծավալել աշխատանքը՝ սոցիալիստական ծխախոտագործութեան ամենակարեւոր խնդիրներից մեկը — մեքենայացումն և ռացիոնալացումն իրագործելու համար:

«Աւստասանի պրոցեսների մեքենայացումը մեզ համար այն նոր յեղի վեճական ուլժն է, առանց վորի չի կարելի իրագործել վոչ մեր սեմպեր յեղի վոչ էլ արտադրության նոր մասշտաբները» (Ս. Կարին):

Մեքենայացումը հանդիսանում է արտադրության ռացիոնալացման անբաժանելի մասը: Թե մեքենայացումը յեղի քե ռացիոնալացումը ամենանեղ սեղն են սոցիալիստական ծրխախոտագործության զարգացման մեջ:

Անհատական տնտեսութիւնների կոտորակված, չնչին հողամասերում յեղած ծխախոտագործութեան հանդեպ կոլտնտեսային ու խորհրտնտեսային ծխախոտագործութեան առավելութիւնը նրանումն է կայանում, վոր յերկրամասի ծխախոտագործական կոլտնտեսութիւններն ու խորհրտնտեսութիւնները լայն բազա ունեն ծխախոտի տունկի և մըշակման յեղանակները մեքենայացնելու և ռացիոնալացնելու: Առաջիկա մի շարք տարիներում սոցիալիստական ծրխախոտագործութեանը մենք պետք է տանք սոցիալիզմի տեխնիկական — մեքենաներ, երեքտրականութիւն, խոշոր և տեխնիկապես բարձր կահավորված պլանտացիոն կառուցումներ: Մեր յերկրի ինդուստրացման, խորհրդային մեքենայինարարութեան վիթխարի հաջողութիւնները հնարավորութիւն են տալիս արդեն առաջիկա 2-3 տարում ծխախոտի արտադրութեան մեջ սակավ արդիւննավետ ձեւքի աշխատանքը փոխարինել մեքենայական աշխատանքով:

Այս հարցի լուծմանն արդեն ձեռնարկել են Դյուրատն-

տեսութեան համաժողովներական ինստիտուտը, Մխախոտագործութեան համաժողովներական ինստիտուտը և յերկրամասի մի շարք առաջավոր խորհրտնտեսութիւններն ու կոլտնտեսութիւնները: Մխախոտագործութեան զարգացման պատմութեան մեջ 1931 թվականը յերկրամասում հանդիսանում է առաջին արդի, յերբ գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման սեխնիկան յեղի սոցիալիստական յերկրագործութեան փորձառումների (պրակտիկների) — բանվորների և կոլտնտեսական գյուղացիների աշխատանքային հնարամտութիւնը բնավոր արդի այն դրույքը (ուսանովիս), վոր իբր քե քանի վոր ծխախոտը ամենաուս աշխատանք պահանջող սեխնիկական մեխույքներից մեկն է, ուրեմն անկարելի յե անցկացնել ծխախոտագործութեան մեքենայացման յեղի ռացիոնալացման միջոցառումները:

Սոցիալիստական յերկրագործութեան, գյուղատնտեսութեան ծխախոտագործական մասնաճյուղի մեքենայացման ու ռացիոնալացման բնագավառում մենք արդեն քիչ նվաճումներ չունենք: Հարկավոր է արագորեն կենսագործել այդ մեքենայացումն ու ռացիոնալացումը և դրա համար մոբիլիզացիայի յենթարկել բանվորական և կոլտնտեսային լայն մասսաներին:

Ահա սոցիալիստական ծխախոտագործութեան տեխնիկայի զարգացման հիմնական նվաճումները:—

Չերմոգային սեխտութիւն: Ինչպես հայտնի յե, ծխախոտի սածիլների տնտեսութիւն կազմակերպելու համար ամեն տարի հսկայական միջոցներ և ուլժեր են պահանջվում: Վորպեսզի 1 հեկտար ծխախոտ տնկելու համար ծրխախոտի սածիլ պատրաստել պետք է գործադրել վոչ պակաս, քան 30 մարդու և մի քանի հարյուր ոտքի արժողութեամբ զանազան տնտեսական կահավորանքներ (շրջանակներ, խտիրներ, աղբ, բրեր, ապակի, դուլեր, շրցաններ և այլն) ձեռք բերել: Մխախոտագործութեան պետական ինստիտուտը, հիմք ունենալով ռացիոնալիզատորական միջոցառումները և նրանց գործնական կիրառու-

մը կոլտնտեսություններում, հասավ այնպիսի արդյունքներին, վորոնցով հնարավոր եւ սածիլն ստանալ աճեցման ավելի հասարակ յեղանակով:

Միախոտազործության պետական ինստիտուտի հանձնարարած այդ միջոցառումները գործնականում կայանում են հետեւյալում. 1) աղբը (նավոզ) փոխարինվում եւ զետերի բերած հողանյութերով, հովիտների հողով—լեռնային զետակներին փիբրից. 2) սածիլի սերմերը ցանել 100 տոկոսով ավազոտ, վարակազերծ հողում, 3) այդ սերմերը ցանել 60 տոկոս ավազ եւ 40 տոկոս հող ունեցող տեղում եւ վերջապես, 4) այդ սերմերը ցանել այսպիսի խառն հողում.—ավազ— $\frac{1}{3}$ -ը դ մաս, գետահող— $\frac{1}{3}$ եւ բուսահող— $\frac{1}{3}$ մաս:

Սածիլն աճեցնելու բոլոր վերոհիշյալ յեղանակները, վորոնք հանձնարարված են պետական ծխախոտազործական ինստիտուտի կողմից, 1931 թվին կիրառվել են Աբինյան ոսյոնի «Ինդուստրիա», «Ալ ինտերնացիոնալ», «Նոր ուղի», «Հունվարի 9-ը», «Կոմսոմոլից» կոլտնտեսությունների փորձնական հողամասերում եւ դրական արդյունքներ են տվել:

Սածիլի աճեցման տվյալ յեղանակների առավելությունը կայանում եւ նրանում, վոր նրանց կիրառման զեպքում ել կարիք չի լինի աղբ պատրաստել, վորը կոլտնտեսություններում միշտ չի գտնվում հարկավոր քանակությամբ (500 եւ ավելի հեկտար տարածությամբ ծխախոտատունկի ջերմոցային տնտեսության հիմնարկների համար պահանջվում եւ տասնյակ հազարավոր սայլ), կվերանա աղբը բովելու անհրաժեշտությունը եւ միեվնույն ժամանակ կկրճատվի սածիլի քաղհանման համար հարկավոր բանավորական ուժով: Կրճատվում եւ աղբը փորփրելու դրամական միջոցների ծախքը եւ բարձրանում եւ սածիլի վորակը: Անաղբ հողում պակասում են, կամ բոլորովին չեն լինում ծխախոտի վնասատուները, վորոնցով հարուստ եւ ամբողջ հողը:

Սածիլային տնտեսության կաղմակերպման գոյություն ունեցող յեղանակի վերաբերմամբ մեծ ուշադրության եւ արժանի աղբը կամ անտառային բուսահողը բովելու ապարատը, վորը հնարել եւ Գարյաչի Կլյուչի ծխախոտազործական խորհտնտեսության մեխանիկ ընկ. Սվխոսուցովր: Ընկ. Սվխոտունովի այդ ապարատի ոգնությամբ Գարյաչի Կլյուչի խորհտնտեսությունը 1931 թվականի գարնանը ապահովեց խորհտնտեսության սածիլների համար 3450 խորանարդ մետր բուսահողի բովելը եւ դրանով ել ապահովեց 720 հեկտար ծխախոտի տունկը:

Ընկ. Սվխոտունովի ապարատի գործադրությամբ՝ բուսահողի բովման եւ վարակազերծ անելու ինքնարժեքը խորհտնտեսությանը նստեց 46 կոպեկ՝ բուսահողի մեկ խորախորհտնտեսությանը նստեց 16 կոպեկ (մեկ խորանարդ մետրին): Ապարատ 16 ուրբլի 88 կոպեկի (մեկ խորանարդ մետրին): Ապարատի գործադրության հետևանքով խորհտնտեսությունը 1931 թվի գարնանը ստացավ 56 հազար ուրբլու խնայողություն:

Ընկ. Սվխոտունովի ապարատը գյուտարվել եր 1930 թ. զեկտեմբերին, բայց ծխախոտազործության զեկավար սիստեմի մեղավորությամբ նա 1931 թվին մասսայական գործադրություն չունեցավ: Մինչդեռ այս ապարատի գործադրությունը հնարավորություն կտար մեկ տարվա ընթացքում խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում վոչ պակաս, քան 200—250 ուրբլու խնայողություն անել:

Ընկ. Սվխոտունովը, № 2 խորհտնտեսության մեխանիկը, բանվորական ծաղում ունի: Նա 42 տարեկան եւ Արտադրական ստաժը 22 տարի յի: Նրա հնարած ապարատի կառուցվածքն ու սկզբունքը բավականին պարզ են, բայց չափազանց եֆֆեկտավոր: Դա մի փայտե անոթ եւ, վորը հատված կոնուսի ձև ունի եւ ներքեվից լայն եւ նրա մեջտեղում տեղավորվում եւ շոգետար ցանցը՝ ոճաձև խողովակներով: Շոգին ստացվում եւ լոկոմոբիլից՝ 8—10 միլիտրից ներսով: Շոգին ստացվում եւ լոկոմոբիլից՝ 8—10 միլիտրից ներսով: Չոր շոգին անցկացնելիս (ապարատի մեջ) ճնշմամբ: Չոր շոգին անցկացնելիս (ապարատի մեջ) ճնշմամբ:

իջնում ե 1 և կեսից մինչև 2 մթնոլորդ: 95—100 աս-
տիճան ւաքությունից բուսահողը ամբողջովին, 100 տոկոս-
ով վարակաղերժ ե լինում: Ապարատը 20 րոպեյի ընթաց-
քում տալիս ե պատրաստի, բովված բուսահող: Այդ ժամա-
նակից 5 րոպե գնում ե ապարատը բեռնելու և դատարկելու
և 15 րոպե—բովվածն պրոցեսը կատարելու համար:

Ապարատին սպասարկում են 6 մարդ: Ապարատն ար-
ժե 1350 ուրլի: Բացի միջոցները խնայելուց, վոր կատար-
վում ե ընկ Սվիսաունովի ապարատով բուսահողը բովե-
լուց, 50-70 տոկոսով կրճատվում ե ծխախոտի սածիլի քաղ-
հանելու համար գործադրվող բանվորական ուժը, քանի վոր
բուսահողը 100 տոկոսով վարակաղերժ ե լինում:

Բացի վերը հիշված միջոցառումներից, ծխախոտագործա-
կան խորհանտեսությունները 1932 թվականի դարձանք
աղբը կամ անտառային բուսահողը շաղ տալու ձեռքի աշ-
խատանքը պիտի փոխարինեն մեքենայականով: Սածիլի
սերմերի ցանքը պիտի կատարվի ձեռքի ցանիչով: Պետք ե
մեքենայացվի ջրի մատակարարումը՝ սածիլը ջրելու համար:

Այս բոլորը հնարավորություն ե տալիս կրճատելու
գրամական ծախքերը, բանվորական ուժի գործադրու-
թյունը, ինչպես և հնարավորություն ե տալիս ստանալ ավելի
վաղ հասունացող և ավելի առողջ սածիլ:

Հողը մեքենայով մշակելու խնդիրը մենք վաղուց լու-
ծել ենք ամբողջովին և լիակատար չափով: Գլխավորը, ինչ
վոր ձեռք պետք ե բերել այս բնագավառում կոլտնտեսա-
յին ծխախոտագործության համար, դա հատուկ ՄՏԿ կազ-
մակերպումն ե, նրանց անհրաժեշտ գ. տ. ինվենտար մա-
տակարարելը, վորն առավել պետքական ե Հյուսիսային
Կովկասի լեռնային ու նախալեռնային դոտու պայմաննե-
րում ծխախոտացան հողերի իդեալական մշակման համար:
Աշնանավարը և գարնանը այդ աշնանավարի կրկնավարը
ծխախոտագործության ագրոտեխնիկայի պայմաններից
մեկն ե:

Միսխոսի ցեկումը: Մենք արդեն հիմնականում կարե-
լի յե ասել, լուծել ենք ծխախոտի տունկը մեքենայով կա-
տարելու խնդիրը և հնարավորություն ունենք առաջիկա
1-2 տարում՝ դետնափորներին և չիվիններին ամբողջովին
փոխարինել տնկող մեքենաներով:

1931 թվականին կուրջիկի ծխախոտագործական խորհ-
անտեսության մեջ (նախկին Մայկովի շրջան) փորձվեցին
հետևյալ յերեք տնկող մեքենաները.— 1) «Բրյուեր» տի-
պի, մոտոր ունեցող յերկու շարքանի տնկող մեքենա, 2)
«Գամիլտոն» տիպի, մոտոր ունեցող յերկու շարքանի մեքե-
նա և 3) մի շարքանի, «Բաժակ» տիպի, առանց մոտորի,
կցվող մեքենա:

Փորձելիս ամենալավ արդյունք ստացվել ե «Բրյուեր»
տիպի ամերիկական տնկող մեքենայից: Նա 10 ժամյա բան-
վորական որվա ընթացքում կարող ե տնկել 0,3—0,4 հեկտար:

Այժմ Խորհրդային Միության գլխական—տեխնիկա-
կան միաքը այս մեքենան յենթարկել ե արմատական վե-
րակառուցման: Ամենից առաջ նրա մոտորը վերացված ե և
նա կցվելու յե տրակտորին: Նա պիտի լինի վոչ թե 2, այլ
6 շարքանի: Այսպիսով նրա արտադրողականությունը
0,3—0,4 հեկտարից բարձրանում ե 1,2—1,5 հեկտարի, իսկ
ոժանդակ պրոցեսներին (ջրի տեղափոխություն, ջուրը գու-
շերի մեջ լցնելը, տունկի բաշխումը) մեքենայացվան դեպքում
այս մեքենայի արտադրողականությունը կարող ե բարձ-
րանալ մինչև 2 հեկտար 10 ժամյա բանվորական որում: Բա-
ցի այդ, միանգամայն հնարավոր ե ծխախոտը տնկել գիշե-
րը, ելեկտրական կամ նավթի լույսի տակ:

Մինչև անգամ մեկ հերթով աշխատելու դեպքում
«Բրյուեր» տնկող մեքենան հնարավորություն կտար մեկ
հեկտար ծխախոտ տնկելիս կրճատել աշխատանքը 70—80
տոկոսով, համեմատած ձեռքի աշխատանքի հետ: 1932
թվականի դարձան այս մեքենան վերջնական արտադրա-
կան փորձի կյենթարկվի: Սոցիալիստական արդյունաբերու-
թյունն արդեն այս մեքենան արտադրելու պատվեր ե ըս-
թյունն արդեն այս մեքենան արտադրելու պատվեր ե ըս-

տացել: 1932 թվի ծխախոտատուենկի կամպանիային բոլոր ծխախոտագործական խորհրտեսուությունները կուեննան մի քանի հատ այդ մեքենայից:

Այս տվյալները ցույց են տալիս, վոր միայն սոցիալիստական խոշոր տնտեսությունները, արտադրության մեքենայացման և ռացիոնալացման հիմունքով, տանում են իսկապես դեպի աշխատանքի թեթևացում, դեպի նրա բարձր արտադրողականությունը: «Զրվին» — ձեռքի ծանր աշխատանքի այդ պարզ գործիքը, շուտով թանդարան կհանձնվի:

Ծխախոտատուենկի ռացիոնալացման միջոցառումների թվին և պատկանում նաև ընկ. Պրիկոլոսիցի գյուտարարությունը:

Պրիկոլոտինը բանվոր և, Համկոմկուսի (բ) անդամ: Նա հնարել և փոսեր փորող ու նշող մեքենա, ջրի մեխանիկական մատակարարմամբ այն փոսերին, վորտեղ պետք և դրվեն տունկերը: Ընկ. Պրիկոլոտինի մեքենան իհարկե չի կարող փոխարինել «Բրյուեր» տիպի առավել հարմար մեքենային, բայց նրա կառուցվածքի պարզությունն և արտադրման եժանությունը հնարավորություն են տալիս ավելի արագորեն իրացնել այս մեքենան, մասնավորապես կոլտնտեսային սեկտորում:}

Ընկ. Պրիկոլոտինի մեքենայի գործադրությունը վերջնականապես չի վերացնում փոս բացողներին և տնկող կանանց աշխատանքը, բայց նրա շնորհիվ արդեն ավելորդ են դառնում փոս փորողի ու ջուր ցանոցի աշխատանքները և շատ ու շատ բարձրանում և տնկող կանանց աշխատանքի արտադրողականությունը:

Տուենի փոխարինումը ցանով: Ծխախոտի տնկելը ցանելով փոխարինելու խնդիրը դեռ վերջնականապես վորոշված չէ, սակայն այս ուղղությամբ կատարված փորձերն արդեն տվել են մի շարք գործնական արդյունքներ: Մախորկայի վերաբերմամբ այս խնդիրն ամբողջովին լուծված է: Ծխախոտի տունկը ցանով փոխարինելու պրոբլեմը մեծ համառությամբ մասսայական փորձեր կատար

րելու և գործադրելու դեպքում, միանգամայն լուծելի չէ Հյուսիսային Կովկասի պայմաններում, վորն ունի մեղմ կլիմա՝ մեծ վեգետացիոն ժամանակաշրջանով, վորը միանգամայն բավական է ծխախոտի հասունացման համար, յեթե նա ցանվի ապրիլի կեսերին, իսկ Սև-ծովի ափերում — նույնիսկ ապրիլի սկզբին: Այս ժամանակաշրջանում Հյուսիսային Կովկասի հարավային ռայոններում թեթև ցրտեր համարյա թե չեն լինում և ուրեմն վերանում և ծիլերի մըրսելու սպառնալիքը:

Տունկը ցանով փոխարինելը, այսինքն ծխախոտի տնկովի կուլտուրան ցանովի կուլտուրայի վերածելը միանգամայն վերացնում է սածիլային տնտեսությունը: Այսպիսով միայն մեր յերկրամասում կարող ենք տնտեսել տարեկան մի քանի միլիոն ռուբլի և վոչ պակաս, քան յերկու միլիոն մարդ-որվա բանվորական ույժ:

Մեկ հեկտար ծխախոտի (բանվորական ույժի ծախսման հետ միասին) անհրաժեշտ տնկարանի աճեցման համար պահանջվում է 70—80 բանվորական որ: Տունկը ցանով փոխարինելով, 1 հեկտար ծխախոտ ցանելու համար կպահանջվի 21 մարդ-որ (Ծխախոտագործության ինստիտուտի տվյալները):

Սակայն ծխախոտի տնկովի կուլտուրան ցանովի դարձնելը, բացի նրա ծիլերը ցրտերից փչանալու սպառնալիքից, դժվարանում է նաև ուրիշ, բնական, կլիմայական պայմաններով: Բավականաչափ անձրևների բացակայությունը, նրանց անժամանակ գալը վոչ միայն կվտանգեն ծխախոտի սերմերի ժամանակին ծիլ տալը, այլ և կարող են հասցնել մի այնպիսի դրության, յերբ այդ սերմերը բոլորովին չեն ծիլ:

Սակայն այս սպառնալիքն ևս կարելի չէ վերացնել սոցիալիստական խոշոր տնտեսության պայմաններում: Յերաշտի կամ բավականաչափ անձրև չգալու դեպքում ծխախոտի ցանքերը կարելի չէ ջրել արհեստականորեն, վերևից ջրակաթիլներ շող տվող ապարատով, վոր հաջողությամբ

գործադրվում է Արևմտյան Յեվրոպայի բանջարանոցային տնտեսութուններում և Սորհրդային Միութեան առանձին մասերում: Այստեղ անհրաժեշտ է նկատել, վոր հողն ողից ջրելու դեպքում բանջարանոցային կուլտուրաների բերքատվութունը բարձրանում է 2 անգամ. միևնույն ժամանակ կրճատվում է ջրի ծախքը—ջուրը ձխախոտադաշտը թողնելու հանդեպ 2 անգամ և սրսկիչներով ջրելու հանդեպ—2՞ տոկոսով:

Ցանի ապարատները փորձելիս, ձխախոտի սերմերն անմիջապես հողի մեջ ցանելու ժամանակ,—վորը պատրաստված է յեղիլ տունկի համար, ամենալավ արդյունքներն ստացվեցին Ֆրանսիական «Մոլինե» ցանիչից: Վատ արդյունք չտվին նաև մեր—ուկրաինական գյուղմեքենաշինարարական գործարանների «Կարմիր աստղ» և «Կարմիր ռանչ-պար» ցանիչները: Անհրաժեշտ է ավելի խնամքով տեղավորել այդ մեքենաների ցանող ապարատը և ամրացնող ապարատը վերակառուցել «Մոլինե» ցանիչի տիպով: Մեր պայմաններում դա միանգամայն հնարավոր է և բացի այդ, դրանով մենք ազատված կլինենք հիշյալ «Մոլինե» ցանիչը ներմուծելուց:

Ծխախոտի սածիլը ցանով փոխարինելու խնդիրը լուրջ խնդիր է: Նա ամենից առաջ պահանջում է հողի իրենալական մշակում և այդ հողի ավելի մանրակրկիտ խնամք: Այս խնդրի լուծումը գերադասելի յե նույնիսկ ձխախոտի սածիլը մեքենայով տնկելուց: Իրանով վերանում է տնկարանային տնտեսութուն կազմակերպելու անհրաժեշտութունը, հետևապես հսկայական միջոցներ են խնայվում և կրճատվում է բանվորական ույժի ծախքը: Այս բարդ խնդիրը մենք, ինչպես ել լինի, պետք է լուծենք:

Քաղնան: Վերջին մի շարք տարիներում, չնայելով հսկայական հաջողութուններին, վոր մենք ձեռք ենք բերել սոցիալիստական խոշոր—ձխախոտագործութեան կազմակերպման ասպարիդում, մենք ունենք անժամանակ քաղհանից ձխախոտի փչացման առանձին փաստեր: Ծխախոտի

ձեռքի քաղհանը, վոր կարիք է լինում կատարել յերկու անգամից վոչ պակաս, պահանջում է մեծ քանակութեամբ բանվորական ույժ—մոտավորապես 40—45 մարդ: որ ամեն մի հեկտարին: Ահա թե ինչու ձեռքի քաղհանը մեքենայականով—կուլտիվատորով փոխարինելը գործնական ու տնտեսական վիթխարի նշանակութուն ունի կոլտնտեսային ու խորհրտնտեսային ձխախոտագործութեան համար:

Փորձի ժամանակ ամենադրական արդյունք տվին յերկու քաղհանիչ մեքենաներ.—կախովի տրակտորային կուլտիվատորը և Ռոստովի «Կարմիր Ակսայ» գործարանի № 8 կուլտիվատորը: Հարկավոր է վերակառուցել այս կուլտիվատորի շրջանակն և կողքի դանակները: Վերացնելով այս պակասութունները, «Կարմիր Ակսայի» բանվորները արժեքավոր ծառայութուն մատուցած կլինեն սոցիալիստական ձխախոտագործութեանը: № 8 կուլտիվատորով հնարավոր է կատարել ձխախոտի յերկու քաղհան, մասնավորապես շարքամիջի քաղհանը, ձեռքի քաղհանի համար թողնելով միայն բույսերի միջև յեղած տարածութունը: Ձեռքի քաղհանը մեքենայականով փոխարինելու դեպքում բանվորական ույժը կրճատվում է վոչ պակաս, քան կիսով չափ: րական ույժը կրճատվում է վոչ պակաս, քան կիսով չափ:

Ծխախոտի սերեկամասը: Ծխախոտի տերևահատի մեքենայացման գործում մենք առայժմ մեծ նվաճումներ չունենք, բացի գյուղատնտես ընկ. Մարոկովի գյուտից—տերևահատի հատուկ մեքենայից: Այս մեքենան ներկայումս փորձի յե յենթարկվում:

Բացի դրանից, Ծխախոտագործութեան պետական ինստիտուտը ծրագրում է ուսցիտնալացման մի շարք միջոցառումներ, վորոնք պիտի գործադրվեն ներքին սպառման ձխախոտերի բերքահավաքի ժամանակ: Այդ միջոցառումներից են՝ տերևահատի քանակի կրճատումը և ձխախոտի տերևահատն ու չորացումն ամբողջական բույսերով:

Ծխախոտն ամբողջական բույսերով հավաքելու ժամանակ այս առիառաքի համար ձխախոտի բանվորական ույժը կհասնվում է վոչ պակաս, քան 3—4 անգամ:

Ծխախոտի քելուճը: Սա հողնեցուցիչ և սակավ արդյունավետ աշխատանք է: Ծխախոտը թելելու ժամանակ թելողը հարյուր հազարավոր տերևների հետ ե գործ ունենում: Միայն ամենափորձված թելողը կարող է 10 ժամյա բանավորական որվա ընթացքում տալ 20 թել ծխախոտ, իսկ սակավ վորակյալ թելողն այդ ժամանակվա ընթացքում կկարողանա թելել վոչ ավելի, քան 10—12 թել: 1000 հատ թել ծխախոտն ստացվում է միջին թվով 1 հեկտար ծխախոտից, հետևապես, մեկ հեկտար ծխախոտի տերևները թելելու համար միջին թվով պետք է ծախսել վոչ պակաս, քան 50—60 մարդ-որ:

Ընկ. Լեյբովսկին—«Սոյուզտարակ»-ի ծառայող, հնարել է թելող մեքենա, վորի համար նա ծխախոտագործության մեքենայացման մրցանակաբաշխության ժամանակ ստացել է յերուրդ պարգևվր: Առայժմ նրա մեքենայի արտադրողականութունը հավասար է 40—50 թել ծխախոտի—10 ժամյա բանվորական որում, յերբ մեքենայի վրա մեկ մարդ է աշխատում:

Նույնպիսի մի մեքենա յե հնարել ուսուցիչ ընկեր Մելիքովը: Նրա մեքենայի արտադրողականութունը, փորձելու ժամանակ, հավասար է 25—30 թելի, սակայն այս մեքենան, շնորհիվ իր կառուցվածքի, մեծ հույսեր է տալիս արտադրողականության բարձրացման տեսակետից: Սրանով նա նույնիսկ առավելութուններ ունի ընկ. Լեյբովսկու թելող մեքենայի հանդեպ, վորի արտադրողականութունն, ինչպես տեսանք, առայժմ բարձր է ընկ. Մելիքովի մեքենայի արտադրողականութունից:

Ընկ. Մելիքովի թելող մեքենայից արդեն կա յերեք հարյուր հատ և մոտ ապագայում, նրա վերակառուցման ու փոփոխման դեպքում, կարելի յե ցանկալի արդյունքների հասնել ծխախոտի թելումը մեքենայացնելու ասպարիզում:

Սակայն բանվորական միտքը գործում է ծխախոտի առևնկի և մշակման յեղանակները մեքենայացնելու ուղղու-

թյամբ: Նա առաջ է մղում ծխախոտագործության մեքենայացման ու ասպիրոնայացման տեխնիկան:

Ներկայումս «Սոյուզտարակի» գյուտարարությունների բյուրոյում կազմված է թելող մեքենայի 120 նախագիծ, տնկող մեքենայի—40 և ծխախոտի պլանտացիաների չորացման անտեսությունների մեքենայացման և վերակառուցման 12 նախագիծ:

Թելող մեքենաների գյուտարարության մրցանակաբաշխության ժամանակ խրախուսիչ պարգևներ ստացան ընկ. ընկ. Ստրոնիցը—Մոսկվայի մարդի կոշիկեղենի գործարանի մեխանիկը, Բասուր—նույն մարդի գործարաններից մեկի բանվորը, Նադեյիբը—Մայկոպի ուսյոնի կոլտնտեսականը: Կառուցված են ընկ. Խմարայի—կուբանցի բանվոր-գյուտարարի թելող մեքենաների դարիճակը (մոդելը), ընկ. Տոմազովի—Մայկոպի ուսյոնի կոլտնտեսական-գյուտարարի նույնպիսի մեքենաների դարիճակը:

Ընկ. Տոմազովի գյուտը խոստանում է մի ամբողջ հեղափոխություն մտցնել ծխախոտի տեխնիկական մշակման բնագավառում:

Ըստ հեղինակի նախագծի, նրա մեքենան ձեռքով թելելու գոյություն ունեցող արտադրողականությունը պետք է բարձրացնի քառասուն անգամ, այսինքն յեթե մեկ մարդը ձեռքով թելելով, որական տալիս է 15—20 ծխախոտի թել, ընկ. Տոմազովի մեքենան հնարավորություն կտա, յերկու բանվոր աշխատեցնելու դեպքում, որական տալ 800—1000 թել ծխախոտ:

Ծխախոտի մշակման ձևերը պարզացնելու վերաբերմամբ մեծ նշանակություն ունի Առևժողկոմատի և Մատակարարման ժողկոմատի գիրեկտիվը՝ ծխախոտի տեսակաւորման, փնջման և հակ կապելու ձևերը պարզացնելու և ստանդարտացնելու մասին:

Ծխախոտի արտադրանքի վորակային գնահատումն ըստ եյության կայանում է հետևյալում.—1) Էքսպորտային նշանակություն ունեցող ծխախոտի ընտրություն և 2) ար-

գյուղնաբերական նշանակութիւնն ունեցող ծխախոտի ընտրութիւնն—վորը վերամշակվում և իրացման ե յենթարկվում ԽՍՀՄ-ում: Արդյունաբերական նշանակութիւնն ունեցող ծխախոտերի հակ կապելը և ծրարելը տեղի յե ունենում ամենահասարակ ձևով:

Այսպիսով ծխախոտի տնկման, հավաքման և մշակման մեքենայացման ու ռացիոնալացման խնդիրը հիմնականում պետք է լուծված համարել: Այս բնագավառում յեղած բոլոր գյուղտերը գործնականորեն կիրառելու համար պահանջվում է ծխախոտի արտադրութիւնն ղեկավարների համառութիւնը, կարողութիւնն ու կոլտնտեսութիւններում այդ գյուղտերը գործադրելու ցանկութիւնը:

Յեւ, վոր գլխավորն է, պետք է ավելի մեծ չափով զորահավաքել ծխախոտագործ բանվորներին և կոլտնտեսականներին՝ ավելի մեծ ստեղծագործական աշխատանք կատարելու՝ ծխախոտագործութիւնն մեքենայացման և ռացիոնալացման ասպարիզում:

ԾԽԱԽՈՏԻ ՉՈՐԱՑՈՒՄԸ

Տեխնիկական, պլանտացիոն կառուցումները, վորոնք մենք պետք է կատարենք և արդեն կատարում ենք մեր սոցիալիստական ծխախոտագործութիւնն համար, պետք է ամբողջովին համապատասխանեն խոշոր, կենտրոնացած ծխախոտային արտադրութիւնն: Յանքաստարածութիւնն կենտրոնացման հետ միասին մենք պետք է նույնպիսի աշխատանք կատարենք կոլտնտեսութիւնների և խորհրտնտեսութիւնների ծխախոտի արտադրութիւնն մեջ չորանոցային տնտեսութիւնն կազմակերպման ու շինարարութիւնն ասպարիզում: Մենք պե՛տք է կառուցենք վոչ թե հասարակ չորանոցներ, այլ ծխախոտային արտադրական կոմբինատներ, այդ կոմբինատներում կենտրոնացնելով ծխախոտի չորացումը, Ֆերմենացիան յեյ մակուսը—միկչով ցրա վերջնական հանձնումը մբերող կայաններին, կամ ծխախոտագործարաններին:

Ծածանակակից չորանոցային տնտեսութիւնը, վոր վարում են խորհրտնտեսութիւններն ու կոլտնտեսութիւնները, չի բավարարում սոցիալիստական խոշոր ծխախոտագործութիւնն պահանջներին: Բացակայում են տեխնիկական սպառազինման բոլոր նշանները, ձեռքի աշխատանքն այստեղ ամենամեծ տեղն է բռնում:

Կոլտնտեսութիւնների և խորհրտնտեսութիւնների ծխախոտագործութիւնն տեխնիկական սպառազինման պրիմիտիվ վիճակի մասին կարելի է դատել թեկուզ նրանից, վոր յերկրամասում ծխախոտագործութիւնն զարգացման ամբողջ պատմութիւնն ընթացքում համարյա թե չեն յեղել տեխնիկական, կառուցվածքային վորեւէ փոփոխութիւններ:

Ծխախոտագործական կոլտնտեսութիւններում ու խորհրտնտեսութիւններում հումուլթի մշակման արտադրական կոմբինատների շինարարութիւնն մենք պետք է առաջադրենք այսպիսի պահանջներ.— առաջին, արտադրութիւնն և կոլտնտեսականները աշխատանքային պրոցեսներն ամենամեծ չափով կենտրոնացնել այս ձեռնարկութիւնն մեջ: Չորացումը, արհեստական ֆերմենացիան և, վերջամեջ, ծխախոտերը վերջնական մշակումը—այս բոլոր արպես, ծխախոտերը վերջնական պետք է կենտրոնացվեն արտադրական պրոցեսները պետք է կենտրոնացվեն խորհրական կոմբինատում: Վերջինս պետք է ընդգրկել խորհրտնտեսութիւնների բանվորներից կամ կոլտնտեսականները վորչ պակաս, քան 200-300 մարդու աշխատանք և նրանում պետք է պահպանվեն մանր-խմբակային և անհատական գործավարձի արտադրական սկզբունքները, որինակելի կերպով պետք է հաշվառել յենթարկվի յուրաքանչյուր կոմբինատի կամ կոլտնտեսականի աշխատանքը: 200—300 հեկտար ծխախոտացանք ունեցող ասպարանքային ֆերմայում այդպիսի արտադրական ֆերմայի թիվը պետի լինի 2-ից վոչ պակաս:

Յեւրոզ, աշխատանքային պրոցեսները մեքենայացումն ու ռացիոնալացումը պետք է հանդիսանա այդպիսի կոմբինատ-ձեռնարկութեան արտադրական գործունեութեան հիմնական բովանդակութեանը: Ծխախոտի թելելու աշխատանքների մեքենայացումը թելող մեքենայի միջոցով, նրա ելեկտրո-չորացումը, ելեկտրո-ֆերմենտացիան, վագոնների պարկի մեքենայացումը, ծխախոտի մշակման ու ծրարման աշխատանքների մեքենայացումը—այս բոլորը մոտ ժամանակներս պետք է կիրառվի գործնականում: Ելեկտրականութեանը—սոցիալիզմի տեխնիկան է: Ահա թե ինչու կոլտնտեսութեաններում ու խորհրտնտեսութեաններում ծխախոտի արտադրանքի մշակման արտադրանքի կոմբինատների շինարարութեան ժամանակ, հենց այժմ, մենք պետք է յեղենք նրանց հետագա, լրակատար ելեկտրոֆիզացիայի հեռանկարից:

Յեւրոզ, կոլտնտեսային գյուղացիութեան քաղաքական ու կուլտուրական վերափոխման համար պահանջվում է հսկայական աշխատանք: Մենք նրան պետք է դարձնենք սոցիալիստական հասարակութեան ակտիվ և զիտակից կառուցող:

Ահա թե ինչու ծխախոտագործութեան արտադրական կոմբինատների շինարարութեան ասպարիզում մենք պետք է յեղենք ունենանք այն պայմաններն ու նախադրյալները, վորոնցով պիտի վերափոխվի կոլտնտեսային գյուղացիութեան ամբողջ հոգեբանութեանն ու կենցաղը: Մենք պետք է վոչ միայն ամենամեծ չափով կենտրոնացնենք աշխատանքային պրոցեսներն արտադրական կոմբինատում—հաջողեցնելով կոլտնտեսականների աշխատանքի ամենամեծ չափով համայնացումը—այլ և պայմաններ ստեղծենք կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային սպասարկման համար:

Յուրաքանչյուր արտադրական կոմբինատին կից պետք է կառուցվի շենք՝ կարմիր անկյան և սնունդ ստանալու համար:

Ահա այն անհրաժեշտ պահանջները, վոր մենք պետք է առաջադրենք կոլտնտեսային ծխախոտագործական ասպարանքային ֆերմաների, ինչպես և ծխախոտագործական խորհրտնտեսութեանների համար տեխնիկական կառուցումների շինարարութեանը: Ծինարարական կազմակերպութեանների ղեկավարները, ինչպես նաև կոլտնտեսային կազմակերպութեանների ղեկավարները, պետք է սկսեն պլաններ մշակել ծխախոտագործական խոշոր տնտեսութեան մեջ արտադրական կոմբինատներ կառուցելու համար, վորոնք բավարարում են սոցիալիստական ծխախոտագործութեան պահանջները:

Բացի այն կազմակերպչական-արտադրական խնդիրներից, վորոնք մոտակա ժամանակներս կանգնած են սոցիալիստական ծխախոտագործութեան առաջ—ծխախոտատունկի տարածութեան ավելացում, սլայքար բերքատվութեան ու վորակի համար—մենք պետք է նաև ձեռնարկենք կոլտնտեսութեաններում ու խորհրտնտեսութեաններում արդեն գոյութեան ունեցող տեխնիկական վերակառուցման: Այստեղ կատարել առանձին պրոցեսների մեքենայացման համապատասխան աշխատանք, կառուցել տեղական նյութերից անհրաժեշտ շենքեր՝ կոլտնտեսականների և խորհրտնտեսութեանների բանվորների կուլտուր-կենցաղային սպասարկման համար—ահա մեր մոտակա անելիքը:

«Սոյուզտարակի» խորտնտեսային վարչութեանը 1932 թվականին անց է կացնելու խորհրտնտեսութեանների չորանոցային տնտեսութեան մեքենայացման աշխատանքները: Մասնավորապես պետք է մեքենայացվի վագոնների պարկը: Պետք է փոքրիկ կուեստեր (ուլիկներ) շինվեն այն վագոններին, վորոնք ծխախոտը չորացնելու ժամանակ ոգտագործվում են ծխախոտը կախ տալու համար, իսկ սեյսերի վրա յերկաթաշերտեր ուղիտի դրվեն:

Սրանով մեծ չափով կարողանա վագոնների տեղափոխութեանը սրահներից և դեպի սրահները, ավելի քան կիսով չափ կկրճատվի մարդկային եներգիայի գործադրու-

թյունը: ներկայումս այսպիսի յեղանակ զոյություն ունի.—
ձխախոտաշարքը կախ տված վագոնը քշում են վոչ պակաս
քան 4 տղամարդ, կամ 6 կին: Ռացիոնարացման միջոցառում-
ներն անցկացնելով—իսկ նրանց արդեն ձեռնարկել են
խորհրտատեսուցիությունները—վագոնը կարող են տեղափոխել
1—2 մարդ:

Կոլտնտեսուցիությունները նույնպես պետք է իրենց չո-
րանոցային տնտեսուցիան մեջ անցկացնեն այդպիսի մի-
ջոցառում և սրա կիրառման համար մոբիլիզացիայի յեն-
թարկեն բոլոր ռեսուրսները: Մետաղի պակասուցիան հե-
տևանքով—վորն աշտ մեծ չափով բավարարում է խոշոր
արգյունաբերուցիան պահանջները—ժամանակավորապես
կարելի յե կոլտնտեսուցիությունների չորանոցային տնտեսու-
ցիան մեջ վագոնների տեղափոխուցիությունը կատարել փայ-
տե ուղիկները միջոցով, վերջիններս շինելով ամուր տեսա-
կի փայտից: Մեծ նշանակուցիուն ունի ձխախոտագործա-
կան խորհրտատեսուցիություններում և կոլտնտեսուցիություններում
տրանսպորտը, ձխախոտի տերեհատի ժամանակ նրան հե-
ռավոր հողամասերից տեղափոխելու համար: Ծխախոտա-
գործական տնտեսուցիանը ավտո-տրանսպորտ, կամ տրակ-
տորային քանր տրամադրելը նույնպես որվա հերթական
խնդիր է: Տրանսպորտը ձխախոտի տնտեսուցիանը հարկա-
վոր է վոչ միայն ձխախոտի բերքահավաքի, այլ և նրա
մշակման ժամանակ, ձխախոտը դեպի մթերակայաններն ու
յերկաթուղային կայանները տեղափոխելու համար:

Մեքենա-տրակտորային կայանների վրա խոշոր չա-
փով պատասխանատուցիուն է ընկնում հեռավոր վայրե-
րից ձխախոտն իր ժամանակին ուղարկելու համար: Այս
նպատակով մեքենա-տրակտորային կայաններին պետք է
տրամադրվի առանձին, կցվող տրանսպորտ, ձխախոտը տե-
ղափոխելու համար:

Յերկրամասի ձխախոտագործական տնտեսուցիան առ-
ջև դնելով նոր տեխնիկական հիմունքներով տեխնիկական
կառուցումների մեծ խնդիրները, մենք պետք է ասենք, վոր

կարտնտեսուցիություններում խորհրդային ու կուսակցական
կազմակերպուցիությունները այդ խնդիրները կիրագործեն այն
պայմանով, յեթե նրանք միջոցների և մասնավորապես
անտառանյութերի մեծ մասը գտնեն հենց տեղում: Համար-
յա բոլոր ձխախոտագործական ռայոններն ունեն տեղական
նշանակուցիուն ունեցող անտառանյութեր—վոչ միայն բա-
վականաչափ քանակուցիամբ, այլ և ավելցուկ, քանի վոր
Հյուսիսային Կովկասի լեռնային ու նախալեռնային վայրե-
րը հարուստ են անտառներով:

Ջրամատակարարում: Ծխախոտագործական տնտեսու-
ցիան մեջ ջուրը հիմնական գործոններից մեկն է, վորից
կախված է սածիլի տնտեսուցիան և ձխախոտի խորհրտ-
տեսական և կոլտնտեսային դաշտերի բարրուցիունը:

Միջին թվով մեկ հեկտար ձխախոտատունկի համար
պահանջվում է 2500—3000 դույլ, կամ 25—30 խորանարդ
մետր ջուր: Ջերմոցներում ձխախոտի սածիլի ցանված տա-
րածուցիան յուրաքանչյուր քառակուսի մետրի համար պա-
հանջվում է 0,5 դույլ ջուր:

200 հեկտար ձխախոտ տնկելու համար անհրաժեշտ է
1,000000 դույլ, կամ 10,000 խորանարդ մետր ջուր:

Ծխախոտի պլանտացիաների ջրամատակարարման հին
յեղանակը, վոր գործադրում էին անհատական տնտե-
սուցիությունները, սահմանափակվելով փոքրիկ լճակի կառուց-
մամբ, 20—30 դույլանոց տակառով և վերջապես, ձեռքով
ջրելով—այդ յեղանակը բոլորովին անընդունելի յե սոցիա-
լիստական խոշոր ձխախոտագործուցիան համար: Նա վոչ
միայն չի ապահովում լիակատար չափով և իր ժամանակին
ջրամատակարարումը խոշոր ջերմոցային տնտեսուցիան և
ձխախոտագործական դաշտերին, այլ և հակասում է հենց
սոցիալիստական տնտեսուցիան ընույթին, վորպես անար-
դյունավետ մի յեղանակ, վորը ջրատում է խոշոր տնտեսու-
ցիան ույժերն ու միջոցները:

Ինչպես լուծել խոշոր, սոցիալիստական ձխախոտա-
գործուցիան ջրամատակարարման խնդիրը: Պետք է կա-

ուղեղ ասանյակ միլիոնավոր դույլ ջուր տարագությամբ ջրանոցներ և արտեզյան ջրհորներ այնտեղ, վորտեղ ջրանոցներ կառուցելը հնարավոր չէ:

Իրա հետ միասին, սոցիալիստական տնտեսութեան ջրամատակարարումը պետք է անպայման մեքենայացվի: Տրակտորը կամ ներքին այրման շարժիչը, կենտրոնախուռ ջրհանը, ջրամղիչ աշտարակները, ջրմուղի ցանցը և, վերջապես, բաշխիչ թևերը դույլերի փոխարեն— ահա թե ինչը պետք է դառնա ջրամատակարարման սկզբունք սոցիալիստական խոշոր ծխախոտագործութեան մեջ:

Սակայն արդյոք մենք այժմ կարո՞ղ ենք խորհանտեսութեաններին ու կուտնտեսութեաններին տալ այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է այդպիսի ջրամատակարարման կազմակերպման համար և արդյոք նպատակահարմա՞ր է կառուցել հիմնական, թանկարժեք շենքեր՝ ջրմուղի ցանցով:

Այս, առաջին հայացքից իբր թե «որինական» հարցը չունի սեյալ հիմք, նա ուղղված է դեպի ծխախոտագործական խոշոր տնտեսութեաններին ջրամատակարարման կազմակերպման վիժումը, վորոնց վրա մենք ամեն տարի տասնյակ և հարյուր միլիոնների անարդյունավետ ծախքեր ենք անում:

Մի շարք կուտնտեսութեաններում և խորհանտեսութեաններում մեկ տակառ ջրի արժեքը միջին թվով նստում է մեկ ուղբի, կամ վոչ պակաս, քան 3—4 կոպեկ մի դույլը: Այսպիսով 200 հեկտար ծխախոտ անկելու և ջրելու համար պետք է ծախսել ամեն տարի 30—40 հազար ու:

Սոշոր տնտեսութեանը ջրով միանգամայն ապահովող եժան ջրամատակարարում կազմակերպելու համար պետք է լայնորեն ոգտագործել ծխախոտագործական խորհանտեսութեաններին փորձը, մասնավորապես Կարյաչի-Կլյուչի № 2 խորհանտեսութեան փորձը:

2. Խորհանտեսութեան մեջ ջրամատակարարման սկզբունքն այսպես է.— ջուրը լճակից, ժամանակավորապես շինված ջրամղիչի միջոցով տրվում է կենտրոնական ջրամ-

բարը: Մածիլային տնտեսութեան տերթադրիայի վրա բերվեցին տեղական նշանակութեան անտառանյութերից շինված անոթներ, յուրաքանչյուրը 250 դույլ տարողութեամբ: Արանց մեջ ջուրը հոսում է կենտրոնական ջրամբարից, վորոշ բարձրութեանից բնական ճնշման միջոցով: Նախնական, բնական տաքացումից հետո ջուրը ծախսվում է սածիլը ջրելու համար: Նույնպիսի սկզբունք է կիրառել խորհանտեսութեանը նաև ծխախոտի տնկման ժամանակ:

Այս միջոցառումն ապահովեց խորհանտեսութեան թե սածիլների և թե 720 հեկտար տարածութեամբ ծխախոտադաշտերի ջրամատակարարումը: Այդ տարածութեանը խորհանտեսութեանը յուրացրել է 1931 թ.:

Խորհանտեսութեան մեջ զգալի չափով իջավ ջրամատակարարման ինքնարժեքը և տակառներով ջուր տեղափոխելու բանվորական ուժը կրճատվեց: Խորհանտեսութեանը ջրամատակարարման ինքնարժեքը իջեցրեց 15 անգամ, համեմատած ջուրը տակառներով տեղափոխելու հետ:

Ջրամատակարարման այս սկզբունքի նախաձեռնողը յեղել է խորհանտեսութեան մեխանիկ ընկ. Սվիստունովը:

Ընկ. Սվիստունովը—սոցիալիստական ծխախոտագործութեան ենարւղիաստը—անդուլ աշխատում է ծխախոտագործութեան մեքենայացման համար: Նա արդեն հորինել է ջրամատակարարման սիստեմը, վորով ջրմուղը պիտի լինի շարժական, մասերի բաժանվող ու միացվող, վորի նպատակն է խնայել նյութերինը խողովակներ դնելիս: Ընկ. Սվիստունովի առաջարկած շարժական ջրմուղի ցանցի յերկարութեանը կարելի յե հասցնել 2 և ավելի կիլոմետրի: Նախադժի համաձայն, մեկ դույլ ջրի արժեքը պետք է նրստի 0,1 կոպեկ, փոխանակ 3,4 կոպեկի, վոր նստում է խորհանտեսութեաններում ու կուտնտեսութեաններում գոյութեան ունեցող ջրամատակարարման յեղանակով:

Վորովհետև ջրմուղային ստանդարտ կառուցվածքները թանկ են և ձեռնաու չեն՝ ջրի ոգտագործման կարճ ժամկետերի հետևանքով (այդ ժամկետը մոտավորապես 40

որից մինչև 2 ամիս ե մեկ տարվա ընթացքում), ուստի «Սոյուզտարակի խորհրդատեսային վարչութիւնը 1932 թվականին ջրամատակարարման լիակատար մեքենայացման փորձ ե կատարում Չերնիգովսկու ծխախոտագործական խոշոր տնտեսութեան մեջ, աշխատանքի ժամանակ լճակներից ջուրը մատակարարելու շարժական ազդեղատաների կառուցման սկզբունքով:

Այս սկզբունքն իր պարզութեամբ ե արդյունավետութեամբ՝ ջրով միանգամայն կապահովի 800—1000 հեկտար տարածութիւն: Նրա կառուցվածքն այսպես ե.—տրակտորային մեծ սայլերի վրա շինվում ե ջրամատակարար ագրեգատ, վորը բաղկացած ե 8—10 ուժանոց մի փոքրիկ շարժիչից, կենտրոնախույս ջրամղիչից, ջուրը ձծող պարուրածն թևից ե մի այլ թևից, վորը ջուրը առլիս ե ծխախոտի տնկման ուղղութեամբ:

Հաղորդիչ կամ ճնշիչ թևը միեւնույն ժամանակ ջուրը բաշխում ե ծխախոտի տնկման գծով: Այս թևը պետք ե ունենա 500 մետր յերկարութիւն ե մի քանի ավելի փոքր թևեր՝ 50 մետր յերկարութեամբ, առանձին մասերում աշխատող բրիգադներին սպասարկելու համար:

Ջրելու այդպիսի յեղանակի դեպքում կարելի յե սպասարկել բրիգադներին 200 հեկտար տարածութեան վրա ծխախոտը միաժամանակ տնկելիս:

Այն տեղերում, վորտեղ բնական լճակները բաժանված են աշխատանքի տեղից, ջրամատակարարման հիշյալ սխեմայի դեպքում, կարելի յե կառուցել արհեստական լճակներ, վորոշ տարածութեամբ իրարից հեռու, ե այդպիսով, գլխավոր լճակից ջուրը այդ լճակների մեջ հավաքելով, մատակարարել աշխատանքի տեղին:

4—5 հատ ջրամատակարար ազդեղատաները միանգամայն բավական են ջուրը 1 ե կես—2 կիլոմետր տարածութեամբ մղելու համար: 560 խորանարդ մետր կամ 56,000 գույլ պարունակութեամբ լճակը լցնելու համար, ջուրն ուրիշ լճակից տալով, պետք ե դնել կենտրոնախույս ջրամ-

ղիչներ 3 կամ 5 ուժանոց մատորով, վորը կարող ե ջուրը բարձրացնել 11 մետր, իսկ դրա համար հարկավոր կլինի 15 ժամ $(560 \times 80 : 3000 = 14,93 \text{ ժամ})$:

Թևեր (շլանգ) ձեռք բերելու ե յերեք շարժական ջրավիչով սայլակների շինվածքի ծախքը կնստի 10,000 ուրբի: Ջուրը տակառներով տեղափոխելու ծախքերի հանդեպ կլինի մեկ հեկտարից 50 ուրբու խնայողութիւն:

Ջրամատակարարման այս սկզբունքի նախաձեռնողն ե բանվոր-կոմունիստ ընկ. Բասովը: Ջրամատակարարման այս սկզբունքը, ինչպես մենք արդեն մատնանշեցինք, նա 1932 թվին իրագործում ե Չերնիգովսկու № 1 ծխախոտագործական խորհրդատեսութեան մեջ:

Սոցիալիստական խոշոր ծխախոտագործութեան կազմակերպման սխեմայում ջրամատակարարումն ունի հսկայական նշանակութիւն: Խորհրդատեսութիւններն ու կոլտընտեսութիւններն ամենամտ ժամանակներումս պետք ե ստանան ե կարող են ստանալ եժան ե բավականաչափ ջուր՝ ծխախոտի պլանտացիաների համար:

Անտառապահում: Չուտ ծխախոտագործական ուսոններում յեղած հողերի մեծամասնութիւնն իր վորակային հատկութիւններով, առանց նրանց նախապես մաքրելու մոլախոտերից ե առանց մեծ քանակութեամբ հանքային պարարտանյութերի, անպետք են ծխախոտ տնկելու համար:

Յերկրամասի լեռնային ու նախալեռնային գոտու ծխախոտագործական ուսոններում մենք պետք ե աշխատենք նորանոր հողեր մշակել, նրանց անտառներից մաքրելով: Միայն նախկին կուբանի յերեք գուտ ծխախոտային ուսոններում (Գարյաչի-Կլուչի, Արինյան ե Սեվերյան) «անպետք» հողերի քանակը, վորոնց կարելի յե հաջողութեամբ մաքրել անտառներից, հասնում ե 122 հազար հեկտարի: Այդ մի քանի անգամ դերազանցում ե ամբողջ յերկրամասում ներկայումս ծխախոտերով բոնված հողերի քանակը: Որինակ, Սեվերյան ուսոնում անտառը բոնում ե

չի արված դասընթացքներ կազմակերպելու ուղղութեամբ։
Ծխախոտի մասնագետներն առաջացել են անմիջապէս
գործնականում, առանց տեսական պատրաստութեան։

Հարկավոր է անմիջապէս անցնել դասընթացքների
կազմակերպման աշխատանքներին, վորով հնարավոր կլինի
տեսականով լուսաբանել այն ճանապարհը, վորով անցնե-
լու յեն շարքային կոլտնտեսականներից զուրս յեկած ծը-
խախոտագործութեան մասնագետ կազմակերպիչները։

1931 թվականը բեկման տարի յեր մեր յերկրամասի
սոցիալիստական ծխախոտագործութեան համար կազբեր
պատրաստելու բնագավառում։ Կուբանի դուրախտնտեսա-
կան ինստիտուտը միայն 1931 թվականին տվեց 20 մաս-
նագետ-ծխախոտագործ շրջանավարտներ։

Դասընթացքներ կազմակերպելու ուղղութեամբ զգալի
աշխատանք կատարվեց։

1931 թվականին դասընթացքներ ավարտեցին 888
մարդ, վորոնցից 832-ը պատրաստվեցին իբրեւ բրիգադիրներ։
Բացված են ծխախոտագործական յերեք տեխնիկումներ։

Բայց այս բոլորը բավական չէ։ Ծխախոտագործու-
թեան մեքենայացման ու ռացիոնալացման խնդիրները լու-
ծելու համար արդեն հենց այժմ պահանջվում է մասնագետ-
ները—ինժեներները և տեխնիկ ծխախոտագործները կադ-
րերի առանձին կատեգորիա, վորոնք կարող են վոչ միայն
գլուխ հանել ազրոտեխնիկայի հարցերը, այլ և յերկրամա-
սի խոշոր սոցիալիստական ծխախոտագործական տնտեսու-
թեան մեջ մեքենաները գործադրելու հարցերը։

Հարկավոր է առանձնահատուկ ուշադրութեամբ դարձ-
նել լավագուշտ, հարվածային կոլտնտեսականներից և խորհ-
տնախոտութեան ղեկավարներից մասսայական կազբեր
պատրաստելու վրա։

Չի կարելի խոսել կոլտնտեսութեան ղեկավարների կազմակերպ-
չական-տնտեսական ամրապնդման մասին, յեթե ռազմա-
կազմակերպչական կազմակերպութեան ղեկավարները հոգ չեն առ-
նում կոլտնտեսային կազբերի մասին։ Բրիգադիրը, վորպէս

կոլտնտեսային արտադրութեան կազմակերպիչի դերը ցարձ-
րացնելու հետ մեկտեղ, մենք չենք կարող մի կողմ թող-
նել այն աշխատանքը, վոր մենք սկսեք է կատարենք տն-
տեսական ղեկավար և այլ աշխատանքների համար կոլ-
տնտեսային ակտիվի դաստիարակման և սոսաջ քաշման ուղ-
ղութեամբ։ Կոլտնտեսային ակտիվի առաջ քաշման և դաս-
տիարակման խնդիրը մեր կուսակցութեան կենտկոմը համա-
րում է կուսակցական և կոլտնտեսային կազմակերպութե-
ան ղեկավարների կարեւորագուշտ քաղաքական խնդիրը։

Կազբերի համար մղվող պայքարը, կոլտնտեսային
ակտիվի ստեղծման, բրիգադայի համար մղվող պայքարը
կոլտնտեսութեան ղեկավարների կազմակերպչական-տնտեսական ամ-
րապնդման հիմնական ողակներից մեկն է՝ նրանց զար-
գացման ներկա արտելային շրջանում։

Կազբերի համար մղվող պայքարը միևնուշտ ժամանակ
պայքար է տեխնիկայի, սոցիալիստական ծխախոտագոր-
ծութեան վորակի համար։

ՊԱՅԿԱՐ ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական ծխախոտագործութեան վորակային
ցուցիչների խնդիրը կենտրոնական է նրա (ծխախոտա-
գործութեան) հետագա զարգացման և ձեռք բերված հաջո-
ղութեանն ամրապնդելու առաջնությունը։

Սոցիալիստական ծխախոտագործութեան նոր ձեւ-
կոլտնտեսային ծխախոտագործական ապրանքային ֆերմա-
ները—պետք է հիմնական բազա դառնա ծխախոտային
արտադրանքի վորակի և ծխախոտի բերքի բարձրացման
հարցերը լուծելիս։ Այդ նոր ձեւ պետք է ամրապնդի ծը-
խախոտի արդյունաբերութեան հումուշթային բազան և
կոլտնտեսային արտադրութեան ծխախոտագործական ճյու-
ղը դարձնի բարձր ապրանքային և բարձր վորակային։

Միայն այս հիմունքով հնարավոր է ծխախոտագործական կոլտնտեսուծիյունների հետագա զարգացումն ու կազմակերպչական-տնտեսական ամրապնդումը:

Կոլտնտեսային ծխախոտագործական Ֆերման կազմակերպվում է յուրաքանչյուր կոլտնտեսուծիյան մեջ, վորը ունի ծխախոտատունկի վոչ պակաս, քան 25 հեկտար տարածութուն և բոլոր անհրաժեշտ պայմանները՝ խոշոր ծխախոտագործության, վորպես տնտեսության հատուկ մասնճյուղի կազմակերպման համար:

Կոլտնտեսային ծխախոտագործական ապրանքային Ֆերմաների ընդհանուր ղեկավարությունն իրագործվում է Կոլտնտեսային ծխախոտակենտրոնի միջոցով, վորն այսպիսի Ֆերմաներ ունեցող կոլտնտեսուծիյունների հետ կենքուս է հատուկ պայմանագրեր, վորոնցով վորոշվում են կոլտնտեսուծիյունների և Կոլտնտեսային ծխախոտակենտրոնի փոխհարաբերությունները:

Կոլտնտեսային ծխախոտագործական Ֆերման հանդիսանում է ծխախոտագործական կոլտնտեսության բազմակացրիչ մասը. նա կազմակերպում է ծխախոտի արտադրությունը, դնելով այն ավելի բարձր տեխնիկական հիմքի վրա և արդյունաբերությանը տալով բավականաչափ բարձրորակ արտադրանք:

Մինչև 1932 թվականի հունվարի մեկը յերկրամասի ծխախոտագործական կոլտնտեսություններում արդեն կազմակերպված էր 332 կոլտնտեսային ծխախոտագործական Ֆերմա, վորոնք ընդգրկում էին ծխախոտատունկի 32,349 հեկտար տարածութուն:

1932 թվականին յերկրամասում արդեն կազմակերպվածների հետ ընդամենը կլինի 400 կոլտնտեսային ծխախոտագործական ապրանքային Ֆերմա, ծխախոտատունկի 38,530 հեկտար տարածությամբ: Յուրաքանչյուր այդպիսի Ֆերմայի տարածությունը միջին թվով կլինի ուրեմն 95-100 հեկտար, վոր 200 անգամ գերադանցում է նախկին անհատական տնտեսությունների միջին չափից:

Յեթե դեռ 1929 թվականին յերկրամասում ծխախոտատունկի 17,000 հեկտարը կենտրոնացված էր 31,000 անհատական տնտեսությունների ձեռքում, ապա սոցիալիստական ծխախոտագործության զարգացման ավյալ շրջանում 38-40 հազար հեկտարը կկենտրոնացվի 400 խոշոր կոլտնտեսային ծխախոտագործական ապրանքային Ֆերմաներում:

Այսպիսի ուրեմն, այս Ֆերմաների կազմակերպումը, նրանց կազմակերպչական-օժեստական անպայմանը նոր, սեխնիկական, արտադրական հիմունքով, ծխախոտի արտադրության մեքենայացման ու ուսցիոնայացման հիմունքով, ագրոսեխնիկական միջոցառումների կիրառումը—այս բոլորն էյապես հիմնական պայմաններէց մեկն է այն պայտում, վոր մզվում է բեքաւսվոյրյան յեվ ծխախոտի արտադրանքի վորակի համար:

Երբքատվության և ծխախոտի արտադրանքի վորակի համար մզվող պայքարի յերկրորդ պայմանն է յերկրամասի առանձին ուսյոնների տնտեսության մասնագիտացումը ծխախոտի վրա:

Պետք է ասել, վոր այս կամ այն ուսյոնին հարմար կուտուրայի ամբողջական մշակման խնդիրը, յերկրակուտուրայի ամբողջական ուսյոնների մասնագիտացման մասի գյուղատնտեսական ուսյոնների ամենարդյունավետ խնդիրը (ավյալ ուսյոնում, որինակ, ամենարդյունավետ տեխնիկական բույսերի զարգացումը) մենք դեռ բավականաչափ վճռականորեն չենք լուծում: Նույնիսկ յերկրամասի դուռ ծխախոտագործական ուսյոններում տեխնիկական կուտուրաների ցանքի մեջ ծխախոտի տեսակարար կշիռը պարզապես չնչին է և միշարք դեպքերում ծխախոտը նույնիսկ փոխարինվում է այդ ուսյոններում ուրիշ տեխնիկական և շարքահերկ կուտուրաներով:

Վերլուծելով 78-րդ էջի աղյուսակը, վորը բնորոշում է տեխնիկական կուտուրաների ցանքերի տարածության բաշխումը յերկրամասի դուռ ծխախոտագործական ուսյոններում, խումը յերկրամասի դուռ ծխախոտագործական ուսյոններում, մենք պետք է մատնանշենք, վոր 1932 թիւը պետք է աս

մի շարք հիմնական ձխախոտագործական ուսյոններում ձխախոտացանի տարածութեան տեսակարար կշիռն աճ. ամբողջ յերկրամասում, համեմատած 1931 թվականի հետ, այդ աճը կլինի 5,8 տոկոս:

ԾԽԱԽՈՏԻ ԿՈՒՂՏՈՒՐԱՅԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԿՈՒՂՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ, ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԶՈՒՑ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

Ռայոններ	Տեխնիկական կուլտուրաների ցանքերի տարածութիւնը 1931 թվականին			Տեխնիկական կուլտուրաների ցանքերի տարածութիւնը 1932 թ. (ըստ պլանի)		
	Ընդամենը (հեկտարով)	Ծխախոտը		Ընդամենը (հեկտ.)	Ծխախոտը	
		Քանի հեկ.	%		Քանի հեկտ.	%
Աւզերյան	21890	4592	21,0	16900	6500	38,4
Արինյան	19633	4316	25,0	12200	5400	44,1
Գարշաչի-Կլոսչ	7540	2841	30,6	10800	3000	28,5
Հայկական	3402	728	21,4	3312	1016	30,6
Հունական	5069	2022	39,8	4413	2650	60,0
Մայկոպի	46631	2138	4,5	36950	2000	5,4
Ապշերոնի	5883	2428	42,8	6250	1150	18,3
Բերդեջերինակ գ.	31019	2683	8,6	25528	2800	10,9
Ընդամենը	141067	22748	15,8	113353	24516	21,6

Սակայն, ըստ ամենայնի պարզ է, վոր այդ աճումը վորպես մասնագիտացման պրոբլեմի լուծում, միանգամայն անբավարար է ամբողջ յերկրամասում: Առանձին ուսյոններում (Գարշաչի Կլոսչի և Ապշերոնյան) նույնիսկ տեղ ունի ձխախոտի փոխարինումն ուրիշ տեխնիկական կուլտուրաներով: Յերկրամասի զուտ ձխախոտագործական ուսյոններում ձխախոտի տեսակարար կշիռը 1932 թվի ձխախոտացանքերի ընդհանուր տարածութեան մեջ, համեմատած 1931 թվի հետ, պետք է տա իջեցում—77—78 տոկոսի փոխարեն 58,5 տոկոս, կամ այդ իջեցումը հավասար կլինի 19,20 տոկոսի: Այս նշանակում է, վոր ձխախոտացանքերի տարածումը

բաժնեթյան լայնացումը խոշոր չափով տեղի յի ունենում է հաշիվ ձխախոտագործական նոր ուսյոններին—հարթավայրային, հացահատիկային—վոր չափազանց անցանկալի յի:

Գյուղացիական մանր սնեստուբյունն Վերնդուրակ է լուծել գյուղատնտեսական կուլտուրաների յեվ մասնաճյուղերի մասնագիտացման խնդիրը: Սոցիալիստական խոշոր սնեստուբյունն այդ խնդրի լուծման համար ունի բոլոր անհրաժեշտ պայմանները: Ուրեմն մենք պետք է ոգտագործենք խոշոր տնտեսութեան առավելութիւնը և ձխախոտի հումութի բազան կենտրոնացնենք զուտ ձխախոտագործական ուսյոններում, վորտեղ ձխախոտատունկի համար կան բոլոր անհրաժեշտ պայմանները—համապատասխան հող, կլիմա, վորակալ կադրեր, բանվորական ուժ և այլն:

Յերկրամասի զուտ ձխախոտագործական ուսյոնների թվին պատկանում են՝ Արինյան, Սեվերյան, Գարշաչի Կլոսչի, Ադիգեյի, Հունական, Մայկոպի, Ապշերոնի, Բերդեջերինակի, Սոչու և Հայկական ուսյոնները: Ծխախոտագործութեան հիմնական ուսյոններն են՝ Կրասնոդարի, Սլավյանսկի, Տիմաշևսկի, Տեմրյուկի, Ղրիմի, Անապայի, Գելենչիկի, Լաբինի, Տուլայսի և Շաստուզի ուսյոնները:

Մենք պետք է ձխախոտի կուլտուրան ամեն կերպ ընդլայնենք (ֆլեզրիտ) բացառապես զուտ ձխախոտագործական և հիմնական ուսյոններում, ազատելով վերջիններս ուրիշ տեխնիկական կուլտուրաների ցանքերից, վորոնց ուղղութեամբ պետք է մասնագիտացման ուրիշ ուսյոններ, մասնավորապես այն ուսյոնները, վորոնք գտնվում են Հյուսիսային Կովկասի հարթավայրային մասերում:

Այսպես ուրեմն, լուծել ըստ կուլտուրաների յեվ մասնաճյուղերի մասնագիտացման խնդիրը—սա յեկրորդ հիմնական պայմանն է այն պայմանում, վոր մենք մղում ենք բեռնափութեան բարձրացման յեվ ձխախոտային առտագումնի վորակի լավացման համար:

Ծխախոտագործական խոշոր տնտեսութիւնները, քանակի տեսակետից հասնելով հսկայական հաշտութիւններին

րի, վորակի համար դեռևս վճռական ու սխտեմատիկ պայ-
քար չեն մղում:

Մխախտագործական կոլտնտեսություններում ու խորհ-
տնտեսություններում բերքատվությունը ցածր է յերկրա-
մասում յեղած միջին բերքատվության չափից, վորն առաջ
ստանում է յին անհատական տնտեսությունները: Միևնույնը
կարելի չէ ասել նաև ծխախոտային արտադրանքի վորա-
կի մասին:

Շնորհիվ ծխախոտի անժամանակ տնկման, քաղհանին
և բերքահավաքին, շնորհիվ ագրոտեխնիկայի ընդերման
թույլ աշխատանքին, յերկրամասի առանձին ուայոններում
1931 թվականին իջել է ծխախոտի բերքատվությունն ու
վորակը: Այսպես, որինակ, Գարյաչի Կլյուչի, Սևերյան,
Ալշերոնյան և Ղրիմի ուայոններն սաացել են միջին հաշ-
վով մեկ հեկտարից 600—800 ծխախոտաշար (շուռ), փո-
խանակ հնարավոր 1000—1200 ծխախոտաշարի, Ալշերոնյան
և Սևերյան ուայոններում մեկ ծխախոտաշարի կշիռը 750—
900 գրամ է, փոխանակ 1 կիլոգրամի:

Այս բոլորը մի ավելորդ անդամ հաստատում է, վոր
անհրաժեշտ է ավելի վճռական պայքար մղել ծխախոտի
լավ բերքատվության ու վորակի համար:

Մենք պետք է առաջիկա տարիներում կոլտնտեսային
ծխախոտագործական ապրանքային ֆերմաների, ծխախո-
տագործության մեքենայացման ու ուացիոնալացման և վեր-
ջապես, գյուղատնտեսության ըստ կուլտուրաների ու մաս-
նաճյուղի մասնագիտացման հիմունքով կարողանանք բարձ-
րացնել ծխախոտի բերքատվությունը—յերկրամասում փա-
տորեն յեղած 70 տոկոսի փոխարեն 100 տոկոսով, պետք է
կարողանանք 1 հեկտարից ստանալ 14—15 ցենտներ բերք,
միևնույն ժամանակ պայքարելով ծխախոտի արտադրանքի
վորակի համար:

Այս խնդիրների լուծման յերրորդ, վոչ պակաս կարե-
վոր պայմանը հանդիսանում է ծխախոտի ջուցիք ժամանա-
կին կասառումն յեվ ավարտումը, ինչպես յեվ կորսնեքի դեմ

պայքար՝ բերահավաքման յեվ հետագա մտակման ժամանակ:
Աշխատանքային պրոցեսները լավագույն կազմակերպ-
ման հիմունքով մենք պետք է ամբողջովին և իր ժամանա-
կին կազմակերպենք այն աշխատանքները, վորոնք կապ-
ված են ծխախոտի տնկման ու բերքահավաքի հետ:

Առաջին հերթին պե՛տք է սրբապիսեղ սոցիալիստական
ծխախոտագործուրյան ագրոտեխնիկային: Առանց ագրոտեխ-
նիկային տիրապետելու անկարելի չէ պայքարել կոլտնտե-
սությունների ավարտագման համար, անկարելի չէ կոնկ-
րետ կերպով դեկավարել կոլտնտեսային ու խորհանտես-
ային արտադրությունը, անկարելի չէ լուծել բերքատվու-
թյան ու վորակի խնդիրը: Այն պատճառով պայքարել
ագրոտեխնիկայի համար, նշանակում է պայքարել սոցիա-
լիստական գյուղացեստական արտադրությունը վարակային
նոր, բարձր ասիմանի հասցեելու համար:

Մենք բերում ենք ծխախոտագործության վերաբեր-
յալ «ագրոտեխնիկական հաշիվը», վորը մեր յերկրային ու
ուայոնական մամուլի նախաձեռնությամբ մշակված է գե-
տական հիմնարկությունների և ծխախոտագործական ու-
յոնների կոլտնտեսային լայն հասարակայնության կողմից:
Ահա ագրոտեխնիկական հաշիվի պահանջները, վորոնց
կատարման համար պետք է մտքիդացիայի յենթարկել կոլ-
տնտեսային ակտիվն ու կոլտնտեսականների լայն մաս-
սաներին:

Միհչեվ մարտի մեկը պետք է ընտրել սածիլանոցների
տեղը, նրանց համար պատրաստել ջերմոցային խառնուրդն
և այլ նյութերը, ինվինտարն ու կահավորանքի իրերը:
Այս կետը պետք է կատարել Մխախոտագործության պե-
տական ինստիտուտի և ագրոտեխնիկական պերսոնալի
ցուցմունքներին միանգամայն համապատասխան:

Անպայման վարակազերծ անել ամբողջ ջերմոցային
խառնուրդը, վորը զործ է ամվում թե ջերմոցների ու
մարգերի և թե սերմերը սածիլներին ցանելու համար:
Վարակազերծ անելը կատարվում է զոլորշիացմամբ, մե-

խանիկական անոթներում (ընկ. Սվիտտունովի սիստեմի) կամ սովորական ջերմիչներում: Այս աշխատանքի ժամանակ ծխախոտի ցողունները վոչ մի դեպքում չի կարելի գործածել իրրեվ վառելիք: Այս աշխատանքը պիտի ավարտվի մինչև վիետնամի 20-ը:

Սածիլների ամբողջ ոգտագործվող տարածության 30 տոկոսի վրա շինել սառը մարգեր, ապակյա շրջանակների տակ, կամ կխատաք ջերմոցներ: Տարածության մնացած 70 տոկոսը բռնվում է սովորական, բայց սառը մարգերով: Սածիլների ամբողջ ոգտագործելի տարածությունն ամբողջովին պետք է ապահովել համապատասխան ծածկոցներով:

Սածիլն անեցնելու համար չի կարելի գործածել միայն զուտ բուսահող (պերեգնոյ): Այս կամ այն ուայոնի պայմաններին համապատասխան, վորպես ջերմոցային խառնուրդ, պետք է գործածել՝ ա) զետափերի ջրաբեր հողը, բ) զետային տիղմոտ ավազը, գ) 40 տոկոս անտառային հող և 60 տոկոս զետային տիղմոտ ավազ, դ) լավ վորակի անտառային բուսահող (թուխ գույնի, իր մեխանիկական բաղադրությամբ թեթև), յե) միջին վորակի անտառային բուսահող, զ) սովորական հող, ավելացրած խոշոր ավազ, ը) մեկ յերրորդ մաս բուսահող, մեկ յերրորդ մաս անտառային հող և մեկ յերրորդ մաս ավազ:

Բոլոր վերոհիշյալ միջոցները գործադրելիս անպայման պետք է բուսահող ցանել սերմերի վրա:

Սերմերի ցանքը կատարել մի քանի պրիյոմներով, ծխախոտատունիկի ծրագրված ժամկետներին համապատասխան: Ցանքի ժամանակամիջոցը մարտի 1-ից մինչև ապրիլի 20-ն է: Սածիլներն անեցնելու համար ջերմոցների տարածությունը վորոշվում է մեկ հեկտար ձեռքի տունկի համար 50 քառակուսի մետր և մեկ հեկտար մեքենայական տունկի համար—70 քառակուսի մետր:

Ցանքից առաջ սերմերն ախտահանվում են աղոտ—թթվային լուծույթով (լյապիտով) կամ սուլեմայով, հաշված 1:1000 ջուր: Ախտահանումն անպայման կատարել գյուղա-

տնտեսի հսկողությամբ և Ծխախոտագործության պետական ինստիտուտի հրահանգները համապատասխան: Բոլորովին պարտադիր է սերմերի թրջելը, լվալն ու մաքրելը նրանց անեցնելուց առաջ: Այստեղ նույնպես պետք է կատարել Ծխախոտագործության պետական ինստիտուտի ցուցմունքները:

Ցանքը պիտի կատարել բացառապես ծխախոտագործության պետական ինստիտուտի մաքրատեսակ սերմերով և հետևյալ հաշվով,—ջերմոցներում 1 քառակուսի մետրի վրա—0,8 գրամ, իսկ սառը մարգերում 1 քառակուսի մետրի վրա 1 գրամ:

Սածիլանոցներում բոլոր զարնանային աշխատանքները—մարգերի և ջերմոցների զցելն ու ձեվավորելը, ցանքը, սածիլի խնամքը—պետք է խստորեն կատարվեն Ծխախ. պետ. ինստիտուտի և տեղական գյուղատնտեսների ու ազրոտեխնիկների ցուցմունքների համապատասխան: Անպայման պետք է կիրարկել սածիլների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարելու պրոֆիլակտիկ միջոցառումներ (փարիզյան կանաչ, Բորդոյի հեղուկի, պղնձի արջասպի շաղ տալն և ծծմբի ցանկը): Բոլորովին պարտադիր է ինվենտարի, սարքավորանքի իրերի ախտահանումը, ինչպես և հիվանդ սածիլի քաղհանից առողջի քաղհանին անցնելիս ձեռքերի ախտահանումը: Պետք է պարարտացուցիչ հեղուկներ շաղ տալ: Այս բոլոր աշխատանքների ժամանակ առաջնորդվել տեղական ազրոտեխնիկական աշխատողների և Ծխախ. պետ. ինստիտուտի ցուցմունքներով:

Անպայման պետք է անցկացնել սածիլային տնտեսության ջրամատակարարման մեքենայացումն ու ուսցիտունալացումը: Անհրաժեշտ է գործածել ջրամղիչներ, ջուրը մատակարարել ջրատար (ճեղքված, մեջը փորված) դերաններով, «առուններով» և այլն, ապակյա շրջանակները բարձրացնել, ծածկոցները բանալ ու ծածկել:

Ծխախոտատունիկի ամբողջ տարածությունը պետք է աշնանը վարած լինի: Աշնանավարի խորությունը պիտի

լինի 15—18 սանտիմետր: Այն ուսյուններում, վորտեղ ձխա-
խոտին հատկացված տարածութիւնն աշնանը չի վարված,
պետք է վարել վաղ գարնանը, հենց վոր լինի հողը վա-
րելու առաջին հնարավորութիւնը:

Դաշտ գուրս գալու առաջին հնարավորութեան մոմեն-
տից աշնանավարն անպայման պետք է տափանել հինգ
որվա ընթացքում: Բոլոր ուսյուններում—նաև լեռնային—
գարնանային վարին պետք է հետեի նրա տափանումը:
Վարել մակերևութի վրա վոչ մի դեպքում չպիտի լինեն
կոշտեր:

Վարելու մոմենտից մինչև ձխախոտատունկը դաշտը
պետք է բոլորովին մաքուր պահվի մոլախոտերից: Այս
նպատակով հողը պիտի մշակել ցաքաններով և փխրացնող
գործիքներով: Տունկից առաջ հողի մանրակրկիտ մշակումը
պետք է ավարտվի վոչ ուշ, քան տունկից 15 որ առաջ:

Անտառածրման համար նշանակված տեղերն անպայ-
ման պետք է մաքրվեն իր ժամանակին և զրանից անմի-
ջապես հետո վարվեն: Մինչև ապրիլի 15-ը անտառից մաք-
րված ամբողջ տարածութիւնը պետք է վարել:

Խորհտնտեսութիւններն ու կոլտնտեսութիւնները
պետք է ճշտութեամբ բավարարեն իրենց ներկայացված
հաշիվը, վորպեսզի ստանան ձխախոտի բարձր, կայուն
բերք և հումութով ապահովեն ձխախոտի արդյունաբե-
րութիւնը:

**ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ, ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՆՐԱ-
ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒ-
ԹՅԱՆ ՄԵՋ**

Սոցիալիստական ձխախոտագործութեան զարգացման
մեջ հնգամյակի յերրորդ, վճռական տարվա հանրագումար-
ներն իրենց բովանդակութեամբ ցայտուն ապացույց են
խոշոր, ծանր, մեքենայական ինդուստրիայի հիմունքով սո-
ցիալիստական խոշոր տնտեսութեան կազմակերպման ու
շինարարութեան բնագավառում մեր կուսակցութեան գլխա-
վոր դժի ճշտութեան:

կոլտնտեսութիւնների կազմակերպչական-տնտեսական
ամբաղնդման հիմունքով՝ 1931 թվականի ընթացքում յերկ-
րամասի ձխախոտագործական ուսյունները գյուղացիական
տնտեսութիւնների կոլեկտիվացումը միջին թվով հասցրին
80 տոկոսի, 1930 թվականի համեմատութեամբ ձխախոտա-
տունկի տարածութիւնը լայնացրին 40 տոկոսով: Ծխախո-
տագործութեան սոցիալիստական սեկտորի տեսակարար
կշիռն ավելացավ—ցանքային տարածութեան վերաբերմամբ
71-ից մինչև 91 տոկոս և ընդհանուր արտադրանքի վերա-
բերմամբ—72-ից մինչև 93 տոկոս, վորով ավելացումը կազ-
մում է 20—21 տոկոս:

Կազմակերպվեցին մի շարք նոր ձխախոտագործական
խորհտնտեսութիւններ, իսկ խորհտնտեսական ձխախոտա-
գործութեան տեսակարար կշիռը մեկ տարվա ընթացքում 3
տոկոսից բարձրացավ 7—8 տոկոսի: Խորհտնտեսութիւն-
ները 1931 թվականին յերկու անգամ ավելի ձխախոտ
տնկեցին, քան 1930 թվականին: Դրա հետ միասին, խոր-
տնտեսութիւնները հիմնականում լուծեցին ձխախոտի տնկ-
ման, քաղհանի ու հետագա մշակման մեքենայացման խն-
դիրը:

Ծխախոտատունկի յուրաքանչյուր հեկտարի վրա
թափված աշխատանքը 1931 թվականին կրճատվեց 20—25
տոկոսով: Առանձին ձխախոտագործական ուսյուններն և կոլ-
տնտեսութիւնները ավին աշխատանքի կազմակերպման և
նրա արտադրողականութեան բարձրացման համար պայքա-
րելու հերոսական որինակներ: Նրանցից մի քանիսը սա-
մանված արտադրութի նորմաները զերակատարեցին 2—3
անգամ:

Կոլցնեստոլայութիւններ հանդիսանում են ձխախոտի գլխա-
վոր արտադրողներ, իսկ կոլցնեստային գյուղացիութիւնը—սո-
ցիալիստական ձխախոտագործութեան կենտրոնական դեմք:

Կոլտնտեսութիւնները 1931 թվականի տարեկերպին ձեռք
բերին տնտեսական մեծ նվաճումներ և զգալի չափով ամրա-
պնդեցին իրենց տնտեսութիւնը: Բարձրացավ կոլտնտեսու-

թյունների յեկամուտը, ավելացան նրանց համայնացված ֆոնդերը, բարելավվեց կոլտնտեսականների նյութական դրությունը:

Յեթե 1931 թվականին մեկ անհատական սնեստուրյան վրա բնկնող ապրանքային արտադրանքը գնահատվում է 53 ռուբլի, ապա կոլսնեստուրյան մեջ գտնվող մեկ սնեստուրյան վրա արտադրանքի ապրանքային մասը կազմում է 106 ռուբլի—համայնացված մասում յեվ 9 ռուբլի—չհամայնացված մասում, բնգառնեք—115 ռուբլի:

Կոլսնեստականի յեկամուտը համարյա յերկու անգամ ավելի յե անհատականի յեկամեթց, կոլսնեստային սեկտորի ապրանքայնությունը ավելի քան 2 անգամ բարձր է, քան անհատական սեկտորի ապրանքայնությունը:

Այդ հաջողություններն առանձնապես ցայտուն կերպով են յերևում այն հերոսական պայքարի որինակներինց, վոր կոլտնտեսային մասսաները մղում են ձխախոտատունկի պլանները կատարելու, աշխատանքի լավագույն ու ճշգրիտ կազմակերպման և կոլտնտեսությունների ամրապնդման համար:

1931 թվականին մենք ունեցանք սոցիալիստական մրցության քաղաքական մեծ կարևորություն ունեցող մի փորձ ձխախոտագործական յերեք խոշորագույն ռայոններում (Սեվերյան, Աբինյան և Գարյաչի Կլյուչի): Փոխադարձ յերաշխափորության պայմանագիր կնքելու հիմունքով նրանք պայքար մղեցին կուսակցության ու կառավարության առաջադրությունները կատարելու՝ ձխախոտատունկի, բերքահավաքի և ձխախոտի հետագա մշակման բնագավառում:

Այս պայմանագրով ռայոններից ամեն մեկն իր վրա պարտավորություն վերցրեց ընկերական ոգնություն ցույց առնելու ճեղքվածքներ առաջանալու դեպքում, լավագույն բրիգադների և առանձին կոլտնտեսականների փորձը հանձնել միմեանց, անցկացնել լավագույն հարվածայինների փորձի փոխանակության միջոցով հավաքներ, բուքսիրային

բրիգադներ ուղարկել յետամնաց կոլտնտեսությունները՝ փորձը լուսաբանել մամուլում: Այս բոլորն իր արտացոլումը գտավ հիշյալ յերեք հսկա ռայոնների սոցիալիստական մրցման մեջ, վորոնց տնկած ձխախոտի տեսակաբար կշիռն ամբողջ յերկրամասի ձխախոտատունկի 57 տոկոսն է կազմում:

1931 թվականի գարնանացանի կամպանիայից հաղթող դուրս յեկավ Աբինյան ռայոնը:

Աբինյան ռայոնում ամենաառաջավորները յեղան հետևյալ կոլտնտեսությունները.—

Կոլտնտեսություններ	Ձխախոտատունկի տարածությունը 1931 թվին (հեկ.)	Քանի տոկոսով է պլանը կատարված
«Կարմիր պարտիզան» (Մինգրեյսկայա գ.)	609	102
«Ինդուստրիա» (Աբինսկայա գ.)	800	100
«Մայրամեկ» (Պերվոմայսկի գ.)	150	105
«Նոր ուղի» (Պրոմսկայա գ.)	165	110
«Հնգամյակ» (Վարնավինսկայա գ.)	200	100
«Կարմիր թամանցի» (Աբինսկայա գ.)		103

Աբինյան ռայոնը, մեծ հաջողությունների հասնելով կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գործում, 1931 թվականին ռայոնի կոլեկտիվացումը հասցրեց 85 տոկոսի, մինչդեռ 1930 թվականին 46 տոկոս էր: Նա ձխախոտատունկի տարածությունը 1930 թվականի համեմատությամբ ավելացրեց 66,1 տոկոսով, անկելով 4820 հեկտար: Ռայոնի ձխախոտագործության մեջ կոլտնտեսային սեկտորի տեսակարար կշիռը բարձրացավ մինչև 96 տոկոս: Բոլոր կոլտնտեսությունները միջին թվով 50 տոկոսով զերակատարեցին ձխախոտատունկի համար սահմանված արտադրույթի նորմաները, իսկ առանձին կոլտնտեսություններ այդ նորմաները զերակատարեցին 100

և ավելի տոկոսով: Ռայոնը ժամկետից առաջ կատարեց հացամթերումները ամբողջ պլանը և դրա համար պարգևատրված է: Առանձին կոլտնտեսություններում աշխատանքը հյին դուրս գալիս 100 տոկոսով, մինչդեռ 1930 թվականին՝ 50-60 տոկոսով:

Արինյան ռայոնի հարվածայիններից լավագույններն են ընկ. ընկ. Բեյռուսով Խվան Յակովլևիչը—«Կարմիր պարտիզան» կոլտնտեսության բրիգադերը և Սեպյան Խվանովիչ Պաչենկոն—«Կարմիր թամանցի» կոլտնտեսության բրիգադերը: Ընկ. Բեյռուսովի բրիգադը ձխախոտատունկի ժամանակ որական պլանը գերակատարում էր 2—2 և կես անգամ, անկելով 65 հեկտար, պլանով նախատեսված 45 հեկտարի փոխարեն: Նույնպես էր աշխատում նաև ընկ. Պաչենկոյի բրիգադը:

Նրանց բրիգադներում սարքավորված են կարմիր անկյուններ, վորոնք կանոնավոր կերպով լրագրեր են ստանում: Բացի դրանից, կարմիր անկյուններում պարբերաբար լավում են գյուղատնտեսի դասախոսությունները և սխառմատիկորեն կատարվում է մասսայական աշխատանք:

Ընկ. ընկ. Բեյռուսովի ու Պաչենկոն բրիգադիներին յերկրային հավաքի պատգամավորներ հյին: Հավաքը տեղի ունեցավ 1931 թվականի դարնանը: Նրանցից ամեն մեկը պարգևատրված է փողով և արդյունաբերական ապրանքներով:

Ընկ. Պաչենկոն իրեն նվիրած 50 ուրբին օվեց կոլտնտեսության՝ ձիափոցխեք գնելու համար:

Մենք գիտենք մի շարք գեպքեր, յերբ հարվածայինների շարքերն հյին մտնում 60—70 տարեկան ձերունիներ և պառավներ, որինտեղ և աշխատանքի դասեր տալով յերիտասարգներին:

Մրանց թվին և պատկանում ենտուղիաստ հարվածային Դեմին Լավրենտին—Արինսկայա դյուդի «Կարմիր թամանցի» կոլտնտեսության բրիգադերը: Չնայելով իր ավելի քան 60 տարիքին, նա միշտ աշխատում էր բրիգադի հետ միասին և բարձր ցուցիչներ էր տալիս աշխատանքի ար-

տադրողականության բարձրացման և նրա լավագույն կազմակերպման ասպարիզում: Ընկ. Դեմինը պարգևատրված է զարնանը, ձխախոտատունկի կամպանիայի համար: Նա ստացել է 50 ուրբի նվեր: Այս բոլորը կարելի չէ բացատրել նրանով, վոր «Առաջին ազգալ—ինչպես ասել է Լենինը—հարյուրավոր արիներ արիների համար աշխատելուց հետո, օտագործողների համար աշխատելուց հետո, հնարավոր է դառնում աշխատել իր համար, մի աշխատանք, վորը հիմնված է նորագույն տեխնիկայի յեղ կոլտնտեսայի բոլոր նվաճումների վրա»: Այսպես էր դրում 13 տարի առաջ Լենինը սոցիալիստական մրցութային նշանակություն մասին:

Այնուամենայնիվ, խոսելով սոցիալիստական ձխախոտադործության հաջողությունների մասին, չի կարելի լռել այն թերությունների ու սխալների հանդեպ, վորոնք տեղ ունեն կոլտնտեսային ձխախոտադործության մեջ:

Յերկրամասի ձխախոտադործական կոլտնտեսությունների գլխավոր և հիմնական թերությունը—զա ձխախոտադործական տնտեսության կազմակերպման աշխատանքը տնտեսության մյուս ձյուղերի հետ ներդաշնակելու անկարողությունն է, ձեռք բերված նվաճումներն ամրապնդելու անկարողությունը, մինչդեռ այդ ամրապնդման հիմունքով պետք է առաջ շարժվել դեպի նոր, ավելի մեծ նվաճումներ:

Յերկրամասի ձխախոտադործական կոլտնտեսությունները 1931 թվականի դարնանացանի կամպանիային ավելի մեծ տարածություն ձխախոտատունկ ունեցան, քան 1930 թվականին: Սակայն այս բնագավառում նրանք չկարողացան ամրապնդել ձեռք բերված հաջողությունները:

Հետևանքն այն յեղավ, վոր մեծ չափով ձխախոտատունկեր փչացան, վորոնց վրա մարդկային շատ ու շատ աշխատանք էր թափված: Կոլտնտեսությունները դառնվեցան ունեցան, կորցնելով մոտ մեկ միլիոն ուրբլի:

Ահա յերկրամասի առանձին ռայոններում և ամբողջ յերկրամասում (կոլտնտեսային սեկտորում) ձխախոտի փըչացման պատճառների ընդթագիրը (տես 90 էջի աղյուսակը):

Քաղաքներ	Գաղթյան			Ծխախոտը փչացել է		
	Սարերային փորձանքներից	Ազգամեծներ		Ազգամեծներ		Մոտո-հիդր. վոլտ. շրջան
		Մոտո-հիդր. վոլտ. շրջան		Մոտո-հիդր. վոլտ. շրջան		
		մոտ	% վոլտ. շրջան	մոտ	% վոլտ. շրջան	
Գաղթյալի-Կլոյուչի	597	32,5	38	2,0	635	34,5
Ապշերոնի	297	18,0	282	17,0	579	34,8
Գեղեղիկի	27,5	10,0	16	5,8	43,5	15,8
Աբխյան	817	18,0	698	15,4	1515	33,6
Ղարի	388	6,0	235	23,6	235	23,6
Սեփերյան		6,0	1516	24,1	1304	30,0
Ընդամենը տվյալ ուսյուններում	2126,5	13,6	2785	17,9	4311,5	31,6
Ամբողջ յերկրամասում	4421	13,8	3780	11,8	8201	25,6

Սյո աղյուսյակից յերևում է, վոր ծխախոտի փչացման հիմնական պատճառն ազրոմիսիժումի չկատարելն է, կամ ավելի ճիշտ, ազրոտեխնիկային չտիրապետելը ծխախոտի անկման ու խնամքի գործում:

Սակայն, ծխախոտատունկի մնացած տարածությունն էլ ժամանակին և ամբողջովին չի քաղհանվել: Յերկրամասի առանձին ուսյուններում 2-րդ քաղհանը կատարվել է ծխախոտատունկի ամբողջ անփլաս մնացած տարածության միայն 30—50 տոկոսի վրա:

Դրա հետ միասին մենք ունենք յերկրամասում ծխախոտի բերքատվության զգալի իջեցումը, ապրանքային արտադրանքի ցածր տոկոս և այդ արտադրանքի վորակի վատացում:

Այս բոլորից մենք պետք է յեզրակացնենք, վոր կուտանտեսություններում յեղած թերությունները մեծ մասը սուբեկսիվ և վոչ թե որեկտիվ բնույթ ունեն:

Առանձին կուտանտեսություններում, շնորհիվ աշխատանքի վատ կազմակերպման և աշխատանքի յեղեկու ցածր տոկոսի, ծխախոտատունկի ժամանակամիջոցը քսան որվա փոխարեն ձգձգվեց մինչև 45 որ: Մի շարք ուսյուններ առնկըն ավարտեցին միայն հուլիսի 10-ին, մինչդեռ նրանք պարտավոր էին ավարտել հունիսի 15—20-ին:

Ծխախոտատունկի ուշացման պատճառները հետևյալներն էլին. —բացակայում էր վաղորոք պատրաստած ու վարած հողը, սածիլները շուտ էլին հանվել, վաղամշակ սածիլներ էլին գրվել այնտեղ, ուր հողը ծխախոտատունկի համար պատրաստված էր յեղել:

Ծխախոտի սածիլների միայն 30 տոկոսը անկվեց աշնանավարի վրա, 30—32 տոկոսը—վաղ կատարած հերկի վրա և 40 տոկոսի վարն էլ յետ էր մնում, իսկ Սոչու, Սեփերյան, Գաղթյալի Կլոյուչի և մասամբ Աբխյան ուսյուններում ծխախոտատունկն արգելակվում էր հողը պատրաստված չլինելու պատճառով:

Ծխախոտատունկը միջին թվով 15—20 որ ձգձգվելով, ձգձգվում էր նաև քաղհանը: Առանձին առյուծներում քաղհանն սկսվում էր արենկից 30—40 որ հետո:

Որինակ, Սեվերյան առյուծ տունկն սկսեց մայիսի 5-ին, իսկ հունիսի 20-ին 4508 հեկտարից քաղհանված էր 80 հեկտար: Գարյաչի Կլյուչի առյուծում տունկն սկսվեց մայիսի 20-ին, իսկ մինչև հունիսի 20-ը 1800 հեկտարից քաղհանված էր 14 հեկտար:

Այսպիսով ծխախոտացանքերի դեպի տարածության փչացման հիմնական պատճառներից մեկը պիտի համարել վոչ իր ժամանակին քաղհանը: Իրա հետ միասին, անջնաս մնացած տարածության անժամանակ քաղհանն իր աղղեցությունն ունեցավ յերկրամասի ծխախոտային արտադրանքի ապրանքայնության իջեցման վրա:

Անժամանակ ծաղկահատի և յերկրորդական ճյուղերի կտրատման (նույնպես անժամանակ) հետևանքով, 1931 թվականի ծխախոտի տերևները թույլ կազմավորում ունեցին և իջել էր նրանց տեսակարար կշիռը: Այսպես, որինակ, մի շարք առյուծներում ծխախոտաշարի կշիռը 700—800 դրամ էր, փոխանակ նորմալ կշռի—1 կիլոգրամի:

Իր ժամանակին ծաղկահատը և յերկրորդական ճյուղերի կտրատումը չապահոված առյուծների թվին են պատկանում նաև Ղրիմի առյուծը, վորը կատարեց ծաղկահատի և յերկրորդական ճյուղերի կտրատման միայն 5-ական տոկոսը և Սեվերյան առյուծը, վորը ծաղկահատը կատարեց 87 տոկոսով, իսկ յերկրորդական ճյուղերի կտրատումը—միայն 11 տոկոսով (ծխախոտատունկի ամբողջ տարածության):

Ծխախոտերի փչացման և նրանց բերքատվության ու վորակի իջեցման այս բոլոր պատճառները զլխավորապես բացատրվում են աշխատանքի թույլ կազմակերպմամբ, բանվորական ույթի վոչ ճշգրիտ դասավորությամբ, մանր-խմբակային և անհատական գործավարձի վոչ լրիվ և սխալ գործադրությամբ, հաշվառքի թույլ դրվածքով և հավասարանքի ու դիմադրկության գոյությամբ:

Միտեսմատիկ աշխատանք չէր կատարվում սոցիալության ու հարվածայնության սկզբունքները խթանելու, լավագույն հարվածայններին ու բրիգադներին շահադրողու ուղղությամբ: Ծխախոտերի ցանքի, հետագա մշակման և բերքահավաքի աշխատանքները յեռ ու զեռի որերում յերկրամասի ծխախոտագործական առյուծներում տեղ ունեյին ապրանքներ և պարեն ներածելու վիժեցումներ: Այսպես, որինակ, յերկրամասի ծխախոտագործական առյուծներում արդյունաբերական ապրանքներ ներածելու պլանը յերրորդ յետածայակում կատարվեց—Լաբինի առյուծում 36 տոկոսով, Սեվերյան—35 տոկ., Կրասնոդարի—40 տոկ., Մայկոպի—60 տոկոսով և այլն:

Ծխախոտագործական անտեսության անապահովությունը պլանատացիոն կառուցումներով այն հետևանքն ունեցավ, վոր մի շարք առյուծներում ծխախոտը ալրվեց անժամանակ տերևահատից: Իսկ տերևահատը դանդաղում էր, վորովհետև չկային ծխախոտի չորանոցներ:

1931 թվին սկսված չորանոցների կառուցումը (ըստ պլանի) մինչև 1932 թվի հունվարի մեկը յերկրամասի գուլխավոր ծխախոտագործական առյուծներում ավարտվեց միայն 22,5 տոկոսով, իսկ ամբողջ յերկրամասի մասշտաբով—53,2 տոկոսով: Այդ նույն առյուծներում սրահների (սարայների) կառուցումը կատարվել է 21 տոկոսով, իսկ ամբողջ երկրամասում—42 տոկոսով:

Շինարարության վիժման պատճառը—դա աջ ու պորտունիատական պրակտիկան և կորոնտեսային սիստեմի դեկավարների և այն կազմակերպությունների, վորոնք պատասխանատու յեն այդ շինարարության համար,—մասնատարապես «Գյուղըներ»: Այս կազմակերպությունները հավորապես «Գյուղըներ»: Այս կազմակերպությունները համարյա չեյին զբաղվում տեղում նյութեղեն պատրաստելու հարցերով, այլ հույս եյին դնում ինքնահոսի վրա: Իսկ այդ նյութեղենի բացակայությունն էլ հենց զլխավոր արգելակներ շինարարության ծավալման:

Միևնույնը կարելի չե ասել ծխախոտագործական ուս-
յունների անտառամաքրման մասին: Յերկրամասում 1931
թվականին անտառամաքրումների պլանը կատարված է մի-
այն 52 տոկոսով: Սևերյան, Աբինյան, Գարեջաչի-Կլյուչի և
այլ զուտ ծխախոտագործական ուսյուններում, վորոնք, հին
հողերի չավազանց հողնածուծթյան և աղտեղվածուծթյան հե-
տևանքով, ամենասուր կերպով կարիք են դրում նոր հողե-
րի յուրացման, — անտառամաքրման պլանը կատարված է
միայն 33,1 տոկոսով:

Անտառամաքրման պլանի կատարման ցածր տոկոսը
ամենից առաջ բացատրվում է ձեռքի աշխատանքի սակավ
արդյունավետութամբ, վորը (ձեռքի աշխատանքը) գոր-
ծադրվում է անտառամաքրման համար, — և կոլտնտեսու-
թյուններին անտառամաքրման աշխատանքների համար
սխալ վարկավորելով: 1930 թվականի աշնանը (նոյեմբեր
— դեկտեմբեր), յերբ կոլտնտեսությունների բանվորական
ուշժի մի մասն ազատ եր, անտառամաքրման համար բաց եր
թողնվում միայն 62 ուրլի մի հեկտարին, կոլտնտեսական-
ներին ավանտ տալու համար: Իսկ դարնանը, յերբ բոլոր
կոլտնտեսականներն զբաղված եյին ծխախոտատունկով,
անտառամաքրման համար տրվում եյին 150 ուրլու չավ
ավանաներ: Այդպիսի աննորմալության հետևանքով, կոլ-
տնտեսականները հրաժարվում եյին անտառամաքրումը կա-
տարել աշնանը, յերբ նրանք ավելի ազատ եյին:

Թեև 1931 թվականին մթերումներն անցան ավելի
կազմակերպված և ավելի լարված կերպով, քան 1930 թվին
(յերկրամասի համարյա բոլոր կոլտնտեսությունները վաղ
բերքի մի վորոշ մասի շտապ մթերման պլանները կատա-
րեցին ամբողջովին և իր ժամանակին, իսկ նրանցից մի
քանիսը նույնիսկ դերակատարեցին այդ պլանները), սա-
կայն յերկրամասում ծխախոտամթերման պլանի ընդհանուր
կատարումը բավարար համարել չի կարելի: Մինչև 1932
թվի փետրվարի 16-ը յերկրամասում կոլտնտեսությունները
ծխախոտամթերման պլանը կատարեցին 56 տոկոսով, խորհ-

տնտեսությունները — 50 տոկոսով, անհատական սեկտորը —
50,8 տոկոսով: Ընդամենը յերկրամասում — 57 տոկոս:

Անհրաժեշտ է մատնանշել, վոր կուսակցական ու խոր-
հրդային կազմակերպությունները բավականաչափ չեյին
կատարում համար և հաստատուն մասսայական աշխատանք՝
անհատական տնտեսություններում ծխախոտի մթերման և
գյուղերի կուլակ-ուենուր մասից հաստատուն առաջադու-
թյուններով ծխախոտը մթերելու համար: Պետք է ուղղակի ա-
սել, վոր անհատականներն ու կուլակ-ուենուր տնտեսություն-
ները անտես առնվեցին ծխախոտ մթերող կազմակերպու-
թյունների կողմից: Ամբողջ ժամանակ, մինչև 1932 թվակա-
նի հունվարի 6-ը յերկրամասի կուլակ-ուենուր տնտեսու-
թյունների գծով մթերվել եր... միայն 25 տոնն և անհա-
տական տնտեսություններից — 1371 տոնն: Ահա ձեզ ոպոր-
տունիդմի ցայտուն արտահայտությունը:

Մենք թվեցինք յեզած թերություններից ամենազըլ-
խտվորները, վորոնց դեմ ծխախոտագործական կոլտնտեսու-
թյունները պետք է վճռական և անհաշտ պայքար մղեն:

Անհաշտ պայքարն այդ պակասությունները վերացնե-
լու և կանխելու համար, աջ և «ձախ» ոպորտունիդմի դեմ,
կուլակության վերջնական լիկվիդացիայի համար, պայքա-
րը նրա ազենտուրայի դեմ — պետք է ապահովի նորանոր
հաջողությունները:

ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ

Հյուսիսային Կովկասում 1932 թվին, ըստ պլանի,
պետք է տնկվի 46,000 հեկտար ծխախոտ Կոլտնտեսու-
թյունները պիտի տնկեն 39,600 հեկտար — 86 տոկոս, խորհ-
տնտեսությունները — 4,100 հեկտար — 9 տոկ. և անհատա-
կանները — 2,300 հեկտ. — 5 տոկոս:

Յենթադրվում է յուրաքանչյուր հեկտար ծխախոտա-
տունկից ստանալ 10,1 ցինտներ բերք: Այսպիսով 1932
թվականին ծխախոտի ընդհանուր բերքահավաքը յերկրա-
մասում կտա 46,460 տոնն ծխախոտ:

Համեմատած 1931 թվի ծխախոտատուների տարածության հետ, կատարվել 11,000 հեկտար աճուս, կամ 31,4 տոկոս: Ընդհանուր բերքահավաքը կտա 15000 տոնն կամ 47,6 տոկոս աճ: Բերքատվութունը բարձրացվելու յե 12 տոկոսով:

1931 քվակամի համեմատությամբ մեմ պեթե ե համարյա յերկու անգամ ծխախոտատուների քաղաքացիները ունեցան 1932 քվին յեկ համարյա յերկու անգամ ավելի ծխախոտի արտադրանք ստանան մեք յերկու անգամ: Այս ցուցիչներով ե վերջում ծխախոտի բերքատվության ե վերակի համար միջոց պայքարն տալին հնգամյակի վերջին, չորրորդ տարում:

Պետք ե ասել, վոր կուտակցական, խորհրդային ե կուտակուտական կազմակերպությունները լիակատար հաշվի հառան յերկրամասում 1932 թվականին ծխախոտագործության զարգացման այդ հսկայական պլանի ամբողջ լրջությունն ու նշանակությունը: Կուտակուտային սեկտորը 1931 թվականի աշնանը միայն 16,6 տոկոսով կատարեց աշնանավարի պլանը 40000 հեկտար տնկելու համար, իսկ անտառամաքրումները կատարեց 6,8 տոկոսով միայն: Կուտակուտային ու խորհրդային սեկտորը միայն 50 տոկոսով ապահոված կլինի յեղած տեխնիկական կառուցումներով:

Ահա թե ինչու ամբողջ համառությամբ պետք ե զործի լծվել այնպես, վորպեսզի վաղ դարնանն սկսել վարելու, անտառամաքրումների, ջերմոցների պատրաստության բուրբ աշխատանքները, ամբողջովին ապահովելով 1932 թվականին ծխախոտատուների պլանի կատարումը: Միևնույն ժամանակ պիտի սկսել տեխնիկական կառուցումները, այնպես, վոր մինչև մասսայական բերքահավաքը, այսինքն, մինչև սեպտեմբեր ամբողջովին ապահովել շինարարության ավարտումը:

Յերկրամասի ծխախոտագործական ուսուցանների բոլոր կազմակերպություններն իրենց զործնական աշխատանքի ընթացքում պետք ե հաշվի առնեն 1931 թվի դասերը ե 1932 թվականին թույլ չտան ե վոչ մի տոկոս ծխախոտի փչացում:

Կատարել ընկեր Ստալինի պատմական վեց պայմանները, ճիշտ կազմակերպել աշխատանքն ե ճիշտ դասավորել ույթերը, կազմել ծխախոտերի տուենկի ու բերքահավաքման ժամկետերի պլաններ, վերջիններս հասցնել մինչև յուրաքանչյուր կուտակուտային բրիգադ, յուրաքանչյուր կուտակուտական ե խորհրդային բանվորի, լայնորեն, մասսայական մանջտարով ծավալել սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը, բոլոր աշխատանքներն անցկացնել գործավարձի, կուտակուտություններում ու խորհրդայինություններում վերջնականապես վերացնել դիմադրկությունն ու հավասարանքը, — հաս այսպիսով ե միայն այսպիսով ձեռք կբերվի այն պայքարի հաջողությունը, վոր մենք մղում ենք 1932 թվականի ծխախոտատուների պլանը կատարելու համար:

Թեև աշխարհագրական տեսակետից ծխախոտագործությամբ պիտի ընդգրկվեն մեք յերկրամասի 31 ուսյունները, այնուամենայնիվ, ծխախոտատուների պլանների կատարման հարցերը պիտի լուծեն 13 ուսյուններ, վորոնց վրա յե ընկնում գյուղացիական սեկտորի (կուտակուտականներ ե անհատականներ) պլանի 85 տոկոսը:

Այդ ուսյունների թվին են պատկանում Սեվերյան, Աբրինյան ե Գարյաչի-Կլյուչի ուսյունները, վորոնց վրա ընկնում ե ամբողջ յերկրամասի պլանի 30 տոկոսը: Ծխախոտատուների պլանի 42 տոկոսը պետք ե կատարեն Ֆեացած զուտ ծխախոտագործական ուսյունները— Հունական, Մայկուպի, Ապշերոնյան, Բելարեչենի, Սոչու, Հայկական ե Ադիգեյան: Յերկրամասի պլանի 13 տոկոսը պիտի կատարեն Կրասնոդարի, Սլավյանյան ե Լաբինյան ուսյունները:

Հիշյալ 13 ծխախոտագործական ուսյուններից ամեն մեկի վրա ծխախոտատուների յերկրային պլանի ստուպիլ թվերը ընկնում են 98 եջի ցուցակում տրված չափով:

Ստալինյան վեց պայմանների հիմունքով պլանների կատարման համար պայքարելու, աշխատանքը ճիշտ կազմակերպելու հետ մեկտեղ, այս ուսյունները պետք ե ստույնով ե ուսցիոնարիկատորական լայն միջոցառումների կիրա-

Սեվերյան	6,500	հեկտար
Աբրինյան	5,400	»
Գար. կլյուչի	4,000	»
Սոչու	4,000	»
Բելորեչենի	2,800	»
Հունական	2,650	»
Մայկոպի	2,000	»
Ադիգեյա	2,000	»
Ապշերոնյան	1,150	»
Հայկական	1,016	»
Լարինյան	2,400	»
Կրասնոդարի	1,600	»
Սլավյանյան	1,200	»

Գրանցված
 ծխախոտազործական
 լիցենզիաներ

Հիմնական
 ծխախոտազ.
 ուսյուններ

ուղևոր ծխախոտը տնկելու և հետագա մշակման ժամանակ—
 պետք է գործադրեն հողափոր մեքենաներ, 1931 թվի փոր-
 ձով, և մասնավորապես ընկ. Պրիկոլտոնի հողափոր
 մեքենան: Պետք է նաև ձիու կուլտիվատորներ գործադրել
 շարքամիջյան տարածությունները քաղհանելու համար,
 ինչպես և 1-ին ու 2-րդ քաղհանի ժամանակ:

Խորհանտեսությունները 1932 թվականին պիտի ա-
 պահովեն ծխախոտագործական աշխատանքների—տունկի,
 բերքահավաքի և հետագա մշակման մեքենայացումը, վորը
 պիտի կատարվի այն հաշվով, վոր 1933 թվականին լիակատար
 չափով մեքենայացված լինի նաև կոլտնտեսային սեկտորի
 ծխախոտագործությունը:


Առանձնահատուկ խնդիրներ են դրված յերկրամասի
 ծխախոտագործական խորհանտեսությունների ՄՏԿ առաջ:
 ՄՏԿ-ները պետք է ամբողջովին պատասխանատվություն
 վերցնեն իրենց վրա կոլտնտեսությունների կողմից պլան-
 ները կատարվելու և կոլտնտեսություններին կազմակերպ-
 չորեն—արտադրականորեն սպասարկելու համար: Ծխախո-
 տագործության հետագա զարգացումն ու սոցիալիստական
 վերակառուցումը կընթանա բացառապես մեքենա-տրակտո-

րային կայանների գծով, իսկ այդ վերակառուցման գլխա-
 վոր վողնաշարը պետք է դառնան ծխախոտագործական խորհ-
 տնտեսությունները:

Անհրաժեշտ է նույնպես, գոյություն ունեցող կոլ-
 տնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրա-
 պնդման հիմունքով, 1932 թվականի դարնանն և աշնանը
 լիովին ավարտել ծխախոտագործական ուսյունների համա-
 տարած կոլեկտիվացումը:

Տեխնիկական նոր հիմունքով ծխախոտագործության
 սոցիալիստական վերակառուցումը պետք է գյուղատնտե-
 սության տեխնիկապես այս առավել յետամնաց մասնաճյու-
 ղը դարձնի Հյուսիսային Կովկասի ու Խորհրդային Միու-
 թյան գյուղատնտեսական արտադրության առաջավոր և
 բարձր-ապրանքային մասնաճյուղերից մեկը:

Բուլղերիկյան յերրորդ գարնան մարտական, հարվածա-
 յին անցկացումը մի վճռական քայլ է գեպի այդ նոր հաղ-
 թանակի նվաճումը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծխախոտագործությունը—Հ, -Կովկասի գյուղատնտեսու-
թյան կարևոր ճյուղ 3

Փառանգություն, վորից մենք հրաժարվեցինք 9

Կոլտնտշինարարության համար մղվող պայքարը յերկ-
րամասի ծխախոտագործական ուսյոններում 13

Ծխախոտագործական արդյունաբերության բանվոր
դասակարգը սոց. ծխախոտագործության համար
մղվող պայքարում 21

Սորհանտեսությունների և ՄՏԿ-ների դերը ծխախո-
տագործության սոց. վերակառուցման մեջ 23

Աշխատանքի կազմակերպման հարցերը ծխախոտագոր-
ծական խոշոր տնտեսության մեջ. 31

Ծխախոտագործության մեքենայացման և ուղիորդայ-
ման խնդիրներն և նրանց լուծումը 49

Ծխախոտի չորացումը 62

Կադրերի խնդիրն ու նրա լուծումը 72

Պայքար ծխախոտի բերքատվության և վորակի համար 75

Հնգամյակի յերրորդ, վճռական սարվա հանրագումար-
ները յերկրամասի ծխախոտագործության մեջ. 84

Հերթական խնդիրներ 95



Ответственный редактор
А. Г. Авакян
Технический редактор
Ф. Т. Чинигов

№ 2403
С-6

Сд. в набор 14 /IV—1932 г.
Сд. в печать 4/V—1932
Объем 3 1/2 печ. листа
Тираж 2000 экз.

«Ազգային գրադարան»

NL0200024

ԳԻՆԸ 40 ՀՈՊ.
цена 40 коп.

№ 18852

2007



На армянском языке

П. Кулаков

За социалистическую
реконструкцию табаководства

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՆԱԶՆԱԾ

ՌՈՍՏՈՎ-ՆԱ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՒԳՈՑԵՆՏՐ)